



ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՀԵՌՈՒՒ

ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐ
ՀԻՄՆԵԼՈՒ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ
Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ



Կանանց
Աջակցման
Կենտրոն



ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՀԵՌՈՒ

ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐ
ՀԻՄՆԵԼՈՒ ԵՎ ՂԵԿԱԿԱՐԵԼՈՒ

Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ



Կանանց
Աջակցման
Կենտրոն

Նախագծի համակարգում

WAVE համակարգող գրասենյակ/ Կանանց ապաստարանների ավստրիական ցանց,
Bacherplatz 10/4, A-1050, Վիեննա, Ավստրիա

Խմբագիրներ

Բիրջիթ Ապելթ (WAVE համակարգող գրասենյակ), Վերենա Կասելից (WAVE համակարգող գրասենյակ), Ռոպա Լոզար (Ընտանեկան բռնության միջամտության գրասենյակ, Վիեննա, Ավստրիա)

Նախագծի գործընկերներ

Պատրիսիա Լոպես (AMCV, Պորտուգալիա), Անժելա Ռոմանին (Casa delle Donne, Բոլոնյա, Իտալիա), Սիրկա Պերտու (Կանանց ազգային գիծ, Ֆինլանդիա)

Հրատակության վայր և տարի

Վիեննա, 2004թ

Ֆինանսավորումը`

Եվրոպական հանձնաժողովի 2003թ Դափնե ծրագրի, Ֆինլանդիայի սոցիալական հարցերի ու առողջապահության նախարարության, Ավստրիայի առողջապահության ու կանանց հարցերի դաշնային նախարարության, The Chief Executive Office, Vienna International Relations և Womens Affairs The Chief Executive Office, Vienna FrauenbՖro der Stadt Wien MA 57

Ձեռնարկի հայերեն խմբագրված տարբերակի տպագրության համար հավելյալ դրամական միջոցներ է տրամադրել ՄԱԿ-ի նպատակային հիմնադրամը

ՆԱԽԱԲԱՆ..... 7

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 9

1.1 ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ (ԻՆՉ Է, ԻՆՉ ՉԷ)..... 11

1.2 ԻՆՉՊԵՍ Է ԿԱԶՄՎԵԼ ՁԵՌՆԱՐԿԸ..... 11

1.3 ՁԵՌՆԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՀԱՆՐՈՒՅԹԸ..... 12

2. ՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ..... 14

2.1 ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ..... 14

2.2 ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ ԵՆ..... 15

2.3 ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ..... 16

2.4 ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ, ԿՐԿԵՎՈՂ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ..... 16

2.5 ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆՈՒՄ Է ՆԱԵՎ ՈՉ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՁԵՎԵՐ..... 17

2.6 ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏՐԱՎՄԱ ԵՎ ԵՍ-Ի ՈՉՆՉԱՑՈՒՄ..... 18

2.7 ԿՅԱՆՔԸ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ..... 18

2.8 ԱԳՐԵՍՈՐԻ ՀԵՏ ՆՈՒՅՆԱՑՈՒՄ՝ ՍՏՈԿՈՒՄՅԱՆ ՍԻՆԴՐՈՍ..... 19

2.9 ԲՈՆԱՐԱՐԻ և ԶՈՀԻ ՄԻՋԵՎ ՄՏԵՐԻՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 19

2.10 ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎՐԱ..... 20

2.11 ՀԶՈՐԱՑՈՒՄ..... 20

2.12 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ և ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ ԹՎԵՐՈՎ..... 21

2.13 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ..... 22

2.14 ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՇԱՃՈՒԹՅՈՒՆԸ - ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ..... 23

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ..... 26

3.1 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ..... 27

3.2 ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ..... 27

3.3 ՀԶՈՐԱՑՈՒՄ..... 27

3.4 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ..... 28

3.5 ՈՒՄ ՀԱՄԱՐ ԵՆ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԸ. ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ..... 29

3.6 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ..... 30

4. ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ..... 36

4.1 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ..... 36

4.2 ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ..... 36

4.3 ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔ..... 37

4.4 ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ..... 37

4.5 ՏԵՂԱՆՔ..... 38

4.6 ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ..... 38

4.7 ՍԵՆՑԱԿՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ..... 39

4.8 ՄԱՍՆԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅՈՒՆ..... 40

5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ..... 42

5.1 24-ԺԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 42

5.2 ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ..... 43

5.3 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ..... 43

5.4 ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 45

5.5 ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ՝ ԱՆԴՐԱԴԱՐՁԻ ՇՐՋԱՆ..... 46

5.6 ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԶՈՐԱՑՈՒՄ..... 46

5.7 ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ..... 47

6. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ..... 51

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ..... 51

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ..... 52

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐ..... 57

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ..... 58

ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ / ԱՐԳԵԼՔՆԵՐ..... 59

6.1 ՈՒՂԵՑՈՒՅՑ / ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ..... 62

7. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	64
7.1 ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ.....	64
7.2 ԻՆՉ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ.....	64
7.3 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.....	66
7.4 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ.....	67
7.5 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....	71
7.6 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹԻՎԸ.....	72
7.7 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ.....	73
7.8 ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՇԽՈՒՄ.....	74
7.9 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ.....	74
7.10 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏԱԳԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ.....	75
7.11 ՎԵՐԱՀՍԿՈՒՄ.....	76
7.12 ԿԱՄԱՎՈՐՆԵՐ ԿԱՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆՏՆԵՐ.....	78
8. ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	82
8.1 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....	83
8.2 ՀԱՍՑԵՆԵՐԻ ԳԱՐՏՆԻՈՒԹՅՈՒՆ, ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ.....	84
8.3 ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ.....	84
8.4 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ ՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	85
8.5 ՀՐԴԵՀԻ ԿԱՆԳԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ.....	86
9. ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՆ ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ	88
9.1 ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	88
9.2 ԱՐԴԱՐ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ.....	89
9.3 ԽՈՉԸՆԴՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ.....	90
9.4 ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՎԵԼՅԱԼ ՀԱՐՑԵՐ.....	91
9.5 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻՆ.....	93
10. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ	96
10.1 ԽՈՉԸՆԴՈՒՄՆԵՐ, ԻՆՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՔ ԶԷ ՏԱԼ.....	98
10.2 ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ.....	99
11. ՑԱՆՑԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	102
11.1 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԴԵՐԸ ՑԱՆՑԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....	102
12. ՀԱՎԵԼՅԱԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ	106
12.1 ՇՈՒՐՋՕՐՑԱ ԹԵԺ ԳԾԵՐ.....	106
12.2 ՈՉ ԱՊԱՍՏԱՐԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	106
12.3 ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱ.....	106
12.4 ԲՈՆԱՐԱՐ ՀԱՅՐԵՐԻ ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՅՅԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԵՐԺՈՒՄ.....	107
12.5 ՄԻԳՐԱՆՏ ԵՎ/ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆԱՅՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ.....	107
12.6 ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱՅԻ ՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՆՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՆԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	108
12.7 ԱՇԽԱՏԱՆՔ ԲՈՆԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ.....	108
13. ԿԱՆԱՆՑ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ ԱՊՐԱԾ ԿԱՆԱՆՑ ԿԱՐԾԻՔՆԵՐՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	109
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	112
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՎՏԱՆԳԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	122

ՆԱԽԱԲԱՆ***

Սույն ձեռնարկը մշակվել է ելնելով ընտանեկան բռնությունից պաշտպանող ապաստարան հիմնելու ու ղեկավարելու համապարփակ չափորոշիչներ սահմանելու կարիքից: Այն հիմնված է միջազգային ընդունված փորձի վրա: Նման ձեռնարկ ունենալը հատկապես կարևոր է Հայաստանի նման երկրներում, որտեղ նախկինում չեն եղել ընտանեկան բռնությունից պաշտպանվելու ապաստարաններ, իսկ լավագույն փորձը ստանդարտացված չէ: «Բռնությունից հեռու» ձեռնարկն առաջին հերթին անդրադառնում է գործնական խնդիրներին, որոնց բախվում են ապաստարան հիմնող, կազմակերպող, ղեկավարող ու աշխատեցնող կանայք, թեև սույն հրապարակումը պարունակում է նաև կանանց նկատմամբ բռնության տեսության հակիրճ անդրադարձ:

Այս ձեռնարկում տեղ գտած նյութը կազմվել է 8 երկրներից հավաքված փորձագետների խմբի կողմից: Հայաստանում գործող Կանանց աջակցման կենտրոնը Կանայք ընդդեմ բռնության Եվրոպայի (WAVE) թուլտվությամբ օգտագործել է համանուն ձեռնարկի բուն նյութը, համապատասխանեցրել այն հայաստանյան իրականության հետ դուրս թողնելով այն բաժինները, որոնք կապված չեն հայաստանյան իրականության կամ փորձի հետ: Քանի որ WAVE-ը Եվրոպական կազմակերպություն է, ներկայացված օրինակները վերցված են այդ տարածաշրջանից, մինչդեռ նույնատիպ օրինակներ կան նաև ԱՄՆ-ում և այլ վայրերում, քանի որ գենդերային բռնության երևույթը և առաջարկվող ծառայությունների մոտեցումները համընդհանուր են և հիմնված են տարիների ուսումնասիրությունների և բռնությունը վերապրածների հետ աշխատանքի փորձի վրա:

Խմբագրական կազմ

*** Սույն նյութի բովանդակության մեջ մանուշակագույնով մգեցված հատվածները՝ Կանանց աջակցման կենտրոնի լրացումներն են, և հանդիսանում են WAVE-ի օրիգինալ փաստաթղթի հավելում:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կանանց և երեխաների նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների ոտնահարում է: Հիրավի, այն ամբողջ աշխարհում մարդու իրավունքների խախտման ամենատարածված ձևերից է: Կանանց և երեխաների՝ ֆիզիկական վնասվածքներից և հոգեբանական տրավմաներից տուժելու հիմնական պատճառը ընտանեկան ոլորտում ընտանիքում և ինտիմ հարաբերություններում տեղի ունեցող բռնությունն է: Վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Եվրոպայում կանանց մեկ քառորդից մեկ երրորդը ենթարկվում է բռնության իր անմիջական սոցիալական միջավայրում գտնվող անձանց կողմից: Հավաքեա բացառություններով՝ մեղավորները տղամարդիկ են՝ կողակիցները, ամուսինները, հայրերը կամ եղբայրները: **Հայաստանում այս ցուցանիշները շատ ավելի բարձր են. ըստ Քննչական կոմիտեի տվյալների՝ սպանությունների մեկ վեցերորդը ընտանեկան բռնության հետևանք է, իսկ զոհերի մեծ մասը՝ կանայք:** Մեր հասարակությունում գերակշռող սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով ընտանիքի անդամի կողմից բռնության ենթարկված շատ կանայք և երեխաներ բռնությունից պաշտպանվելու, կյանքը փրկելու և պաշտպանություն ու ապահովություն գտնելու համար ստիպված են լինում լքել տունը: Նրանց մեծ մասը ընդունվում է կանանց ապաստարաններ: Ապաստարանները կանանց և երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարի գլխավոր ինստիտուտներն են: 1970-ականներից ի վեր, երբ ստեղծվել են առաջին ապաստարանները, դրանք կարևոր գործոն են եղել սոցիալական վարձագման մեջ՝ ոչ միայն կանանց և երեխաներին ապահով միջավայր տրամադրելով, այլ նաև խթանելով կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքները և հնարավորությունները և ամրապնդելով ֆիզիկական, հույզական ու հոգեկան անձեռնմխելիության հիմնարար իրավունքները:

Եվրոպայում տղամարդկանց կողմից կանանց և երեխաների նկատմամբ բռնության խնդիրը՝ որպես թաբու թեմա, անտեսված է եղել մինչև 1970-ականների սկիզբը, իսկ Արևելյան Եվրոպայում՝ մինչև 1990-ականների սկիզբը: Կանանց առաջին ապաստարանը ստեղծվել է 1972-ին Լոնդոնում: Բրիտանական կղզիներում կազմավորվել են այլ ապաստարաններ մինչև շարժման տարածումը դեպի Արևմտյան, Կենտրոնական և Հյուսիսային Եվրոպա, այնուհետև՝ Հարավային Եվրոպա, իսկ Երկաթե Վարագույրի ընկնելուց հետո՝ հարավ-արևելյան Եվրոպայի երկրներ: Ներկայում Եվրոպայում կա կանանց շուրջ 1500 ապաստարան, իսկ Հայաստանում՝ չափսերով փոքր 2 ապաստարան:

Բայց Եվրոպայի շատ երկրներում, մասնավորապես՝ Հարավային և Արևելյան Եվրոպայում, դեռևս կա բռնության ենթարկված կանանց և իրենց երեխաների անվտանգությունն ապահովող ապաստարանների լուրջ պակաս: Կանայք, ովքեր որոշում են ստեղծել կանանց ապաստարան իրենց բնակավայրերում, հաճախ բախվում են անհաղթահարելի խոչընդոտների՝ ֆինանսական աջակցության պակասին կամ կենտրոնական կամ տեղական իշխանությունների կողմից քաղաքական կամ քի բացակայությանը: Երբ ֆինանսները պարբերաբար դառնում են հասանելի, այս կանայք փորձում են հնարավորինս երկար ժամանակ աշխատեցնել իրենց ապաստարանները:

Ընտանեկան բռնության զոհերի համար միայն ապրելու (չպաշտպանվող) պայմաններ ապահովելը բավական չէ կարևորագույն գործոններից մեկը, որն ունենում են ապաստարանները բռնության ենթարկված կանանց կյանքում, քաջալերումն է նրանք

խրախուսում են կանանց իրենց կյանքի պատասխանատվությունը իրենց ձեռքը վերցնել, ինչպես նաև խթանում են կանանց ինքնավստահությունը: Ապաստարանում ապրող կանայք և իրենց երեխաները պետք է վերջապես կրկին ձեռք բերեն ապահովության մեջ ապրելու պայմանները:

Կանայք ընդդեմ բռնության Եվրոպա (WAVE) կազմակերպությունների ցանցը Եվրոպայում կանանց աջակցման կազմակերպությունների ցանց է, որը պայքարում է կանանց նկատմամբ տղամարդկանց կողմից բռնության դեմ: Եվրահանձնաժողովի «Դափնե» ծրագրի աջակցությամբ, WAVE գրասենյակը մինչ օրս կազմել է Եվրոպական գրեթե բոլոր երկրներում բռնության կանխարգելման մասին տեղեկություններ պարունակող տվյալների լայն շտեմարան և ցուցակագրել 2000-ից ավելի կազմակերպություններ: 2000 թվականին WAVE-ը նախագծել է ամբողջ Եվրոպայում կիրառելի վերապատրաստման ծրագիր՝ նախատեսված բռնության զոհերի հետ աշխատող մասնագետների համար:

Ներկայացված ձեռնարկը, որի կազմումը նույնպես ֆինանսավորված է Եվրահանձնաժողովի «Դափնե» ծրագրի կողմից, նախատեսված է Եվրոպական չափորոշիչները ձևակերպելու ու դրանք հետագայում կիրառելու գործընթացին նպաստելու համար:

Ձեռնարկը սահմանում է ընտանեկան բռնության զոհերին պրոֆեսիոնալ աջակցություն տրամադրելու ցուցումներ և մեթոդներ:

1.1 ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ (ԻՆՉ Է, ԻՆՉ ՉԷ)

Քանի որ շատ երկրներ ընտանեկան բռնության դեմ պայքարի տարբեր մակարդակներում են, օգտակար է տեղեկություն տալ, թե ինչ բան է ապաստարանը և ինչ կարող է այն անել, և ինչ ՉԷ ապաստարանը: Երբ առերեսվում եք այս տեղեկատվությունը ներկայացնելու սահմանափակ շրջանակ ունենալու խնդրին, հիմնվեք աշխատակազմի և կամավորների փորձի վրա, որպեսզի սահմանեք հնարավոր այցելուների, այլ ծառայություն մատուցողների և հնարավոր դոնորների համար անցյալում պարզ չեղած կետերը, ինչպիսիք են՝ ընդունելության տարածաշրջանային սահմանափակումները, մնալու առավելագույն տևողությունը և «ապաստարանները ընտանիքներ են քանդում» տեսակի առասպելները:

Վերջին տարիներին ԵՄ նոր անդամակցած երկրներում կան կանանց առնվազն մի քանի ապաստարաններ, իսկ աջակցության կենտրոնների քանակը և մասշտաբը մեծացել է: Վրաստանի և Ուկրաինայի նման երկրներում իրավիճակը մնում է բարդ: Տնտեսական ճգնաժամը և քաղաքական անկայունությունը նպաստել են ոչ միայն ընտանեկան բռնության մակարդակի բարձրացմանը, այլև կանանց նկատմամբ այլ տեսակի բռնությունների ի հայտ գալուն: Չնայած խոչընդոտներին՝ կանայք շատ երկրներում նաև Արևելյան Եվրոպայում, ձեռնամուխ են լինում կանանց աջակցության կենտրոններ բացելու առաջադրանքին: Օրինակ՝ Ռուսաստանում (ինչը վերաբերում է նաև այլ երկրների) կանանց կազմակերպություններին հաջողվել է բացել կանանց 50-ից ավելի ճգնաժամային կենտրոնների ցանց ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում (Ոչ Բռնությանը Ասոցիացիա՝ ANNA): Հետևյալ ուղեցույցի նպատակը այս տեսակի բոլոր նախաձեռնություններին օգնելն է:

1.2 ԻՆՉՊԵՍ Է ԿԱԶՄՎԵԼ ՁԵՌՆԱՐԿԸ

Այս ձեռնարկում սահմանված են 25-ից ավելի տարվա (և Հայաստանում ընտանեկան բռնությունից պաշտպանվելու ապաստարան աշխատացնելու 6 տարվա) փորձի վրա հիմնված գործառնական չափորոշիչներ: Անհրաժեշտ է, որպեսզի որակական չափորոշիչները հիմնված լինեն հստակ հիմնարար արժեքների վրա (տես Գլուխ 3): Այս ոլորտում ծառայության բազմաթիվ տարիների փորձ ունեցող ութ երկրների փորձագետները և ապաստարանների աշխատակիցները ի մի են բերել իրենց կիրառական և տեսական գիտելիքները՝ այս ուղեցույցում նշված հետևողական, կիրառական ուղղվածություն ունեցող մոտեցումները կազմելու նպատակով: Ապաստարան հիմնադրելը ենթադրում է գտնել պատասխաններ բավարարիչ հարցերի, ինչպիսիք են՝ անվտանգության ինչ միջոցներ պետք է կիրառվեն, խորհրդատվություն տրամադրելու կամ երեխաների համար խաղահրապարակի համար ինչ պայմաններ են հարկավոր, ինչպե՞ս հանրայնացնել կանանց ապաստարանի առկայությունը, ե՞րբ պետք է դրա հասցեն մնա գաղտնի:

Բացի վերը նշված հարցերին պատասխաններ առաջարկելուց և կանանց ապաստարան հիմնելու հետ կապված պրակտիկ հարցերին անդրադառնալուց՝ նախագիծն իրականացնող կազմակերպությունը՝ *Կանայք ընդդեմ բռնության* (WAVE) ցանցը և նախագծի գործընկերները (Ֆինլանդիայից, Իտալիայից, Պորտուգալիայից, Ավստրալիայից, Հունաստանից, Հունգարիայից և Ռումինիայից) իրենք սահմանում են ապաստարանների որակի չափորոշիչներ:

1.3 ՁԵՌՆԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՀԱՆՐՈՒՅԹԸ

Այս ձեռնարկի առաջնային նպատակը ապաստարան հիմնողներին գործնական օժանդակություն ցուցաբերելն է: Հաշվի առնելով Եվրոպական երկրների միջև մեծապես տարբերվող չափորոշիչները՝ ապաստարան ստեղծելու և աշխատեցնելու վերաբերյալ ընդհանուր ձեռնարկի հրապարակումը փորձ է օժանդակելու կատարելագործել չափորոշիչներն այնտեղ, որտեղ դրանք հույժ ուշադրության կարիք ունեն, և նախաձեռնելու չափորոշիչների ներդաշնակեցում՝ որպես դրանց կատարելագործման գործընթաց: Ձեռնարկի առաջնային թիրախային հանրույթը կին փորձագետներն են, ովքեր պլանավորում են ստեղծել ապաստարան, կամ ովքեր աշխատում են ապաստարանում:

Այնուամենայնիվ, ընտանեկան բռնության պոտենցիալ ծառայություն մատուցելու խնդիրը չի կարող բարդվել միայն կանանց կապակերպությունների վրա: Ապաստարանները և տղամարդկանց կողմից կատարվող բռնության դեմ աշխատող կանանց կապակերպությունները տարիներ շարունակ կոչ են արել, որպեսզի ապաստարանները համարժեք պետական ֆինանսավորում ստանան: Այսպիսով, ձեռնարկի մեկ այլ կարևոր թիրախ քաղաքական գործիչներն են, պետական վարչական մարմինները, պետական ֆինանսավորող մարմինները և/կամ մասնավոր հովանավորները: Եվ վերջապես, ձեռնարկի նպատակը մասնագիտական խմբերի ներկայացուցիչներին, լրագրողներին և հանրության անդամներին հասարակության մեջ կանանց ապաստարանների դերի մասին լրացուցիչ տեղեկություններ տրամադրելն է:



ՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

2. ՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կանանց ապաստարանների աշխատանքի հիմքը կանանց նկատմամբ ընտանեկան բռնության պատճառները, դրա ձևերը և պոհերի վրա դրա ունեցած ազդեցության ըմբռնումն է: Կանանց նկատմամբ բռնությունը պետք է դիտարկվի և վերլուծվի գենդերային հարաբերությունների պատմական, քաղաքական և սոցիալական համատեքստում: Փորձը՝ դիտարկել կանանց նկատմամբ բռնությունը որպես անհատական խնդիր կամ դիսֆունկցիոնալ փոխհարաբերության հարց, անխուսափելիորեն խզում է կապն իրականության հետ և հետևաբար գրեթե ոչնչի չի հանգեցնում որևէ բան փոխելու իմաստով: Միջազգային կառույցները շարունակաբար պնդում են այս տեսակետը տարբեր փաստաթղթերում ու հանձնարարականներում և բացահայտորեն դատապարտում են կանանց նկատմամբ բռնությունը որպես մարդու իրավունքների խախտում:

2.1 ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

«Կանանց նկատմամբ բռնությունը կանանց և տղամարդկանց միջև պատմականորեն անհավասար ուժային հարաբերությունների դրսևորում է, որը հանգեցրել է տղամարդկանց կողմից կանանց ստորադասման և նրանց նկատմամբ խտրականության և կանանց լիարժեք առաջխաղացման կանխարգելման (ՄԱԿ 1996, 75)»:

Պատմական համատեքստում գործընթացը, որի շնորհիվ ձևավորվել է ժամանակակից պետությունը, ընտանիքում տիրապետողի դերը հանձնել է տղամարդուն (Սաուեր 2002): Այնուհետև տղամարդու գերակայությունը կնոջ նկատմամբ հաստատվել է օրենքների, սոցիալական նորմերի և կառույցների մեջ: **Չնայած այն փաստին, որ հայ կանայք դեռևս 1920-ականներին ձեռք են բերել ընտրություններին մասնակցելու իրավունք և շատերը վբաղեցրել են հասարակության մեջ կարևոր դերեր, այնուամենայնիվ նրանք միշտ ստորադասվել են իրենց հայրերին կամ ամուսիններին և չեն ունեցել իրենց կյանքին վերաբերվող որոշումներ կայացնելու հնարավորություն:**

Նույնիսկ Եվրոպայում շատ հայրիշխանական կառույցներ են պահպանվել մինչև 20-րդ դար: Որոշ երկրներում կանայք չունեին ընտրությունների մասնակցելու իրավունք մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը: Շատ երկրներում մինչև 1970 թվականը ամուսնության մասին օրենքները, որոնց կանայք ստիպված են եղել ենթարկվել, շարունակել են որպես ընտանիքի գլուխ սահմանել տղամարդուն: Եվրոպայի բոլոր երկրներում չէ, որ ամուսնական բռնաբարությունը պատժելի արարք է համարվում: Կանանց երկրորդ շարժումն է, որ 70-ականների սկզբներին (կրկին) բարձրացրել է կանանց նկատմամբ կառուցվածքային և միջանձնային բռնության հարցը որպես սոցիալական խնդիր: Կանայք շարունակաբար ենթարկվում էին բռնության իրենց ամուսինների կամ կողակիցների կողմից: Շատ կանանց համար պարզ էր դառնում, որ պետությունը և դատական իշխանությունները քիչ են հետաքրքրվածված այս բռնության դեմ պայքարի հարցում:

Շատ դեպքերում ամուսինների կամ կողակիցների կողմից կատարված բռնությունը մնացել է անպատիժ, նույնիսկ երբ կանայք համարձակվել են հայտնել իրենց հետ կատարվածի մասին և մեղադրանք ներկայացրել բռնարարների նկատմամբ: Պետությունը անցյալում

և որոշ չափով նաև ներկայում քիչ ջանք է գործադրում ընտանեկան բռնությունը քրեորեն հետապնդելու համար: Երբ հարցը վերաբերվում էր ընտանեկան բռնությանը, իշխանությունները հակված էին իրենց բացառիկ լիապորություններից հրաժարվել և «ուժի իրավունքը» տղամարդուն հանձնել, եթե ոչ օրինականորեն, ապա՝ գործնականորեն: Շատ ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասարությունը ամրագրված է օրենքով, հատկապես ԵՄ հակախտրական քաղաքականության շնորհիվ: Այնուամենայնիվ, գործնականում դեռ առկա են խտրականության և անհավասարության շատ դեպքեր: Սա գործոն է հանդիսանում այն խոչընդոտների հարցում, որոնք հարկադրում են բռնարար հարաբերություններում ապրող կանանց շարունակել ապրել նման պայմաններում և չկարողանալ ապաստություն ձեռք բերել: Հետևաբար կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարը կարող է արդյունավետ լինել և բռնության մակարդակը իջեցնել, միայն եթե կառուցվածքային անհավասարության խնդիրը լուծվի:

Շատ նախապաշարմունքներ և կանխատրամադրվածություններ շարունակում են գոյատևել և խոչընդոտ հանդիսանալ, որպեսզի բռնության պոհ դարձած կանայք ստանան իրենց անհրաժեշտ աջակցություն: Զոհերին մեղադրելը՝ բռնության մեղքը պոհերին վերագրելու միտումը, դեռևս ամբողջությամբ չի վերացել: Եվ կանայք շարունակում են բախվել ոստիկանական և դատական համակարգերի նախապաշարմունքներին, ինչը վերջին հաշվով լինում է հօգուտ բռնարարների և ի վնաս պոհերի: Նախապաշարմունքը և պոհերին մեղադրելը հասարակության մեջ կանանց նկատմամբ բռնության հարատևման առանցքային գործոններից են, որովհետև դրանք տղամարդկանց տալիս են վգացողություն, որ իրենց պահվածքը ներելի է:

2.2 ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՒՆԱՐԱՐՔՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ ԵՆ

Միջազգայնորեն առաջին անգամ կանանց նկատմամբ բռնությունը ճանաչվել է որպես ո՛չ «անձնական», ո՛չ էլ՝ «ազգային» խնդիր ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համաժողովի ժամանակ Վիեննայում: Ամբողջ աշխարհից կանանց կազմակերպություններ նախապատրաստել էին դրա հիմքը՝ կազմակերպելով կես միլիոն մարդու ստորագրահավաք (Bunch/Reilly 1994): Ըստ համաժողովի վերջնական փաստաթղթի՝ Վիեննայի հռչակագրի, կանանց նկատմամբ բռնարարքները մարդու իրավունքների խախտում են, նույնիսկ երբ դրանք կատարվում են այսպես կոչված՝ անձնական ոլորտում (Միավորված ազգերի կազմակերպություն, 1993ա):

Վիեննայի հռչակագրում նշված է՝ «Կանանց և աղջիկ երեխաների իրավունքները մարդու համընդհանուր իրավունքների անօտարելի, ամբողջական և անբաժանելի մաս են [.....]: Գենդերային հիմքով բռնությունը, սեռական ոտնձգությունների և շահագործման բոլոր ձևերը, այդ թվում՝ այնպիսիք, որոնք սկիզբ են առնում մշակութային նախապաշարմունքներից և միջազգային թրաֆիկինգից, անհամատեղելի են մարդ անհատի արժեքի և արժանապատվության հետ և պետք է վերացվեն (Միավորված ազգերի կազմակերպություն, 1993ա, 18):

Սրանով պետության վրա է դրվում է բռնությունը վերացնելու և կին բնակիչների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու պատասխանատվությունը:

Սրանով պետության վրա է դրվում է բռնությունը վերացնելու և կին բնակիչների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու պատասխանատվությունը: Կանանց նկատմամբ կառուցվածքային և անձնական բռնությանը դիմակայելու առանցքային փաստաթուղթ է Միավորված ազգերի կազմակերպության Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիան (CEDAW): Ի տարբերություն հռչակագրերի և բանաձևերի՝ այս կոնվենցիան պարտադիր է այն ստորագրած և վավերացրած բոլոր երկրներում: Մինչև 2004-ի ապրիլը 177 երկիր, այդ թվում՝ Հայաստանը վավերացրել են փաստաթուղթը և ստանձնել դրա իրագործումը Միավորված ազգերի կազմակերպության առջև:

CEDAW հանձնաժողովի 12-րդ և 19-րդ համընդհանուր հանձնարարականները անդամ երկրներին կոչ են անում, ընտանեկան բռնության, բռնաբարության, սեռական ոտնձգությունների և գենդերային հիմքով այլ տեսակի բռնությունների կոհերին ապահովել պատշաճ պաշտպանության և աջակցության ծառայություններով: «Հետևաբար Հայաստանի կառավարությունը այս ծառայությունները տրամադրելու միջազգային պարտավորություն ունի:



2.3 ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՐՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ

Կանանց նկատմամբ բռնությունը ճանաչված է որպես գլոբալ համաճարակի չափանիշի հասած լուրջ սոցիալական խնդիր: Ընտանեկան բռնության դեպքերի 90%-ից ավելին տղամարդու կողմից կնոջ նկատմամբ կատարված հանցանքներ են: Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) գնահատումների՝ աշխարհի որոշ երկրների կանանց շուրջ կեսը ենթարկվել է ֆիզիկական բռնության կողակցի կամ ընտանիքի անդամի կողմից (UNICEF, 2001): Համաշխարհային հետապոտությունների տվյալների վերլուծությունները ցույց են տալիս, որ կանանց նկատմամբ բռնությունը հիմնականում կատարվում է ընտանիքի ներսում:

Ըստ ԵԱՀԿ (Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն) 2011թ կատարած հետապոտության, հարցմանը մասնակցածների 60%-ը, տազնապալի մի ցուցանիշ, ենթարկվել է ընտանեկան բռնության իր կյանքի ընթացքում, և շուրջ 40%-ը՝ հարցմանը նախորդած 2 տարիների ընթացքում: 2010-2016 թվականներին ընտանեկան բռնության արդյունքում սպանության 40 հայտնի դեպք է հաղորդվել, և մոտավորապես 58 երեխա առանց մայր է մնացել: Այս տվյալները չեն ներառում հավելյալ այն դեպքերը, որոնք անհայտ են մնացել: Երկու միլիոնանոց փոքր բնակչության համար այս ցուցանիշը տազնապալիորեն բաձր է:



2.4 ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՐՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ, ԿՐԿՆՎՈՂ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային գրականությունը առատ է փաստարկներով, թե ինչպես են սոցիալական և մշակութային գործոններն ազդում կանանց՝ արտաքին օգնություն փնտրելու և/կամ իրենց բռնի ամուսիններից հեռանալու որոշում կայացնելու վրա (Mahoney, 1994, 60, McWilliams/McKiernan, 1993, 50-55, Dobash/Dobash, 1998, Kirkwood, 1993, Chatzifotiou, 2004): Կանանց նկատմամբ բռնությունը տարածվում է մեծ թվով անձանց/կոհերի վրա, ովքեր

բռնությունից հետո կյանքը շարունակում են անձնական, ֆիզիկական, հոգեբանական, մտավոր, ընտանեկան, սոցիալական և ֆինանսական բարձր գնով (Stanko/Crisp/Hale/Lucraft 1997):

Ըստ հայրիշխանական հասարակությունների ավանդական արժեքների՝ կին և մայր լինելը կնոջամենակարևոր դերերն են: Ավելին, մահմեդական և արաբական հասարակություններում նաև այնպես է, որ կանայք կատարում են իրենց դերը լիարժեքորեն, միայն երբ ամուսնանում են (Boabaid, 2002):

Այդպիսի կարծիքներ հնչում են նաև Հայաստանում պետական պաշտոնյաների և ռուսաստանյան աջակցություն և ֆինանսավորում ունեցող պահպանողական խմբերի կողմից <http://epress.am/en/2016/12/24/adoption-of-domestic-violence-law-in-armenia-opposed-by-pro-russian-groups-report.html>:

Զարմանալի չէ, որ հասարակությունը ընտանեկան ներդաշնակության պատասխանատվությունը դնում է կանանց վրա, հետևաբար՝ նրանց վերագրելով ամուսնության ձախողումը: Այստեղից հետևում է, որ հարաբերություններին «նվիրվածությունը» լուռ մնալու, բռնությունից տառապելու և երկար ժամանակ օգնություն չփնտրելու որոշման մեջ լուրջ գործոն է (Strube/Barbour 1983, 786): Այդպիսով, խորապես ամրապնդված գաղափարները, որ ամուսնությունները պետք է գրեթե ամեն գնով պահպանվեն հանուն ընտանիքի, և որ կինն է կրում ամուսնալուծվածի կարգավիճակի խարանք, կուգորդվում են նրա՝ ամուսնալուծության մեղավորը լինելու գաղափարի հետ: Այս բոլոր նախատրամադրվածությունները ամրապնդվում են ընկերների, բարեկամների և սոցիալական կառույցների ներկայացուցիչների կողմից, և սրանք հանդիսանում են կնոջ կողմից արտաքին օգնություն փնտրելու և բռնի հարաբերություններից դուրս գալու կարևոր կանխարգելիչ գործոններ:

Եթե կանայք և նրանց երեխաները պետք է ստանան պատշաճ և արդյունավետ աջակցություն, պարտադիր է բռնի վարքագծի դինամիկայի և մեխանիզմների ըմբռնումը:

2.5 ԲՐՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆՈՒՄ Է ՆԱԵՎ ՈՉ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՁԵՎԵՐ

Բռնությունը ոչ միայն ֆիզիկական արտահայտում ունի: Բռնությունը ծառայում է կոհի վրա իշխանություն և վերահսկողություն կիրառելու, կոհի կամքը կոտրելու և ստորադասելու նպատակին: Ամերիկացի հոգեբան Ջուդիթ Հերմանը (Judith Herman 1992) համեմատում է կանանց նկատմամբ բռնության կրկնվող դրսևորումները խոշտանգումների ժամանակ կիրառվող մեթոդների հետ: Իրենց կողակիցների կողմից բռնության ենթարկված շատ կանայք հայտնում են, որ ենթարկվել են տարբեր տեսակի հոգեբանական բռնությունների, ինչպիսիք են՝ արտաքին աշխարհից մեկուսացումը, վերբալ բռնությունն ու վարկաբեկումը, սպառնալիքն ու ահաբեկումը կամ անօգուտ կամ նվաստացուցիչ գործողություններ կատարելու հարկադրանքը: Հնարավոր է, որ բռնարարը փոխարինի այս տեսակի բռնությունը ժամանակահատվածներով, երբ նա սիրալիր է, կնոջը ծաղիկներ է բերում կամ ընթրիքի հրավիրում: Նման վարքագիծը կարող է շփոթեցնել կնոջը և ստիպել մտածել, որ հնարավոր է՝ հույս կա, որ տղամարդը լավ կողմեր ունի և կարող է փոխվել: Իրականում տղամարդը պարզապես նենգափոխությունների միջոցով ստիպում է կնոջը մնալ իր հետ և չմտածել նրանից հեռանալու մասին: **Ընդհանրապես, բռնարար հարաբերությունների համատեքստում տղամարդու հավաղեպ պատահող սիրալիր վարքագիծը պետք է դիտարկվի որպես նրա բռնության ռազմավարական կողմ:**

2.6 ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏՐԱՎՄԱ ԵՎ ԵՍ-Ի ՈՉՆՉԱՑՈՒՄ

Բռնությունը տրավմատիկ փորձառություն է, որի թողած վերքերը բնավ չեն սահմանափակվում ֆիզիկական վնասվածքներով: Բռնարար վարքագծի նպատակը զոհի ինքնագնահատականը ոչնչացնելն ու նրա դիմադրությունը կոտրելն է: Բռնի վարքագծի հետևանքներից մեկը զոհի հետագա բռնությունից մշտապես վախենալով ապրելն է: Շատ դեպքերում այլևս պարտադիր չէ, որ բռնարարն իրականում բռնություն գործադրի, սպառնալիքները և անցյալում կատարված բռնության հիշողությունները բավական են, որ կինն անի այն, ինչ բռնարարը պահանջում է: Ջուդիթ Հերմանը տալիս է հետևյալ բացատրությունը «Չնայած բռնությունը ահաբեկելու տարածված մեթոդ է, բռնարարը կարող է այն գործադրել հապվադեպ, որպես՝ վերջին տարբերակ: Պարտադիր չէ հաճախ բռնություն գործադրել, որպեսզի զոհը մշտական վախի վիճակում մնա: Մահվան կամ լուրջ վնասվածք հասցնելու սպառնալիքն ավելի հաճախ է կիրառվում, քան փաստացի բռնությանը դիմելը: Ուրիշների նկատմամբ սպառնալիքները երբեմն նույնքան արդյունավետ են, որքան զոհին անմիջականորեն ուղղված սպառնալիքները: Օրինակ, շարունակաբար ծեծի ենթարկված կանայք հաճախ հայտնում են, որ բռնարարը սպառնացել է սպանել նրանց երեխաներին, ծնողներին կամ ապաստարանելու պատրաստ ընկերներին, եթե նրանք փորձեն փախչել» (Herman 1992, 77):

Շատ կանայք բռնությունից պաշտպանվելու որևէ հնարավորություն չունեն, ինչը կարող է նրանց վրա գործադրվել երկար տարիներ, նույնիսկ՝ բռնարարից բաժանվելուց հետո:



2.7 ԿՅԱՆՔԸ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Իմ ամուսինը չէր ուզում, որ ես միայնակ տնից դուրս գամ: Աշխատանքի գնալիս՝ նա բոլոր բանալիները իր հետ վերցնում էր, որպեսզի ես չկարողանամ դուռը փակել: Եթե ես դուրս էի գալիս, ես կամ չէի փակում դուռը, կամ չէի կարողանում ներս մտնել: Այնպես որ, ես ներսում փակված չէի, բայց չէի էլ կարողանում դուրս գալ» (Լաուրա, Վիեննայի կանանց ապաստարանի խորհրդատվական կենտրոնին տված վկայություն): «Մենք ապրում էինք Մեդրիում, իմ ամուսինը ինձ նույնիսկ թույլ չէր տալիս վաղը պատուհանից կախել, որ այլ տղամարդիկ ինձ վրա չնայեին: Ես նույնիսկ չէի կարող դուրս գալ, հաց գնել երեխաներիս համար: Ես բանտարկյալ էի» (Գոհար, Հայաստանում Կանանց Աջակցման կենտրոնին տված վկայություն):

Իրենց ամուսինների և կողակիցների կողմից բռնության ենթարկված կանայք հաճախ իրենց տներում բանտարկյալներ են դառնում: Բռնարարները վերահսկում են կանանց բոլոր շարժումները՝ թույլ չտալով նրանց վարել անկախ կյանք: Ինչպես ցույց է տալիս վերոնշյալ օրինակը, բանտի պատերը միշտ չէ, որ դրսից տեսանելի են: Հերմանը համոզիչ ու հակիրճ պնդում է «Քաղաքական կալանքը սովորաբար բոլորին հայտնի է լինում, մինչդեռ կանանց և երեխաների տնային կալանքը հաճախ անտեսանելի է: Տղամարդու տունը իր ամբողջ է, հապվադեպ է այդ նույն տունը կնոջ և երեխայի համար ընկալվում որպես բանտ: Ընտանեկան գերության մեջ փախուստի ֆիզիկական արգելքները քիչ են: Տների մեծ մասում, նույնիսկ ամենաճնշողներում, պատուհաններին ճաղեր չկան, փշալարապատ ցանկապատներ չկան: Կանայք և երեխաները սովորաբար շղթայված չեն, սակայն նույնիսկ դա պատահում է ավելի հաճախ, քան մարդիկ սպասում են: Փախուստի արգելքները անտեսանելի են: Այնուամենայնիվ դրանք չափազանց ուժեղ են: Երեխաներին որպես կանոն գերի է դարձնում

իրենց կախվածությունը: Կանանց գերի է դարձնում իրենց ֆինանսական, սոցիալական, հոգեբանական և իրավաբանական ստորադասումը, ինչպես նաև իրենց նկատմամբ գործադրվող ֆիզիկական ուժը» (Herman, 74):

2.8 ԱԳՐԵՍՈՐԻ ՀԵՏ ՆՈՒՅՆԱՑՈՒՄ՝ ԱՏՈԿՈՒՄՅԱՆ ՍԻՆԴՐՈՍ

Մշտապես բռնության ենթարկված լինելու ավրեցություններից մեկն այն է, որ զոհերը կարող են սկսել նույնանալ հարձակվողի հետ և գործել նրա կողմից՝ որպես գոյատևման ռազմավարություն: Ջոհի կամքի այսպիսի ստորադասումը ոչ թե ինքնակամ որոշում է, այլ բռնության ուղղակի արդյունք: Ագրեսորը կարող է ոչ միայն պահանջել, որ կինը ենթակա լինի, այլ նաև՝ որ սիրի նրան: Հերմանը մեկնաբանում է. «Բռնարարի առաջնային նպատակը փաստորեն զոհի ստրկացումն է, որին հասնելու համար զոհի կյանքի բոլոր ոլորտներում բռնատիրական հսկողություն է սահմանվում: Բայց պարզապես հնազանդ լինելը հապվադեպ է նրան բավարարում, նա փաստորեն իր մեղքերն արդարացնելու հոգեբանական կարիք ունի, և դրա համար հետևաբար նրան անհրաժեշտ է զոհի հաստատումը: Այսպես, նա իր զոհից անվերջ պահանջում է հարգանք, երախտագիտություն և նույնիսկ՝ սեր: Նրա վերջնական նպատակը կարծես թե պատրաստակամ զոհ ստեղծելն է» (Herman 1992, 75):

Ագրեսորի հետ նույնացումը՝ որպես արձագանք անհույս թվացող իրավիճակում թակարդված լինելուն, կոչվում է «ստոկհոլմյան սինդրոմ»: Այս երևույթը առաջին անգամ նկատվել է Շվեդիայի մայրաքաղաքում կողոպուտի և պատանդներ վերցնելու մի դեպքի ժամանակ, երբ պատանդները սկսել էին բանկ թալանողների հետ հարաբերություններ հաստատել, որի ժամանակ նրանց կապերը ավելի ու ավելի էին ուժեղանում: Երբ բանկ թալանողները ի վերջո վիջում էին ուժային պայքարում և կալանավորվում, նրանց նախկին պատանդներից որոշները նույնիսկ նրանց այցելում են բանտում: Յուրաքանչյուր անձ հակված է ստոկհոլմյան սինդրոմին, այսինքն՝ ագրեսորի հետ նույնացվելուն, եթե բավարարվում են հետևյալ 4 պայմանները՝ մարդու կյանքը վտանգված է, նա չի կարող փախչել (կամ կարծում է, թե չի կարող փախչել), մարդը կտրված է արտաքին աշխարհից, և ագրեսորը թեկուզ պարբերաբար սիրալիր է: Հոգեբաններ Գրեհեմը և Ռոուլինգսը (Graham and Rawlings, 1998) նշում են, որ այս պայմանները հաճախ առկա են ընտանեկան բռնության դեպքերում և որ զոհերը նույնպես կարող են ստոկհոլմյան սինդրոմի նշաններ ցույց տալ: Այդպիսի դեպքերում կինը կսարսափի բռնարարին սադրող կամ կատաղությունը հրահրող որևէ գործողություն կատարել: Նա կփորձի ձեռք բերել հարձակվողի հավանությունը և հանդես գալ որպես դաշնակից: Հնարավոր է, որ կինը հրաժարվի բացահայտել իր վնասվածքների իրական պատճառը կամ պնդի, որ ինքն իրեն է վնասել՝ այդպիսով փորձելով պաշտպանել տղամարդուն:

2.9 ԲՈՆԱՐԱՐԻ և ԶՈՒՎԻ ՄԻՋԵՎ ՄՏԵՐԻՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ջոհի և հանցագործի միջև առկա մտերիմ հարաբերությունները և կնոջ ֆինանսական ու սոցիալական կախվածությունը տղամարդուց բարդացնում են նրա ինքնապաշտպանությունը և բռնությունից ապաստվելը: Սեփական ընտանիքի անդամին մեղադրանք ներկայացնելը ենթադրում է հասարակության կողմից խարանված լինել: Ըմբռնելի պատճառներով կանանց համար խնդրահարույց է բռնության մասին բացեիբաց խոսելը և ոստիկանություն վանգահարելը: Ընտանեկան բռնության դեպքերի միջինը 25%-ն է արձանագրվում, մնացած 75%-ը մնում է չբացահայտված (European Womens Lobby, 2000):

Փորձը ցույց է տալիս, որ կանայք կարող են մինչև 30 անգամ բռնության ենթարկվել մինչև կղիմեն ոստիկանություն: Քանի որ **Հայաստանում զոհին ավելի են պոհավորում ընտանիքը քան դեղին մեջ մեղադրելով, ամուսնալուծության համար խարանում են, կինը գնալու տեղ և կենսապահովման հնարավորություն չունի, ինչպես նաև աջակցության կենտրոնները հասանելի չեն լինում կամ կանայք անցյալում օգնություն ստացած չեն լինում, շատ կանայք մնում են բռնարար հարաբերությունների մեջ և կյանքին սպառնացող իրավիճակներում միջին հաշվով դեռևս 10-15 տարի մինչև ապաստարան փնտրելը:**



2.10 ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՎՐԱ

Իրենց մայրերի նկատմամբ բռնությունը միշտ ապդում է երեխաների վրա, և շատ դեպքերում իրենք էլ են ենթարկվում բռնության հայրերի կամ խորթ հայրերի կողմից (Hester / Mullender, 2003):

Հետապոտությունները ցույց են տալիս, որ երեխաների 9%-ը բռնության ժամանակ գտնվում է կամ կողքի կամ նույն սենյակում: Նրանց մեկ երրորդը բռնության ականատեսն են լինում, փորձում են մորը պաշտպանել և կարող են իրենք էլ բռնության ենթարկվել (Asian Women and Domestic Violence, Information for Advisors, 1995, 2 / Women Against Rape, 1998, 2):

Միացյալ Նահանգներում կատարված մի հետապոտություն հաստատում է, որ կանանց նկատմամբ բռնության կիրառման 70% դեպքերի ժամանակ երեխաները նույնպես ենթարկվում են բռնության (տե՛ս Bowker/Arbitell/McFerron 1988): Սա վերաբերում է նաև Հայաստանին: Վախը, որ կնոջ կողմից արտաքին օգնություն փնտրելու գործողություններ կատարելու փորձերը ամեն ինչ ավելի կվատացնեն, դառնում է կարևոր պատճառ բռնության մասին չհայտնելու, բռնի հարաբերությունների մեջ մնալու և բռնությունից տանջվելու որոշման և օգնություն չփնտրելու համար: **Հայաստանում կանանց աջակցման կենտրոնում, մենք ավելի ու ավելի ենք հանդիպում երեխաների նկատմամբ սեռական բռնության այն ընտանիքներում, որտեղ ընտանեկան բռնություն գոյություն ունի:**

Հետևաբար, երեխաներին անհրաժեշտ է ապահով շրջապատ և աջակցություն, որը ապաստարանները տրամադրում են այն չափով, որ չափով նրանց մայրերը: Ընդհանուր առմամբ, ապաստարանների բնակիչների կեսից ավելին երեխաներ են: Հոր կողմից մոր նկատմամբ բռնի վարքագծի ականատես երեխաներն իրենք ավելի հակված են հետագայում բռնարար կամ զոհ դառնալու: Տղաներն ավելի հակված են բռնարար դառնալու, իսկ աղջիկները՝ բռնությունից տառապելու (Appelt/Höflriegl/Logar 2001): Երեխաներին բռնության փորձառությունը հաղթահարելու հետ կապված օգնություն և աջակցություն ցուցաբերելը :

2.11 ՀԶՈՐԱՑՈՒՄ

Բռնությունը թողնում է խորը սպիեր թե՛ մարմնի, թե՛ հոգու վրա, այն ոչնչացնում է անձի ինքնագնահատականը և անկախությունը: Այնուամենայնիվ, պետք չէ մոռանալ, որ բռնության ենթարկված կանայք և նրանց երեխաները իրենց փորձառության պարզապես պասիվ զոհեր չեն: Կանայք բռնությունը դադարեցնելու փորձերի և ինքնապաշտպանության բազում

ռազմավարություններ են մշակում, մինչդեռ երեխաները փորձում են իրենց մայրերին օգնել՝ ձգալով, ոստիկանություն վանգելով և իրենց հայրերի բռնությունը կանխելու փորձերով: Կանայք ուշադիր են հետևում են, թե երբ անխուսափելի կարող է լինել իրենց կողակցի բռնության պոռթկումը, այնուհետև հեռանում են անվտանգ վայր: Նրանք փորձում են հանգստացնել տղամարդուն, եթե նա ակնհայտ հարձակողական տրամադրությամբ է տուն գալիս, փորձում են պաշտպանել երեխաներին՝ ծեծի ենթարկվելու գնով: Սրանք բռնի կողակցի հետ ապրող կանանց հաճախ որդեգրած գոյատևման ռազմավարություններից քչերն են: Նրանք ձևավորում են տարբեր իրավիճակներ հաղթահարելու մեծ հմտություններ, և ոչ մի դեպքում չպետք է պարզապես զոհ համարվեն: Նաև կարևոր է տեսնել նրանց տարբեր ուժերը և գոյատևելու կամքը: Այդպիսի կանանց որպես թույլ և անկախ գործելուն անկարող կամ նույնիսկ պաթոլոգիապես անտրամալ դասակարգելու որևէ միտում ոչ միայն ոչնչով չի օգնում նրանց, այլև թուլացնում է նրանց դիրքը:

Ամեն կին ունի իրավունք վարել իր կյանքն այնպես, ինչպես հարմար է համարում և այդ հարցում անկախ որոշումներ կայացնել:

Վարչարարության և վերահսկողության ուժեղ հակում դրսևորող հիմնարկները նպատակահարմար չեն կանանց պորացման նպատակն առաջխաղացելու հարցում: Այս պատճառով է, որ բռնության ենթարկվող կանայք և նրանց երեխաները ունեն ապաստարանների կարիք, որոնց պլանավորումը և աշխատեցումը, ինչպես լուսաբանված է սույն ձեռնարկում, հատուկ ուղղված է նրանց կարիքները բավարարելու համար:

Եթե կանանց հասանելի է իրենց անհրաժեշտ օգնությունը և աջակցությունը, նրանց պետք է մոտենալ իրենց ուժերին, զգայունությանը, ապրումակցմանը և կարիքներին համապատասխան: Կանանց ապաստարանում աշխատանքի նպատակը այդպիսով կանանց ուժեղացնելն ու պորացնելն է այնպես, որ նրանք կարողանան անկախ, ինքնորոշված, բռնությունից վերջ կյանք վարել:

2.12 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ և ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՁԸ ԹՎԵՐՈՎ

Բոլոր երկրներում պետք է ապահովված լինի կանանց ապաստարանների բավարար քանակ: Ամեն տարածաշրջանում, այդ թվում՝ գյուղական, պետք է լինի կանանց և երեխաներին շուրջօրյա ընդունելու հնարավորությամբ առնվազն մեկ ապաստարան: Կանայք պետք է ի վիճակի լինեն այնտեղ հասնել արագորեն: Պետք է նաև առկա լինի կանանց և երեխաներին մոտակա ապաստարան տեղափոխող տրանսպորտ: Յուրաքանչյուր երկրում պետք է գործի ազգային անվճար հեռախոսահամար՝ որպես կապի առաջին միջոց: Ապաստարաններում շրջանային հեռախոսագծերը նույնպես պետք է շուրջօրյա աշխատեն՝ արտակարգ ընդունելությունները կապակերպելու համար:

Շատ ապաստարաններում գործում են բջջային հեռախոսակապով խորհրդատվության ծառայություններ և տրամադրվում են խորհրդատվական ծառայություններ ոչ տեղացիների համար: Սրանք նաև հույժ կարևոր ծառայություններ են բռնության զոհերի համար: Ինչպես հանրային առողջապահության ոլորտում, բռնության կանխման բնագավառում նույնպես անհրաժեշտ է բռնության ենթարկված կանանց և երեխաների աջակցման ծառայությունների լայն շրջանակ: Դրանց մեջ մտնում են՝ ապաստարանում ապահով կեցությունը, բջջային հեռախոսակապով խորհրդատվությունը, արտակարգ դեպքերի համար նախատեսված

թեժ գծերը, իրապեկման ծառայությունները գյուղական բնակավայրերում, միջամտության կենտրոնները և կեցության ծրագրեր: Շատ կարևոր է, որ կոհերը **ԸՆՏՐՈՒԹՅԱՆ** տարբերակներ ունենան:

Որքան էլ բռնության դեպքում օրենսդրական պաշտպանությունը կարևոր է, այն չպետք է դիտարկվի որպես կանանց ապաստարանների փոխարինող: Ավստրիայում, որտեղ բռնությունից պաշտպանությունը կա 1998թ-ից ի վեր, փորձը ցույց է տալիս, որ կանանց ապաստարանները շարունակում են անհրաժեշտություն լինել:

Ահա որոշ պատճառներ, թե ինչու են ապաստարանները շարունակում անհրաժեշտություն լինել, նույնիսկ երբ բռնության դեմ արդյունավետ օրենսդրական պաշտպանություն կա: Բռնության ոչ բոլոր կոհերն են ցանկանում դիմել ոստիկանությանը, դատական համակարգին և իրավական հայց ներկայացնել, որոշները նախընտրում են գնալ ապաստարան և որքան անհրաժեշտ է՝ այնտեղ մնալ: Բաժանման գործընթացում գտնվող և բռնության բարձր ռիսկի մեջ ապրող կանանց անհրաժեշտ է անվտանգ օթևան, քանի որ օրենքը չի կարող ապահովել լիարժեք պաշտպանություն բռնությունից:

Որոշ կանայք չունեն բնակարանում ապրելու հնարավորություն կամ ցանկություն, լինի՞ դա իրենց տարած տրավմայի հետ կապված, թե ամուսնու բարեկամների՝ մոտակայքում կամ կոհի հետ համատեղ ապրելու պատճառով:

2.13 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Կանանց ապաստարանները տրամադրում են կարևոր սոցիալ-հոգեբանական աջակցություն, և ինչպես այլ սոցիալական կառուցները, պետք է հանուն հանրության աշխատող պետական ծառայությունների անբաժանելի մաս:

Սա ենթադրում է կառավարության և պետական մարմինների պարտականությունը՝ ապահովել համարժեք ֆինանսավորում կանանց ապաստարանների և կանանց տրամադրվող այլ ծառայությունների համար:

Կանանց ապաստարանների ֆինանսավորումը պետք է երաշխավորվի օրենքով և ծածկի պրոֆեսիոնալ ապաստարանի աշխատանքի բոլոր ծախսերը:

Կանանց ապաստարանները, թեժ գծերը և աջակցման այլ ծառայությունները առկա կարիքները պատշաճ կբավարարեն, միայն եթե կարողանան ապահովել մի քանի տարով (կամ անսահմանափակ ժամանակահատվածով) պայմանագրային երաշխավորմամբ ֆինանսավորում:

Վերջին տարիներին հանրային առողջապահությունը և սոցիալական խնամքը հիմնական պարտականություն համարող ժամանակակից ժողովրդավարական պետությունները ձգտում են ՀԿ-ներին վստահել ավելի ու ավելի շատ պետական գործառույթներ: Այս ՀԿ-ները անկախ, շահույթ չհետապնդող միավորումներ են, որոնք բավարարում են սոցիալական աշխատանքի և սոցիալական քաղաքականության ծառայությունների բնագավառի կարիքները և տրամադրում համապատասխան ծառայություններ:

Եվրոպայում կանանց ապաստարանները հիմնականում աշխատեցնում են ՀԿ-ները, որոնք բռնությունների ենթարկված կանանց աջակցության հսկայական գործնական փորձ և հմտություններ են ձեռք բերել տարիների ընթացքում: Կանանց ծառայություններ մատուցելու այս կառուցվածքային ձևը ապացուցել է, որ արդյունավետ է և նոր նախագծեր սկսելու դեպքում պետք է գործարկվի հենց այս ձևը: **Աջակցություն տրամադրելու մեջ կանանց ՀԿ-ները ավելի ճկուն են, և բռնության կոհերը հակված են ավելի քիչ խոչընդոտներ ունենալ ՀԿ-ներին դիմելիս, քան պետական մարմիններին:**

Կանանց աջակցման կենտրոնների և կառավարության համագործակցությունը հաջողություն է արձանագրել և օգտակար արդյունքների է բերել շատ երկրներում: Հետևաբար հաջողության գրավականը «մասնավոր-հանրային համագործակցությունն» է:

Կարևոր է, որ պետական մարմինները պահանջեն որակի չափորոշիչների կիրարկում (ինչպես ձևակերպված է սույն ձեռնարկում), սակայն նաև հարգեն համապատասխան հաստատությունների մասնագիտական անկախությունը: Կանանց ապաստարանների և աջակցության ծառայությունների որակն ամրապնդելու համար անհրաժեշտ են շարունակական ներքին և արտաքին գնահատումներ (տե՛ս **«Փաստաթղթավորում, գնահատում և որակի հսկողություն» գլուխը**): Պետք է հիշել, որ որակը հնարավոր է միայն անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:



2.14 ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՇԱՃՈՒԹՅՈՒՆԸ - ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Չի կարելի ակնկալել, որ բռնության ենթարկված կանայք և նրանց երեխաները ապաստարան փնտրեն անտունների ապաստարաններում և սոցիալական ապահովության այլ հաստատություններում, որոնք համապատասխանեցված չեն իրենց կոնկրետ կարիքներին: Բռնության ենթարկված կանանց և երեխաներին բավական չէ պարզապես օթևան տրամադրելը: Անհրաժեշտ է, որպեսզի լինի կանանց ապաստարանների այնպիսի համակարգ, որի հայեցակարգը և գործառնական մոտեցումները բացառիկորեն համապատասխանում են իրենց նպատակին՝ տրամադրել բռնության ենթարկված կանանց և երեխաների կարիքներին համապատասխան աջակցությունը: Պաշտպանությունը և անվտանգությունը ապաստարանի կարևորագույն չափանիշներից են: Բայց նույնքան կարևոր է, որ կանայք և երեխաները կախված չլինեն հաստատություններից, որտեղ նրանք կրկին ստիպված կլինեն հրաժարվել ինքնորոշման իրենց իրավունքից: Կանանց ապաստարանի պլանավորումն ու նպատակները պետք է ուղղվեն դեպի կանանց և երեխաների ուժեղացումն ու հզորացումը:

ՄԱԿ-ի կանանց նկատմամբ բռնության մասին հռչակագիրը որպես բռնության պատճառ մատնանշում է տղամարդկանց և կանանց միջև ուժային պատմական անհավասարակշռությունը: Հետևաբար կանանց ապաստարանները հետապնդում են մի մոտեցում, ըստ որի կանայք կապատագրեն իրենց բռնարար հարաբերություններից, կապատեն իրենց տղամարդու վերահսկողությունից՝ անկախ նրանից՝ շարունակում են մնալ իրենց կողակցի հետ, թե հեռանում են նրանից: Կանանց ապաստարանների աշխատանքի նպատակը բռնությանը վերջ տալն է: Անկախ նրանից՝ կինը խլում է բռնիհարաբերությունը,

թե՛ ոչ, դանրա որոշումն է, որը պետք է հարգել: Այնուամենայնիվ, սխալ կլիներ ընտանիքը պահպանելու նպատակին ձգտելը՝ առաջին հերթին բռնությունը դադարեցնելու փոխարեն:

Բռնարար տղամարդու համար պետք է բացարձակորեն պարզ լինի, որ բռնությունը չի կարող արդարացվել և որ դրան վերջ տալու պատասխանատվությունը բացառապես իրենն է:

Եվրոպայում կանանց ապաստարանների վերջին երեք տասնամյակի գործնական փորձը ցույց է տվել, որ ֆեմինիստական և ապատագրող սկզբունքները և մոտեցումները արդյունավետ են բռնությունների ենթարկված կանանց և երեխաներին անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու հարցում (Hanetseder, Bern/Stuttgart/Wien, 1992):

Կառավարությունը և պետական մարմինները կարող են և պետք է հաշվի առնեն այս փորձառությունը՝ բռնության դեմ կանանց ծառայություններ ստեղծելիս և ընդլայնելիս:



ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ






3. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կանանց ապաստարանները հիմնում և աշխատեցնում են կանայք: Ապաստարանները տրամադրում են խորհրդատվություն և աջակցություն կանանց՝ կանանց կողմից: Ապաստարանները աշխատեցնում են մասնավոր, շահույթ չհետապնդող և անկուսակցական կանանց միությունները կամ ասոցիացիաները: Սա օգնում է նվազեցնել բռնության ենթարկված կանանց կողմից շփման դուրս գալու դժվարությունը և պահպանում է նրանց անանունությունը:

Կանանց ապաստարանը տրամադրում է ապահով օթևան, որտեղ ընտանեկան բռնության ենթարկված կանայք և նրանց երեխաները կարող են ապրել առանց բռնության վախի: Ապաստարանը տրամադրում է հատուկ ծառայություններ և անվտանգության միջոցներ: Բռնության ենթարկված կանանց հետ աշխատելու հիմնական սկզբունքը կանանց իրավունքները ջատագովելու մեծ հանձնառությունն է և կանանց խրախուսելը, որպեսզի նրանք վարեն անկախ և արժանապատիվ կյանք:

Կանանց ապաստարանները կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում կենսական նշանակություն ունեն: Դրանց գործառույթները չեն սահմանափակվում օթևան և ապահով կեցություն տրամադրելով: Ապաստարաններում կանայք և նրանց երեխաները ստանում են այնպիսի աջակցություն, որը նրանց տալիս է տրավմատիկ փորձառությունները հաղթահարելու, բռնությանը վերջ տալու, ինքնագնահատականը վերականգնելու, ինքնորոշված ու անկախ կյանքի հիմք դնելու կարողություն: Կանանց ապաստարանները տրամադրում են ճգնաժամային աջակցություն, ընթացիկ խորհրդատվություն և աջակցություն բռնարար փորձառության հետ կապված (իրավաբանական հարցեր, բնակարանային և աշխատանքի խնդիրներ, հոգեթերապիա) բոլոր հարցերում: Կանանց ապաստարանները համայնական միջավայրեր են, որտեղ կանայք և երեխաները ծանոթանում են համատեղ ապրելու տարբեր ձևերի: Կանանց ապաստարանները նաև կատարում են հանրային դեր՝ դրանք ձգտում են բարձրացնել ընտանեկան բռնության մասին իրազեկվածությունը, համագործակցում են մասնագետների հետ և նրանց վերապատրաստման ծրագրեր տրամադրում, միջոցառումներ կազմակերպում, մասնակցում են ոլորտում միջոցառումների, ներգրավվում են դպրոցներում կանխարգելիչ միջոցառումներում և շատ ավելին:

Կանանց ապաստարանը սահմանվում է՝ ըստ հետևյալի

-  իր հստակ նպատակների,
-  իր հստակ սահմանված թիրախային հանրույթի,
-  իր գործառնական սկզբունքների,
-  իր մասնագիտացված ծառայությունների և աշխատակազմի (տե՛ս **Գլուխներ 5 և 6**)
-  իր հատուկ անվտանգության միջոցների (տե՛ս **Գլուխ 7**)

Ապաստարանի մասին կարող է կիրառվել «կանանց ապաստարան» տերմինը միայն վերը թվարկվածի դեպքում:

3.1 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կանանց ապաստարանը պետք է հետապնդի ի սկզբանե հստակ սահմանված նպատակներ: Սրանպատակը մատուցված ծառայությունների որակն ապահովելն է: Կանանց ապաստարանները կանանց և երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման հարցում կարևոր դեր են կատարում: Դրանք իրենց բնույթով ձգտում են հետագա բռնությունները կանխարգելել՝ այդպիսով բռնության զոհերին ապահով միջավայր տրամադրելով և օգնելով վերջ դնել բռնության կրկնմանը: Բռնության ենթարկված կանայք և նրանց երեխաներին անհրաժեշտ է մանրակրկիտ խնամք, գործնական աջակցություն և ուղեկցություն իրավական գործընթացներում: Կանայք ու նրանց երեխաները նաև ունեն իրենց աջակցող խորհրդատուների կարիք: Ծառայությունները պետք է բավարարեն բռնության ենթարկված կանանց կարիքները: Թե՛ ճգնաժամային աջակցությունը, թե՛ տևական հոգեթերապիան անհրաժեշտ են տրավմատիկ փորձառությունները հաղթահարելու համար:

Այնուամենայնիվ, կանանց ապաստարանները սովորաբար մասնակցում կամ կազմակերպում են նաև առաջնային կամ երկրորդային կանխարգելման միջոցառումներ (տե՛ս **Գլուխ 5**): Այդպիսով նրանք առանցքային դեր են կատարում կանանց և նրանց երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության դեմ պայքարի և այն կանխարգելու ընդհանուր մոտեցման մեջ:

3.2 ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Առաջին հերթին բռնության զոհերի ապահով լինելն է կարևոր: **Ընտանեկան բռնության տրավմայից վերականգնվելը հնարավոր չէ, եթե անվտանգություն չհաստատվի:** Հետևաբար, անվտանգությունը ապաստարաններում պետք է վայելի առավելագույն առաջնահերթություն (տե՛ս **Գլուխ 8**):



3.3 ՀԶՈՐԱՅՈՒՄ






Բռնությունը տրավմատիկ փորձառություն է, այն անվոր լինելու և ուրիշի ողորմածության տակ գտնվելու փորձառություն է: Բռնության զոհերին ցանկացած աջակցության նպատակը պետք է լինի անվորությունը հաղթահարելը և զորացնելն այնպես, որ այս կանայք (կրկին) ինքնուրույն կյանք կարողանան վարել: Բռնության զոհ դարձած կանայք չպետք է պիտակավորվեն որպես «հիվանդ» կամ «թշվառ», ինչը հետագայում կարող է ավելի թուլացնել նրանց դրությունը: Հաճախ թուլությունը բռնության ենթարկվելու հետևանքն է: Բռնությունը ոչ միայն մարմի վրա է հետքեր թողնում, այլև՝ մտքի և ինքնագնահատականի: Բռնության ենթարկված կանանց հետ աշխատանքի որոշ մոտեցումներ սխալ են նրանով, որ այս թուլությունները որպես կնոջ հատկանիշներ են դիտարկում, որոնք հետագայում դառնում են պաթոլոգիական դեպքեր: Ապաստարանների շարժման փորձագետների փորձը ցույց է տալիս, որ առանցքային նշանակություն ունի կանանց համարել իրենց իրավիճակի գիտակը: Կանանց անհրաժեշտ է աջակցություն, որպեսզի գիտակցեն իրենց դրությունը և այն, թե ինչպես էր հնարավոր, որ իրենց կողակիցը իրենց նկատմամբ իշխանություն բանեցնի: Բռնության մեխանիզմների ըմբռնումը նրանց տալիս է բռնությանը արդյունավետ կերպով դիմակայելու ռազմավարություններ վարագցնելու կարողություն: Վերջնական նպատակը առանց բռնության կյանք վարելն է:

Հայաստանում կանանց աջակցման ծառայությունների մշակած «Լավագույն փորձի ձեռնարկի» փիլիսոփայությունը հիմնված է աշխատակիցներին ու ծրագրի մասնակիցներին մատուցվող ծառայությունների ու միջամտությունների՝ զորացման մոդելի վրա: Զորացման մոդելն ապահովում է միջավայր, որտեղ ամեն անհատ պատասխանատու է իր արարքների համար՝ աջակցելով ինքնուրույն ընտրություն կատարելու և սեփական կյանքը վարելու իրավունքի իրացմանը: Զորացման մոդելով աշխատող ընտանեկան բնության ապաստարանի աշխատակիցն, օրինակ, կպաշտպանի ապաստարանածի որոշումը վերադառնալ բռնարար հարաբերություն, չնայած ինքը համաձայն չէր լինի նման որոշման հետ, սակայն որպես մեկը, ով զորացնում է ուրիշներին, նա պարտավոր է հարգել կնոջ որոշումը ու նրա հետ քննարկել անվտանգության պլանավորման հարցերն ու վստահեցնել, որ ցանկության դեպքում նա կարող է հավելյալ ծառայություններ ստանալ: Զորացման մոդելի կենտրոնում այնպիսի միջավայրի կերտումն է, որտեղ անհատն ինքն է կայացնում իր որոշումներն ու ընտրությունները: Բռնությունը վերապրածներից մենք ժամանակի ընթացքում սովորել ենք, որ նրանք ամենաշատը աջակցության, քաջալերանքի և իրենց նպատակին հասնելու միջոցների կարիքն ունեն, ոչ թե՛ ինչ-որ մեկի, ով կասի նրանց՝ ինչ անել (ինչպես բռնարարն է անում): Փորձը ցույց է տալիս, որ եթե ապաստարանած կնոջ փոխարեն մենք կայացնենք նրա որոշումները, դրանք մնայուն չեն լինի: Ուրիշները կարող են տալ խորհուրդներ, աջակցություն, օգնություն կամ սիրալիր վերաբերմունք, բայց ոչ բուժում: Լավ հոգեբան թերապևտը կամ աշխատակիցը նա է, ով հաստատում է զոհի փորձառությունը և օգնում նրան վերականգնել վերահսկողությունն իր կյանքի նկատմամբ: Անձնակազմի անձնական արժեքները չպետք է պրոյեկտվեն բռնությունը վերապրածի վրա: Վերջինը **ՊԱՐՏԱՎՈՐ** է ինքնուրույն կայացնել իր որոշումները, իսկ անձնակազմի դերը նրան տեղեկատվություն և հմտությունների վարձագման աջակցություն տրամադրելն է:

3.4 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կանանց ապաստարանների նպատակներից է կանանց և երեխաների նկատմամբ բռնության համար հող պատրաստող և այն շարունակաբար մնուցող նախատրամադրվածությունների, վերաբերմունքների և վարքագծի տարածված դրսևորումների վերացումը:

Կանանց ապաստարանները իրավելու են հետևյալ հարցերի մասին.

-  կանանց և երեխաների դրության
-  ընտանեկան բռնության՝ հասարակության վրա ունեցած ազդեցության
-  խնդիրն մոտենալու արդյունավետ միջոցների
-  կանանց և երեխաների նկատմամբ բռնությանը վերջ դնելու արդյունավետ միջոցների
-  ոչ բռնի հանրության հնարավոր օգուտների

3.5 ՈՒՄ ՀԱՄԱՐ ԵՆ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԸ. ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

Կանանց ապաստարանները պետք է բաց լինեն բոլոր կանանց համար, ովքեր դարձել են ֆիզիկական, հոգեբանական, հույզական, սեռական և տնտեսական բռնության զոհ կողակցի, նախկին ընկերակցի կամ ընտանիքի անդամի կողմից:

Ինչպես նշվեց 2-րդ գլխում, ընտանեկան բռնության զոհերի մեծ մասը կանայք են, բռնարարների մեծ մասը՝ տղամարդիկ: Այնուամենայնիվ, կանանց նկատմամբ բռնություն են գործադրում նաև կին կողակցիցները կամ սովորաբար տարիքով կամ կարգավիճակով ավելի բարձր ընտանիքի կին անդամները, օրինակ՝ սկեսուրները (հատկապես աստճանակարգային կառուցվածք ունեցող հասարակություններում):

Ապաստարանը պետք է բաց լինի բոլոր կանանց համար՝ անկախ տարիքից, կրոնից, ազգությունից, էթնիկ պատկանելությունից, սեռական կողմնորոշումից, հաշմանդամություններից, իրավական, սոցիալական և ամուսնական կարգավիճակից, քաղաքական պատկանելությունից և ֆինանսական վիճակից:

Կնոջ տարիքը կարող է խնդիրներ առաջացնել: Եթե կինը դեռևս չափահաս չէ, իրավական դժվարություններ կարող են առաջանալ: Այդ դեպքում կարևոր է համագործակցել երեխաների ապաստարանի հետ:

Կանանց ապաստարաններում կարող են ապաստարանել նաև երեխաները: Ընտանեկան բռնությունը ազդում է նաև երեխաների վրա, որովհետև կան հրեք են ենթարկվում բռնության կամ իրենց մայրերի նկատմամբ կատարված բռնության ականատես են: Երկու փորձառությունն էլ կարող է տրավմատիկ լինել: Ավելին, եթե կանայք չունենային երեխաներին իրենց հետ ապաստարան տանելու հնարավորություն, նրանք հնարավոր է՝ չզնային ապաստարան:

Կանանց ապաստարանում կեցության սահմանափակ պայմանները և առանձնության բացակայությունը արդարացնում են տղաների տարիքային սահմանափակումը: Եթե տղաները չեն ընդունվում ապաստարան տարիքի պատճառով, ապա ապաստարանը պետք է նրանց համար հանրակացարանում կամ մեկ այլ վայրում օթևան գտնելու հարցով:

Մեկ այլ ընտրանք կարող է լինել այդպիսի ընտանիքների համար առանձին բնակարան ունենալը, որտեղ նրանք առանձին մուտք կունենան:

Կարևոր է, որ յուրաքանչյուր ապաստարան ընտրի իր քաղաքականությունը՝ առկա հնարավորությունները և այլընտրանքները հաշվի առնելով:

Կարևոր է ընդգծել, որ ընտանեկան բռնությունը/ինտիմ հարաբերություններում բռնությունը կանանց նկատմամբ բռնության ձևերից ընդամենը մեկն է: Կանայք կարող են լինել այլ ձևերի բռնության (թրաֆիքինգ, հարկադրված ամուսնություն, կանանց սեռական օրգանների թլպատում, սեռական բռնություն, պատերազմական ժամանակներում բռնաբարություն) զոհ: Ընդհանրապես, յուրաքանչյուր ապաստարանի որոշումն է՝ ընտանեկան բռնության զոհերից բացի՝ ո՞ր տեսակի բռնություն վերապրած խմբերին ընդունել: Նկատառումները պետք է հիմնվեն տրամադրվելիք ծառայությունների առկայության, ինչպես նաև անվտանգության դրույթների վրա: Կանանց ապաստարանները սովորաբար

անօթևան կանանց համար չեն, բայց պետք է հաշվի առնել, որ շատ անօթևան կանայք ունեն բռնի անցյալ և/կամ ներկա և հետևաբար պետք է ապաստարանում բնակության իրավունք ունենան:

Կանանց ապաստարանները հնարավոր է ունենան խնդիրներ թմրամիջոցներ չարաշահող կամ հոգեկան խանգարումներ ունեցող կանանց համարժեք օգնություն ցուցաբերելու հարցում:

Թմրամիջոցների չարաշահումը և հոգեկան խանգարումները շատ հաճախ ընտանեկան բռնության և սեռական բռնության արդյունքում ստացած տրավմաների հետ են կապված լինում: **Քանի որ մենք չունենք թմրանյութերի չարաշահման և հոգեկան խանգարումների հետ աշխատելու միջոցներ, խորհուրդ է տրվում այս դեպքերում համագործակցել մասնագիտացած ծառայությունների հետ:**

3.6 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ապաստարանի աշխատանքի նպատակների հիմքը ապաստարանի աշխատանքի բոլոր կողմերը սահմանող հիմնական սկզբունքներն են: Դրանք են՝

Ա. ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տղամարդու կողմից կնոջ նկատմամբ բռնությունը կանանց և տղամարդկանց միջև պատմականորեն անհավասար ուժային հարաբերությունների և հասարակության ու քաղաքականության մեջ գոյություն ունեցող գենդերային հարաբերությունների դրսևորում է: Հետևաբար, այն առաջին հերթին պետք է համարվի սոցիալական և քաղաքական խնդիր: Կանանց ապաստարանները պետք է կատարեն քաղաքական այն գործառույթը, որը ենթադրում է տղամարդու կողմից բռնությանը նպաստող սոցիալական, պատմական, մշակութային և քաղաքական հանգամանքների մասին իրավեկում: Ակտիվիստները ձգտում են կանանց և երեխաների համար ստեղծել բռնության դեմ խոսելու հնարավորություն: Հասարակությունը պետք է մեղավորներին իրենց գործողությունների համար պատասխանատու դարձնի: Ապաստարանների որդեգրած ֆեմինիստական սկզբունքները պետք է կանանց և երեխաներին ցույց տան բռնությունից սեփական ուժերով ձերբազատվելու ձևերը:

Բ. ԻՐԱՐ ՕԳՆՈՂ ԿԱՆԱՅՔ

Բռնության ենթարկված կանայք խիստ մեծապես տուժում են իրենց տղամարդ կողակիցների իշխանությունից և ոտնձգումներից: Հետևաբար կարևոր է, որ նրանք աջակցություն և օգնություն ստանան ոլորտում մասնագիտացած մեկ այլ կնոջից:

Բռնության զոհ կանայք նաև տուժում են թույլ դիրքում լինելուց և իրենց ունակությունների ու ուժի նկատմամբ հավատը կորցնելուց: Այսպիսով, ապաստարանը կանանց համար ծառայում է որպես ակտիվ, ինքնորոշված կյանք վարելու իրենց ունակությունները փորձելու մոդել: Սա արտացոլվում է նաև ապաստարանի կառուցվածքի մեջ, որտեղ կանայք ոչ միայն աշխատում են, այլև ստանձնում են կենցաղային պարտականություններ: Դա նպաստում է, որ կանայք վերանայեն և հաղթահարեն կարծրատիպային գենդերային դերերը: Այս սկզբունքը վերաբերվում է նաև կանանց աջակցման այլ ծառայություններին:

Գ. ԿԱՆԱՆՑ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բռնության դեմ պայքարելը նշանակում է հստակ դիրքորոշում ընդունել և դատապարտել կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերը («Բռնությանն արդարացում չկա»): Պատահած դեպքերի նկատմամբ չեզոք մնալու փորձերը հանգեցնում են բռնության հանդուրժողելիությանը: Ապաստարան եկած կանայք չպետք է ներկայացնեն ապացույցներ իրենց անցած բռնությունից: Կարևոր է հավատալ նրանց և վերաբերվել առանց նախատրամադրվածության: Բռնության ենթարկված կանանց անհրաժեշտ են շահերի պաշտպաններ, ովքեր նրանց կողքին են և աջակցում են նրանց՝ ամեն անհրաժեշտ քայլ կատարելիս: Շահերի պաշտպանությունը և զորակցությունն ուղղակի անհրաժեշտություն են:

Բռնության պատասխանատուն միշտ բռնարարն է: Բռնի վարքագծի ցանկացած ձևի դեմ հստակ դիրքորոշում ընդունելը ցույց է տալիս բռնության ակտի, ոչ թե այն կատարող անձի դատապարտումը:

Դ. ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ (ԵՎ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ)

Կանանց ապաստարանների ծագումը հասնում է դեռ 1960-ականների և 1970-ականների կանանց (իրավունքների) շարժումներին, որոնք կյանքի բոլոր ոլորտներում հավասարության և ոչ խտրական վերաբերմունքի կոչ էին անում:

Ապաստարանի կազմակերպումը պետք է անդրադառնա նաև այս նպատակներին՝ առաջադրելով դեմոկրատական սկզբունքներ, կիսելով ուժը և խուսափելով չափավանց աստճանակարգային կամ բյուրոկրատական կառուցվածքներից: Շատ ապաստարաններում անձնակազմն աշխատում է որպես թիմ, իսկ կառավարման պարտականությունները և պատասխանատվությունները հավասարապես են բաշխվում: Նույնիսկ եթե ապաստարանը տնօրեն ունի, միևնույնն է, կարևոր է թիմային աշխատելաճը և ապաստարանի աշխատողներին բոլոր որոշումների կայացման մեջ ներգրավելը և թույլ տալը, որ նրանք մասնակցեն ծառայության վարձացմանը:

Այս կառուցվածքները երաշխավորում են, որ շփումները և հարաբերությունները հիմնված լինեն ոչ թե վերևից ներքև իշխանություն կիրառելու վրա, այլ զորակցության և հավասարության միջավայրում համատեղ ապրելու և աշխատելու վրա: **Կառավարման այս կառուցվածքը կոչվում է «հորիզոնական» որովհետև այն կենտրոնացած է ոչ թե վերևում գտնվող և դեպի ներքև հրամաններ տվող ղեկավարի վրա, այլ անձնակազմի թիմային աշխատանքի և համատեղ որոշումների:**

Ե. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ և ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Դեմոկրատական կառուցվածքը և ապաստարանի կյանքի տարբեր հարցերում ընդգրկվելու հնարավորությունը շատ կարևոր սկզբունքներ են: Բոլոր ապաստարաններում պարբերաբար տեղի են ունենում ժողովներ, որոնք կանանց մասնակցության հիմքն են: Կարևոր է հետևել, որ կանանց ապաստարանները չդառնան հաստատություններ, որտեղ կանանց կյանքը իշխվում և կառավարվում է, այլ՝ հաստատություններ, որտեղ կանայք բոլոր գործնական գործընթացներում ընդգրկված են: **Ամուսնու իշխանությունը չպետք է փոխարինվի հաստատության իշխանությամբ: Անձնակազմի գործառույթը ուժը զգուշորեն կարգավորելը և սահմանված կանոնակարգը այնպես կիրարկելն է, որ ուղղություն ցույց տա՝ առանց կանանց անձնական ապաստությունը խիստ սահմանափակելու:**

Զ. ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կարևոր է հարգել կնոջ իրավունքը իր կյանքի որոշումները կայացնելու հարցում (տե՛ս **Գլուխ 3.3 «Հպորացում»**): Շատ հաճախ բարեկամները, ընկերները և խնամք ապահովող կազմակերպությունների մասնագետները փորձում են կնոջն ասել, թե ինչ անի: Ոմանք կարծում են՝ նա պետք է բաժանվի բռնարարից, ուրիշները՝ որ պետք է բռնարարին մեկ այլ հնարավորություն տա: Դժբախտաբար, հաճախ է պատահում, որ այդ մարդիկ հիասթափվում կամ նույնիսկ վայրանում են, երբ բռնության ենթարկված կինն իրենց խորհրդին չի հետևում: Այդպիսի խորհուրդը կարող է կնոջ վրա ավելի մեծ ճնշում գործադրել և գործնականում բնավ օգուտ չտա: Կարևոր է կնոջը հասցնել, որ միայն նա է որոշողի դիրքում, և որ նրա որոշումը կհարգվի: Միջամտության իմաստը բռնության, ոչ թե հարաբերությանը վերջ տալն է: Ինքնորոշման իրավունքը կարևոր սկզբունք է: Թե որքան է կինը ցանկանում մնալ ապաստարանում (3 ամսվա սահմաներում) և արդյո՞ք ցանկանում է բաժանվել, թե ոչ, բացառապես իր որոշումն է:

Է. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ / ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Կնոջ իրավունքները և անձեռնմխելիությունը պաշտպանելու համար պարտադիր է, որ նա ի վիճակի լինի որոշել՝ ինչ տեղեկություններ տրամադրել իշխանություններին կամ ընդհանրապես երրորդ անձանց: Հետևաբար, ապաստարանը կամ խորհրդատվական կենտրոնը առանց կնոջ համաձայնության ոչ մի տեղեկություն չպետք է տրամադրի այլ կողմերի: Բացառություններ պետք է կատարվեն, եթե կանանց կամ երեխաների կյանքը վտանգված է (օրինակ՝ ինքնասպանության փորձեր, սուր վտանգ բռնարար կողակցից կամ երեխաների նկատմամբ բռնություն գործադրող կանայք):

Կանայք պետք է նաև ունենան առանց իրենց ինքնությունը բացահայտելու խորհրդատվություն և աջակցություն ստանալու իրավունք:

Ը. 24-ԺԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Կնոջը, ով ստիպված է ամուսնուց փախչել, անհապաղ աջակցություն և պաշտպանություն է անհրաժեշտ: Նա պետք է օրվա ցանկացած ժամի կանանց ապաստարան հասնելու հնարավորություն ունենա: Առնվազն մեկ աշխատակից պետք է պատրաստ լինի ահապանգի դեպքում ցանկացած պահի հասնել կանանց ապաստարան, որպեսզի կարողանա կնոջն ընդունել: Եթե քաղաքում մեկից ավել ապաստարան կա, դրանցից առնվազն մեկը պետք է կարողանա կնոջը և նրա երեխաներին ընդունել ամեն պահի: Սկզբունքորեն կանայք և նրանց երեխաները պետք ապաստարանում մնան այնքան ժամանակ, մինչև անվտանգ չլինեն և բավականաչափ վորեղացված՝ վարելու առանց բռնության կյանք: **Այնուամենայնիվ, պետք է հետևել, որ անձնակազմից/ հաստատությունից կախվածություն չառաջանա: Կախվածություն չառաջացնելու նպատակով խորհուրդ է տրվում, որ ապաստարանում կացությունը չգերազանցի 3 ամիսը: Այնուամենայնիվ, ոչ մի կին ստիպված չի լինի ապաստարանից դուրս գալ, եթե վտանգի մեջ է կամ գոյապահպանության միջոցներ չունի:**

Թ. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ապաստարանը պատասխանատու է կանանց և երեխաների, կազմակերպության, իր անդամների և ընդհանրապես հանրության առջև: Ապաստարանի գործունեությունը և վարքը պետք է լինեն թափանցիկ և հասկանալի:

Ժ. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

Պրոֆեսիոնալիզմը սկզբունքների լիարժեք իրականացման նախապայմանն է: Աշխատակազմը պետք է համարժեք վերապատրաստում անցնի և վարձատրվի : Հետագա վերապատրաստումների և հսկողության համար նախնական պատրաստություններ պետք է ձեռնարկվեն: Աշխատակիցների թիվը պետք է սահմանվի ըստ կանանց և երեխաների թվի, որպեսզի հնարավոր լինի տրամադրել անհրաժեշտ աջակցությունն ու ծառայությունները և հոգալ կարիքները: Որոշ ապաստարաններ ապավինում են կամավորների աջակցությանը: Կամավորները պետք է լավ վերապատրաստված լինեն: Միջոցները պետք է տնօրինվեն խնայողաբար և ծախսարդյունավետ կերպով: Որակի չափորոշիչները պետք է կանոնավոր կերպով վերահսկվեն:

Ի. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

Ապաստարանները պետք է աշխատեցնեն ոչ կառավարական, շահույթ չհետապնդող և անկուսակցական կանանց միավորումները/ասոցիացիաները (տե՛ս **Գլուխ 2.13**): Կանանց ապաստարաններին ունեն պետության կողմից համարժեք ֆինանսավորման կարիք, քանի որ դրանք կատարում են հասարակությանն անհրաժեշտ գործառույթներ՝ ծեծված և չարաչափված կանանց և նրանց երեխաներին տրամադրում են ապաստարան և աջակցություն:

Ս. ԱՆՎՃԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապաստարանների աջակցման ծառայությունները պետք է լինեն անվճար, քանի որ կանայք ունեն ցածր կամ զրոյական եկամուտ: Սա երաշխավորում է, որ կարիքավոր կանայք և նրանց երեխաները կարողանան ապաստարան գտնել՝ անկախ իրենց ֆինանսական կարգավիճակից:



ԿԱՆԱՆՑ
ԱՊԱՍՏԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

4. ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Կանանց ապաստարանն ավելին է, քան պարզապես ապահով օթևանը: Այն մի վայր է, որտեղ ամուսնու, կողակցի կամ այլ հարավատի կողմից բռնության ենթարկված կանայք և նրանց երեխաները կարող են հանդիպել վորակցության կանանց միջև և ոչ բռնի միջավայրի, որտեղ իրենք պաշտպանված են և ապահով: Գործառնական սկզբունքները անհրաժեշտ են ոչ միայն նախորդ գլուխներում ներկայացված նպատակներին հասնելու համար, այլև ապաստարանի ենթակառուցվածքը նույնպես պետք է բավարարի որոշ պահանջների՝ կանանց և նրանց երեխաների առջև նոր դռներ բացելու համար:

Այս գլուխը ապաստարանի հիմնման մասին է: Այն նախատեսված է որպես ուղեցույց, թե ինչից է պետք սկսել: Այն ներկայացնում է ձեռնարկվելիք հիմնական քայլերը՝ սկսած գաղափարը վարձագնելուց, մինչև առաջին անգամ ապաստարանողների առջև դռները բացելը:



4.1 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Ապաստարանի հիմնադրումն ընդգրկում է մանրակրկիտ պլանավորում և ամբողջությամբ նվիրված մարդկանց խմբի աշխատանք: Այս գլուխը ներկայացնում է սկզբնական նախաձեռնության, իրավական հիմքի, կարիքների և նախնական պլանի բացահայտման, պլանների մանրամասն կազմման, լրբինգի և դրամահավաքի անհրաժեշտության, տեղանքի և ապաստարանի ենթակառուցվածքի հետ կապված մանրամասն չափորոշիչներն ու հանձնարարականները:

4.2 ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆ

Կանանց ապաստարանի հիմնադրող նախաձեռնության հիմքում պետք է լինեն կանանց նկատմամբ բռնության ձևերի, կրկնվող դրսևորումների և ավդեցության մասին բավային գիտելիք ունեցող մարդիկ: **Նրանք պետք է հավատան և հասկանան ընտանեկան բռնությունը կանխարգելելու և դրա դեմ պայքարի առաքելությունը:**

Մեծաթիվ կանանց ապաստարանների հիմնադրվել են ֆեմինիստ կանանց նախաձեռնությունների կողմից: Ապաստարանների շարժումը, առնվազն դրա վարձագումը արևմտյան, հյուսիսային և կենտրոնական (ոչ խորհրդային) Եվրոպայում, ուղղակիորեն կապված է 1970-ականների կանանց ապատագրման շարժման հետ: Ապաստարանների գաղափարները և նպատակները հիմնված են հավասարության և գենդերային ժողովրդավարության վրա: Համեմատաբար կարճ ժամանակահատվածում ձեռք բերված արդյունքները հանգեցրել են միջազգային մարմինների կողմից կանանց և երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման և տղամարդկանց բռնությունից նրանց պաշտպանելու հարցում կանանց ՀԿ-ների կարևոր դերի ճանաչմանը:










4.3 ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔ

Նախաձեռնող խումբը պետք է ապաստարանի ապագա իրավական կարգավիճակի վերաբերյալ որոշում կայացնի: Իրավական պայմանները կարող են երկրից երկիր տարբերվել: Այնուամենայնիվ, ցանկալի է շահույթ չհետապնդող, ոչ կառավարական կազմակերպական ձևը:

Որևէ ֆինանսավորման դիմելու համար անհրաժեշտ է որոշակի իրավական կարգավիճակ: Պետք է սահմանվեն հիմնական պատասխանատվությունները և պաշտոնները. սովորաբար, սա պարտադիր է՝ ասոցիացիան/կազմակերպությունը գրանցելիս: Այնուամենայնիվ իրավական կարգավիճակը չի երաշխավորում ֆինանսական աջակցություն պետական կամ մասնավոր հովանավորների կողմից: Խորհուրդ է տրվում մանրակրկիտ հետապնդություն կատարել, անհրաժեշտության դեպքում իրավական խորհրդատվություն ստանալ և ուսումնասիրել այլ ՀԿ-ների իրավական հիմքերը: Ինչպես նաև կարևոր է գնահատել, թե ով ունի պատասխանատվություն (կառավարման խորհուրդ) ստանձնելու կարողություն և ցանկություն և կառավարման խորհրդում ընդգրկվելու իրավունակության ինչ չափանիշներ են կիրառվելու (ապաստարանի նպատակները և սկզբունքները կիսող, դաշտում փորձագիտական գիտելիքներ ունեցող մեկը կամ հասարակական և/կամ քաղաքական գործիչ):

4.4 ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

Որևէ գործնական քայլ կատարելուց առաջ անհրաժեշտ է մանրամասն պլանավորում անցկացնել: Այս պլանը պետք է պարունակի.

-  մանրավնին պլանավորում կապված ապաստարանի հնարավորությունների, տրամադրվող ծառայությունների և հերթապահության ցուցակների հետ
-  ապաստարանի կառավարման պլան
-  շենքի հատակագիծ, որը ներառում է անվտանգության նախապգուշական միջոցառումները
-  անձնակազմի պլանավորում
-  բյուջեի երկու պլանավորում (մեկը մեկնարկային շրջանի համար, երկրորդը՝ ապաստարանի տարեկան ծախսերի համար)
-  համագործակցության պլան
-  դրամահավաքի պլան:

4.5 ՏԵՂԱՆՔ

Համապատասխան շենքը ոչ միայն պետք է բավարարի վերը նշված պահանջները՝ կապված ապաստարանի հնարավորությունների հետ, այլև պետք է նախագծված և տեղակայված լինի այնպես, որ կանանց և երեխաների համար առավելագույն պաշտպանություն ապահովի:






Իդեալական տարբերակով պետք է հնարավոր լինի ապաստարանի հասցեն գաղտնի պահել: Եթե շենքը տեղակայված է փոքր քաղաքում և/կամ գյուղական համայնքում և/կամ շատ բաց հասարակության մեջ, դրա հասցեն գաղտնի պահելը կարող է շատ դժվար լինել: Այնուամենայնիվ, սա դեռ չի նշանակում, որ ապաստարան ստեղծելը անհնարին է, այլ նշանակում է, որ էլ ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել անվտանգության միջոցառումներին: Կարևոր է ունենալ տեխնիկական անվտանգության ժամանակակից սարքավորումներ և իրավապահ ու վարչական մարմինների և հարևանների հետ լավ համագործակցային հարաբերություններ պահպանել (տե՛ս «Անվտանգություն»): Կնոջ ընտրության հնարավորությունը մոտակա և հեռավոր ապաստարանների միջև նույնպես կարող է նպաստավոր լինել: Եթե բռնարարը գնահատվել է որպես չափազանց վտանգավոր, ցանկալի է կնոջը (և նրա երեխաներին) հնարավորինս հեռու բնակեցնել:

Անհրաժեշտ չափսից կախված՝ կան բազմաթիվ տարբերակներ: Ապաստարան կարող է դառնալ առանձնատունը կամ բնակելի շենքում բնակարանը: Եթե շենքն արդեն կառուցված է, պետք է ստուգել՝ արդյո՞ք բավարարում է «Ենթակառուցվածքներ և սենյակների պլանավորում» բաժիններում նկարագրված պահանջներին: Բավարար ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում նպատակահարմար կլինի այդ նպատակով նոր շենք կառուցել: **Նպատակահարմար է ապաստարանը այնպիսի տեղանքում պլանավորել, որի մոտակայքում դպրոց և մանկապարտեզ լինի, այնպես, որ երեխաները կարողանան հանրակրթությունից օգտվել: Նաև ցանկալի է, որ ապաստարանը գտնվի տրանսպորտային հանգույցի մոտակայքում, որպեսզի կանայք հեշտությամբ կարողանան հաճախել մասնագիտական դասընթացների կամ գնալ աշխատանքի:**

4.6 ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ապաստարանում ապրելը իհարկե տարբերվում է տանն ապրելուց: Այնտեղ սովորաբար ավելի քիչ տարածք կա, և որոշ սենյակներ կիսովի օգտագործման են: Սա լարվածություն է առաջացնում կանանց և երեխաների համար: Հետևաբար, կարևոր է կյանքը հնարավորինս հարմարավետ դարձնել:

Պետք է մտապահվեն հետևյալ նկատառումները՝

-  Տրավմատիկ փորձառությունից վերականգնվելու համար կանանց և երեխաներին անհրաժեշտ է համապատասխան միջավայր:
-  Անհատական կարիքները պետք է հարգվեն: Առանձնության և անհատական սահմանների իրավունքները պետք է առաջնորդող սկզբունքները լինեն նախագծման ընթացքում: Այս սկզբունքները ենթադրում են հնարավորություն, որ անձը առանձին լինելու հնարավորություն ունենա և դա անի ոչ միայն անձնական հիգիենայի մասին հոգալիս:
-  Ապաստարանները պետք է հաշմանդամություն ունեցող կանանց համար հասանելի լինեն:
-  Կանանց ապաստարանը նաև տուն է երեխաների և երիտասարդների համար:
-  Որոշ երկրներում վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ բավականին խոշոր ապաստարանները հակված են հյուրանոցում ապրելու զգացողություն առաջացնելու, որը ինչ-որ իմաստով բացասական է, նրանք հակված են «անանուն» մնալու, որովհետև դժվար է լինում իրար ճանաչելը և իրար հետ կիսվելը: Խոշոր ապաստարաններում «համայնքի» զգացողություն ստեղծելը շատ բարդանում է:

Օրինակ

Օգտակար մոտեցում կարող է լինել պատկերացնելը, որ դուք ինքներդ պետք է ապաստարանում որոշ ժամանակ անցկացնեք: Այն չպետք է առաջարկի գրավիչ, ընդարձակ սենյակներ, ուտելիք պատրաստելու հարմարություններ և մաքուր կուգարաններ: Մատուցվող ծառայությունները ներառում են անվճար մնունդ, երեխաների խնամք, երեխաների խաղահրապարակ, խորհրդատվություն, բժշկական օգնություն: Թեև սա սկզբում անհրաժեշտ է թվում, կարևոր է հիշել, որ բռնություն անցած կանայք և երեխաները ունեն հնարավոր ամենալավ աջակցությունը ստանալու իրավունքը:



4.7 ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Սենյակներ կանանց համար

Յուրաքանչյուր կնոջ և նրա երեխաներին պետք է սենյակ տրամադրվի: Մեծ տարածքի կամ երկրորդ հյուրասենյակի առկայության դեպքում կարելի է հավելյալ մահճակալներ տեղադրել:

Ապաստարանում օթևան փնտրող կանայք (և նրանց երեխաները) ձգնաժամային իրավիճակում են գտնվում: Դա չի կարելի համեմատել արձակուրդ գնալու և հանրակացարանում կամ լեռնային խրճիթում կացարանը մեկ այլ մարդու հետ կիսելու հետ: Տրավմատիկ փորձառությունից հետո վերականգնվելու համար կանանց անհրաժեշտ է

մենություն և հանգիստ ապահովող մթնոլորտ: **Ֆինանսական միջոցները դժվար թե այնքան մեծ լինեն, որ ապաստարանը կարողանա հինգ-աստղանի հյուրանոցի ծառայություն մատուցել:**

Համատեղ սենյակներ

Կանանց ապաստարանը նաև վայր է, որտեղ հավաքվում են նմանատիպ անցյալ ունեցող կանայք: Սա նրանց տալիս է հնարավորություն կանանց միջև կորակցությանը ծանոթանալու և հասկանալու, որ կողակցի կողմից բռնությունը ոչ թե անձնական, այլ հասարակական խնդիր է, որ բռնությանը կարելի է վերջ տալ և որ միասին ապրելը կարող է տարբեր ձևեր ընդունել:


- Պետք է առկա լինի առնվազն երկու մեծ սենյակ, ընդարձակ խոհանոց: Մեծ սենյակներից մեկը պետք է ծառայի որպես հյուրասենյակ: Մյուսը նաև պետք է օգտագործվի խմբային գործունեության համար և բավականաչափ մեծ լինի տոնակատարությունների համար (բոլոր բնակիչների և անձնակազմի):
- Որոշ ապաստարաններ կանանց վերապատրաստման դասընթացներ են տրամադրում: Սա նույնպես պետք է հաշվի առնվի՝ ապաստարանը պլանավորելիս:
- Կանայք պետք է ունենան միասին ուտելիք պատրաստելու և սնվելու հնարավորություն:
- Քանի որ շատ հաճախ կանայք գալիս են շատ սահմանափակ հագուստով, անհրաժեշտ է ունենալ լվացքի և եթե հնարավոր է՝ չորացնող լավ մեքենա:

Սենյակներ անձնակազմի համար

Անձնակազմին պետք է հատկացվի մեկ սենյակ, ցանկալի է լոգարանով: Առանձին վայրում գտնվող ձգնաժամային կենտրոնը պետք է ունենա խորհրդատվության և վարչարարության համար նախատեսված սենյակներ:

4.8 ՄԱՍՆԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅՈՒՆ

Հատուկ նպատակներով ծախսերի դեպքում միշտ պետք է հասնել մասնավոր նվիրատվությունների, իսկ ապաստարանի աշխատանքի ընթացիկ ծախսերը պետք է հոգա պետությունը: **Կարևոր է օգտագործված հագուստի և կոշիկների, երեխաների և տնտեսական պարագաների, խաղալիքների և այլ պարագաների նվիրատվության համար կապվել կազմակերպությունների, բիզնեսների և անհատների հետ:**



**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՆԱՆՑ ԵՎ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կանանց ապաստարանները տրամադրում են աջակցության տարբեր ծառայություններ, իրականացնում են բավմասական գործունեություն և հասարակության մեջ կենսական նշանակության դեր են խաղում: Ինչ վերաբերվում է ծառայություններին, ապաստարանները տրամադրում են կացարան, ձգնաժամային աջակցություն և խորհրդատվություն ծեծված կանանց և նրանց երեխաներին, ինչպես նաև ոչ ռեպիդենտ կամ նախկինում ռեպիդենտ քաղաքացիների համար: Ավելին, կանանց ապաստարանները ձգտում են կանխարգելել կանանց նկատմամբ տղամարդկանց բռնությունը նրանք ձեռնարկում են բռնության, դրա պատճառների և հետևանքների և զոհերին մասնագիտացված աջակցության ծառայություն տրամադրելու անհրաժեշտության մասին իրազեկում: Այս նպատակին հասնելու հարցում օգնում են աջակցող անձանց և կապակերպությունների ցանցը և այլ մասնագետների հետ համագործակցությունը: Ծառայությունների որակն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել փաստաթղթավորում և գնահատումներ:



5.1 24-ԺԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարևոր է, որ կանայք ստանան ձգնաժամային աջակցություն և կարողանան ապաստարան գալ ամեն ժամի, նույնիսկ գիշերները:

Ցավոք, կացարանային հնարավորությունները կարող են սահմանափակ լինել: Պետք է մշակվի քաղաքականություն, թե ինչպես հաղթահարել ապատ տեղերի սահմանափակ լինելու խնդիրը: Այնուամենայնիվ, սկզբունքի հարց է, որ խիստ վտանգի դեպքում ոչ մի կին չմերժվի և ստիպված չլինի մնալ բռնարար կողակցի հետ կամ վերադառնալ նրա մոտ:

Երբ տվյալ տարածաշրջանում կանանց միայն մեկ ապաստարան կա, ապա այս ապաստարանը պետք է կանանց ու երեխաների ընդունելության համար բաց լինի շուրջօրյա: Եթե շրջանում կամ քաղաքում մեկից ավելի ապաստարան կա, առնվազն մեկը պետք է 24 ժամ բաց լինի: Տրանսպորտը պետք է անվճար հասանելի լինի, որպեսզի կանայք և նրանց երեխաները կարողանան հասնել ապաստարան առանց արժեքի մասին մտահոգվելու:

Ապաստարան գնալը սովորաբար կողակցի կողմից բռնության ենթարկված կնոջ առաջին քայլը չէ: Առաջին անձնական կապը սովորաբար հեռախոսով է հաստատվում: Շատ ապաստարաններ նաև աշխատեցնում են 24-ժամյա թեժ գիծ և տրամադրում են հեռախոսային խորհրդատվություն: Կրկին, քաղաքում/տարածաշրջանում պետք է լինի առնվազն մեկ շուրջօրյա թեժ գիծ՝ հեռախոսով ձգնաժամային աջակցություն և մոտակա ապաստարան դիմելու աջակցություն տրամադրելու համար: Կարևոր է ապաստարանների և արտակարգ դեպքերում գործող թեժ գծերի հեռախոսահամարի հնարավորինս լայն հրապարակայնությունն ապահովել, որպեսզի կանայք այս աջակցության գոյության մասին տեղյակ լինեն և օգնության համար փաստացի դիմեն ապաստարաններ: Ապաստարանի աշխատողը կնոջը ապաստարան ընդունելուց առաջ միշտ պետք է խոսի նրա հետ (տե՛ս ստորև «Ընդունելության ընթացակարգերը» բաժինը):

5.2 ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Խորհրդատվությունը կանանց ապաստարանի կողմից տրամադրվող հիմնական ծառայություններից է: Ապաստարանից չօգտվող կանանց խորհրդատվություն տրամադրվում է նաև առանձին վայրում գտնվող ձգնաժամային կենտրոններում: Երբեմն ապաստարանի կարիք ունեցող կանանց համար այս կենտրոնները հանդիսանում են որպես կապ հաստատելու առաջին կառույց:

Ինչպես էլ կապակերպվի խորհրդատվական ծառայությունը, ամենակարևորն կատարումն այն է, որ բռնության ենթարկված կինը ստանա պրոֆեսիոնալ խորհրդատվություն և որ տեղեկացված լինի իր և իր երեխային հասանելի բոլոր ծառայություններից:

Առաջին հանդիպման նպատակը վստահության հարաբերություն հաստատելն է: Ապաստարանի աշխատակիցը պետք է ուշադիր լսի և բացահայտի օգնություն փնտրող կնոջ կարիքները: Կանայք ունեն պրոֆեսիոնալ և մեղադրանքներ չառաջադրող աջակցություն ստանալու իրավունք՝ անկախ իրենց որոշումներից: Խորհրդատուն միշտ պետք է երաշխավորի կնոջը, որ իր հետ կապված բոլոր տեղեկությունները գաղտնի են պահվում և որ նա կարող է պահպանել անանունությունը:

Կարևոր է գնահատել բռնարար տղամարդու վտանգավորությունը (տե՛ս «Վտանգի գնահատում» հարցաթերթիկը՝ հասանելի կանանց աջակցման կենտրոնում) և մշակել անվտանգության պլան (տե՛ս «Անվտանգության» բաժինը ստորև): Օգնություն փնտրող կանանց պետք է տրամադրել նաև իրենց իրավունքների և հնարավորությունների մասին տեղեկատվություն: Տեղեկատվությունը կարող է մասամբ գրավոր լինել: Իր իսկ անվտանգության համար հնարավոր է անհրաժեշտ լինի կնոջը խորհուրդ տալ բռնարարին տեղեկություններ չտրամադրել:

Կարևոր է նաև բացահայտել այն ռեսուրսները և սոցիալական կապերը (ընտանիք, ընկերներ, համայնքային ծառայություններ և այլն), որոնց կինը կարող է դիմել աջակցություն ստանալու նպատակով: Բռնություն վերապրած կինը ապաստարանից դուրս գալուց առաջ որոշում է, թե այդ պահին ինչ երեք գլխավոր նպատակ ունի: Օրինակ, հնարավոր է, որ նա որոշի ապրելու տեղ գտնել, աշխատանք գտնել, երեխային մանկապարտեզ ուղարկել կամ մասնագիտական դասընթացների մասնակցել, ինչպես նաև արդարադատական համակարգի միջոցով արդարությունը վերականգնել: Այս նպատակները հասանելի են սոցիալական աշխատողների աջակցություն շնորհիվ: Բռնություն վերապրած ամեն կնոջ համար սոցիալական աշխատողի հետ միասին պետք է մշակվի անհատական պլան, որի նպատակները պետք է սահմանի հենց կինը:

5.3 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Ինչպե՞ս կարող են կանայք և երեխաները գտնել ապաստարանը: Գոյություն ունեն տարբեր մոդելներ: Մեկում ապաստարանը կապված է ձգնաժամային կենտրոնի հետ, որի հասցեն հայտնի է, իսկ ապաստարանինը՝ գաղտնի: Կինը սկզբում դիմում է ընդունելության/ ձգնաժամային կենտրոն: Ապաստարանի երկրորդ մոդելում, երբ հասցեն գաղտնի է, կապը հեռախոսով է հաստատվում և օգնության կարիք ունեցող կնոջը տրվում է ապաստարանի հասցեն: Նաև կան ապաստարաններ, որոնք կնոջը հանդիպում են նախապես պայմանավորված վայրում և այնտեղից տեղափոխում ապաստարան:

Կնոջը (և նրա երեխաներին) պետք է ընդունի ապաստարանի մասնագետը: Քանի որ ապաստարանները չունեն 24-ժամյա աշխատանքին համապատասխան քանակով անձնակազմ, դա կարող է դժվար լինել: Կինն ամեն պարագայում պետք է ապաստարանում գտնվելու առաջին ժամերին մասնագիտական ձգնաժամային խորհրդատվություն ստանալու իրավունք ունենա:

Ապաստարան գալը կարող է սկսվել անսովոր փորձառություն լինել: Կնոջ օթևանելու սկզբնական շրջանում կարևոր է ինտենսիվ օգնություն և աջակցություն ցուցաբերելը, և նա հենց սկզբից պետք է իմանա, թե ով է իր հետ մշտական կապի մեջ գտնվող աշխատակիցը, լավագույն դեպքում դա պետք է լինի կնոջը ապաստարան ընդունած կամ նրան առաջին անգամ խորհրդատվություն տված անձը: Սա կարևոր գործոն է վստահություն հաստատելու և նրան կողմնորոշվելու հարցում օգնելու մեջ: Չի կարելի թերազնահատել կանանց և երեխաների ձգնաժամային իրավիճակի արդյունքում առաջացած սթրեսը, ինչպես նաև լրիվ նոր միջավայրում հայտնվելու և տասնյակ անձանոթ դեմքերի հանդիպելու սթրեսը: **Անձնակազմը պետք է չափավորության սահմաններում հյուրընկալ և ջերմ լինի:**

Օրինակ

Շատ ապաստարաններում վետեղված է ցուցանակ այնտեղ աշխատող բոլոր կանանց լուսանկարներով և անուններով, ինչպես նաև նրանց հիմնական գործառնություններով, որի օգնությամբ կանայք և երեխաները կարողանում են ճանաչել անձնակազմին:

Եթե կինը լրջորեն վնասված է տրավմայից, խորհուրդ է տրվում 3-4 օր տրամադրել նրա վերականգնմանը մինչև կողմնորոշման կամ պլանավորման գործընթացներ սկսելը: Կողմնորոշման փուլից հետո կնոջը պետք է խորհրդատու նշանակվի, ով հետագայում կդառնա կնոջ կոնտակտային անձը, քանի դեռ կինը ապաստարանում է: Հաճախ սա այն մարդն է, ով սկսվում կնոջ կողքին է եղել և ում հետ կինը մտերիմ հարաբերություններ է հաստատել: Եթե սա հնարավոր չէ (օրինակ՝ որովհետև տվյալ խորհրդատուն այդ պահին չբաղված է), կնոջը խորհրդատվություն տրամադրող համարժեք փոխարինող է անհրաժեշտ:

Երբ կինը դիմում է ձգնաժամային կենտրոն կամ ապաստարան, պետք է գնահատել կնոջ և երեխաների կարիքները և ռիսկայնության աստիճանը (Կանանց աջակցման կենտրոնում հասանելի են վտանգի գնահատման, անվտանգության մշակման և կանանց ու երեխաների ընդունելության ձևաթղթերը): Կնոջը և երեխաներին պետք է տրամադրել ապաստարանի մասին ամենակարևոր ինֆորմացիան և ծանոթացնել ապաստարանում կացության ուղեցույցին (**Հայաստանում Կանանց աջակցման կենտրոնում հասանելի է «Իրավունքներ և պարտականություններ» բուկլետը): Եթե կնոջ դրությունը դասակարգվում է որպես բարձր ռիսկային, սակայն նա չի ցանկանում ապաստարան գնալ, նա պետք է ստորագրի ձևաթուղթ, ըստ որի նրան առաջարկվել է ապաստարան, բայց նա հրաժարվել է:**



5.4 ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնական պայմաններում ապրելու համար պահանջվում են որոշ կազմակերպչական պրակտիկաներ, ինչպես նաև անվտանգության միջոցառումներ: Ուղեցույցները «Իրավունքներ և պարտականություններ», և ոչ թե՛ «Կանոններ և կանոնակարգեր» ձևակերպելը համապատասխանում է պորացման և ինքնորոշման առանցքային սկզբունքների հետ, որոնք պետք է ինտեգրվեն ապաստարանի ծառայությունների բոլոր բաղադրիչների մեջ՝ ծառայություն մատուցողների կողմից կանանց իրավունքների խթանումը ապահովելու համար:

Ապաստարանների շատ կանոններ կազմվել են ապաստարանի բնակիչների միջև «խաղաղություն պահպանելու» նպատակով, որպեսզի նրանք կարողանան կանխարգելման վրա կենտրոնանալ՝ առողջ և դրական գործողությունների մասնակցելով: Վարքի վերահսկողության նպատակով կանոններ գործադրելու փոխարեն ապաստարանի անձնակազմը պետք է ապաստարանի բնակիչներին տրամադրի համայնքի ձևավորմանը նպաստող, զվարճալի և լարվածությունը նվազեցնող միջոցառումներ:

Եթե ապաստարանի բնակիչը չի մասնակցում ծառայություններին, առանձնացեք նրա հետ և հարցրեք՝ արդյո՞ք նրա կարիքները բավարարվում են: Այս մոտեցումը կրկին կենտրոնանում է հարաբերությունների կառուցման վրա և խուսափում է բնակչի՝ ապաստարանի կանոնակարգի հետ «անհամատեղելի» լինելու մեղադրական պիտակավորումից: Անձնակազմը պետք է զգոն լինի նաև ծանր դեպրեսիայի դեպքերում, երբ բնակիչը չի շփվում կամ նրա սնվելը և քնելը կարգավորված չէ:

Իրավունքները և պարտականությունները պետք է մշակվեն՝ կանանց կարիքներին կատարմամբ ձևավորվում ու զգայունություն դրսևորելով և լրացնեն ապաստարանի քաղաքականությունը կամ կազմեն դրա մի մասը: Այս փաստաթուղթը պետք է ապաստարանի բոլոր բնակիչներին ներկայացվի և բացատրվի ապաստարանում բնակվելու առաջին իսկ օրերի ընթացքում:

Առաջին շփման ժամանակ պարտադիր չէ ապաստարանից հեռացվելու պայմաններով անցնել, քանի որ դա կարող է մեկուսացնել, օտարացնել կնոջը և ստեղծել իշխանության և վերահսկողության զգացողություն՝ հատուկ բռնարար հարաբերությանը, որից կինը նոր է հեռացել: Կենտրոնացեք պաշտպանության, ոչ թե՛ կանոնների վրա, պաշտպանիչ ժամանակի մեծ մասը չպետք է տրամադրվի կանոնների հարկադրմանը: Դա վտանգում է անձնակազմի անդամների միջև ու ապաստարանած կանանց հետ վստահության հարաբերությունը:

Կանոնապանց անձանց հետևելը կարող է օգնել բացահայտել ավելի մեծ երևույթներ (դեպրեսիա, տագնապ, դադարի անհրաժեշտություն): Դա կարող է հնարավորություն ստեղծել, որպեսզի բռնության ենթարկված կնոջ հետ աշխատանք տարվի իր նպատակներին հասնելու ուղղությամբ:



«Իրավունքներ և պարտականություններ» բուկլետը (հայերեն) հասանելի է Կանանց աջակցման կենտրոնում ըստ պատվերի:

5.5 ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ ԱՆԴՐԱԴԱՐՁԻ ՇՐՋԱՆ

Առաջին փուլում՝ անդրադարձի (ռեֆլեքսիայի) շրջանում, կինը ծանոթանում է ապաստարանի և անձնակազմի հետ, վերականգնվում է իր տրավմատիկ վիճակից, ընտելանում է ապաստարանի կյանքին, անդրադառնում է իր կարիքներին և մտահոգություններին և սկսում իր ապագա քայլերի մասին որոշումներ կայացնել: Այս շրջանը կարող է մի քանի ժամից մինչև մի քանի օր կամ նույնիսկ շաբաթ տևել:

Այս շրջանում կինը պետք է որոշի՝ մնալ արդյոք ապաստարանում, թե ուրիշ տեղ գնալ, կողակցից ժամանակավորապես հեռանալ, թե՛ ընդմիջտ: Կարևոր է, որ խորհրդատուն մի քանի անգամ և հստակ նշի, որ որոշումը կինը պետք է կայացնի և որ նա ունի կողակցի հետ մնալու, ինչպես նաև նրան լքելու իրավունք: Շատ կարևոր է նաև, որ կինն իմանա, որ միշտ կարող է ապաստարան վերադառնալ, նույնիսկ եթե ընթացքում տուն է գնացել: Եթե կինը որոշում է վերադառնալ կողակցի մոտ, անհրաժեշտ է անվտանգության հարցը քննարկել և նրա հետ մեկտեղ մշակել ռազմավարություն, թե ինչպես նա կապաշտպանի ինքն իրեն և երեխաներին և ինչպես ու որտեղից աջակցություն կկարողանա ստանալ:

Որոշ կանայք հարցնում են՝ արդյոք կարող է բռնի տղամարդը փոխվել, կդադարի՞ արդյոք բռնությունը: Դրա համար է կարևոր, որ նրանք հասկանան ընտանեկան բռնության դինամիկան և փաստերը: Այս փուլում հատկապես կարևոր է հետևել, որ կինը ստանա ինտենսիվ և մանրակրկիտ կերպ մտածված խորհրդատվություն, որովհետև այս փուլում է, որ կանանց մեծ մասը որոշում են՝ վերադառնալ արդյոք իրենց կողակիցների մոտ:

5.6 ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԶՈՐԱՑՈՒՄ

Անհատական խորհրդատվության ժամանակ գնահատվում են կնոջ բոլոր կարիքները և մտահոգությունները, սահմանվում են առաջնահերթությունները: Կնոջը խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու անհատական գրաֆիկ է կազմվում: Պրոֆեսիոնալ աշխատակցի գործը ենթադրում է կնոջ հետ քննարկել հնարավոր բոլոր տարբերակները և նրան աջակցել իր նպատակներին հասնելու հարցում:

Կանանց պետք է իրենց ընտրությունը կատարելու աջակցություն: Նրանք պետք է աջակցություն ստանան զործընթացի ժամանակ և իրենց ինքնագնահատականը և ինքնորոշվածությունը բարձրացնելու մեջ: Կարևոր է կնոջը տալ զգացում, որ ինքն ունի ընտրություն կատարելու ուժ և իրավունք ու ինքը կարող է վճռել իր կյանքի որոշումները: Նա պետք է նաև ունենա բռնության իր փորձառության մասին հաճախ խոսելու և դրան անդրադարձ կատարելու (եթե և երբ ցանկություն ունենա) հնարավորություն: Մենք պետք է հաշվի առնենք, որ բռնության զոհ կանանց երբեմն երկար ժամանակ է պետք բռնության փորձառության, հատկապես սեռական բռնության փորձառության մասին խոսելու բավականաչափ վստահություն և քաջություն հավաքելու համար:

Խորհրդատուի օգնությամբ կինը կարողանում է հասկանալ ինչ ռազմավարություններ է օգտագործել իր կողակիցը իր վրա իշխանություն և վերահսկողություն սահմանելու նպատակով, և այդպիսով նա կարողանում է դիմադրելու և ինքնապաշտպանության ռազմավարություններ մշակել:

Սոցիալական աշխատողները պետք է կնոջը նաև վարչական մարմինների հետ առնչվելու գործնական աջակցություն տան և նրան ուղեկցեն ոստիկանություն, դատական նիստերի,

Հասարակության մեջ կնոջ դերի, գենդերային կարծրատիպերի և գենդերային (ան) հավասարության մասին և նման թեմաներով խոսելը և իր իսկ դերի՝ որպես կնոջ մասին իրավեկությունը բարձրացնելը նույնպես կարող է օգտակար լինել:

Նույնիսկ հաշվի առնելով, որ մեր նպատակը կանանց և երեխաներին հպրացնելն է, կա վտանգ, որ մենք գործենք կնոջ փոխարեն, ոչ թե՛ նրա հետ: Սա գալիս է օգնություն փնտրող կնոջ և նրա խորհրդատուի միջև ուժային անխուսափելի անհավասարությունից: Հետևաբար կարևոր է, որ խորհրդատուն միշտ անդրադառնա հարաբերություններին և ապահովի, որ կինը աջակցություն չգա, ոչ թե իր զորության կորուստ: Անձնակազմի և խորհրդատուների կողմից տրավման հաշվի առնող աջակցություն տալը առաջնային կարևորություն ունի: Խորհրդատուները պետք է տրավմայի և վերականգնման գործընթացի մասին վերապատրաստում անցած լինեն: Աջակցող անձնակազմը պետք է հասկանա ինչպես է տրավման ապրում զոհի վարքագծի վրա: Տրավմայի մասին հավելյալ ինֆորմացիայի համար կարող եք կարդալ «Ընտանեկան բռնության ծառայություններ տրամադրողների ուղեցույցը»:



5.7 ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կանանց ապաստարանները առաջարկում են խմբային աշխատանքի տարբեր ձևեր: Խմբային աշխատանքը արժեքավոր համալրում է անհատական խորհրդատվությանը, քանի որ դա կանանց թույլ է տալիս գիտակցել, որ նրանք միակը չեն, ովքեր իրենց կողակցի կողմից բռնության են ենթարկվում:

Քննարկման (ռեֆլեքսիայի) խմբերը և թեմատիկ խմբերը կանանց համար տարածություն են բացում տարբեր թեմաներով՝ բռնության, նաև իրենց կապ ունեցող որևէ այլ թեմայի շուրջ քննարկման համար: Անհատական խորհրդատվությանը համալրելով՝ խմբերը օգնում են ապաստարանում գտնվող կանանց ձանաչել իրենք իրենց և սոցիալական շրջապատը: Նպատակը ինքնավստահության վերականգնումն է ու այլ կանանց հետ շփումները խրախուսելը: Հետևաբար կարևոր է, որ խմբի անդամներն իրենց պատասխանատու չգան խմբային աշխատանքի հաջողության համար: Խմբային աշխատանքի մեկ այլ հատուկ ձև են խմբերը, որտեղ կանայք քննարկում են իրենց մայրական դերը, երեխաներին մեծացնելու խնդիրները և այլն: **Խմբային աշխատանք կարող է տարվել հետևյալ ուղղություններով՝ ընտանեկան բռնության, ծնողական հմտությունների, առողջ սննդակարգի, կանանց առողջության, ինքնագնահատականի ձևավորման, բյուջեի պլանավորման, դեպրեսիայի դեմ և հանգստանալու նպատակով յոգայի: Խմբային աշխատանքի մեկ այլ ձև ստեղծագործական խումբն է, որտեղ կանայք ունեն նկարելու, երգելու, դերասանության և այլ միջոցներով ինքնարտահայտվելու հնարավորություն:**

Խմբային աշխատանքները պետք է վարի ապաստարանի որևէ աշխատակից կամ խորհրդատու: Խմբային աշխատանքը ապաստարանում բնակվող կնոջ հետ համատեղ վարելը նույնպես լավ ձև է: **Այս խմբերում պետք է հարգվի կնոջ (անհատական) ձայնը/կարծիքը: Խմբային աշխատանքը վարողները պետք է համապատասխան վերապատրաստում անցնեն, որպեսզի չգայուն լինեն ընտանեկան բռնության զոհերի և հատկապես լրջորեն տրավմա կրող կանանց կարիքների նկատմամբ:**

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ/ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ











Բոլոր խորհրդատվական և ապաստարանային աշխատանքների առաջնահերթ խնդիրը պետք է կանանց և նրանց երեխաների անվտանգության ապահովումը լինի:

Անվտանգության դրույթներին ավելի մանրամասն ծանոթանալու համար տե՛ս «ՍԱԸ» ուղղեցույցը՝ պատրաստված Կանանց աջակցման կենտրոնի կողմից: Այն անդրադառնում է անվտանգության պատշաճ միջոցներին, որոնք պետք է նախատեսվեն և իրականացվեն անկախ կնոջ ապաստարանում մնալու կամ չմնալու որոշումից: Ապաստարանի ներսում անվտանգության մասին կարելի է կարդալ **8-րդ գլխում:**

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բռնության ենթարկված կանայք պետք է տեղյակ լինեն իրենց օրինական իրավունքներից և հնարավորություններից: Ամեն ապաստարան պետք է իրավական տեղեկատվություն և դատական գործընթացներում աջակցություն տրամադրի:

Իրավական տեղեկատվությունը ներառում է՝

-  Բռնությունից անմիջապես և/կամ երկարաժամկետ պաշտպանության մասին հատուկ օրենքները
-  Ոստիկանական ընթացակարգերը
-  Դատական կարգադրությունները
-  Ամուսնության և ամուսնալուծության մասին օրենքները
-  Ծնողական/խնամակալության իրավունքները
-  Միգրացիոն օրենքները
-  Քրեական օրենսդրությունը
-  Բռնությունից տուժածի իրավունքները և փոխհատուցման կարգը՝ ըստ քրեական և քաղաքացիական օրենսդրության
-  Սոցիալական ապահովության նպաստներ
-  Սեփականության իրավունքները և այլն

Սոցիալական աշխատողները պետք է կանանց ուղեկցեն նաև ոստիկանություն, դատարան և այլ իրավապահ հաստատություններ և օգնեն կանանց պատրաստվել իրավական ընթացակարգերին և դատավարություններին՝ օրինակ՝ իրադարձությունների հերթականությունը հաղորդելով կամ դերախաղեր կազմակերպելով, որոնց ժամանակ կինը կփորձի վկայություն տալու գործընթացը: Կարևոր է քրեական դատարավարության ժամանակ կնոջն ուղեկցելը, որպեսզի կանխարգելի նրա կողմից երկրորդային տրավմա ապրելը:

Կարևոր է, որ բարդ դատավարությունների ժամանակ կնոջը փաստաբան ներկայացնի: Խորհուրդ է տրվում կին փաստաբանների ընտրել, ովքեր կիսում են ընտանեկան բռնության խնդիրը, իրենց վստահորդին ներկայացնելին՝ չզայուն մոտեցում են որդեգրում և պատրաստ են գործը ստանցնել առանց վարձատվության:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երբ կինը հասնում է ապաստարան, կարևոր է նրան ֆինանսապես աջակցել: Եթե կինը սեփական եկամուտ չունի, առաջին քայլը միջոցներ գտնելու հարցում օգնելն է: Շատ երկրներում կանայք, ովքեր չեն կարողանում իրենց ֆինանսապես ապահովել, սոցիալական աջակցության իրավունք են ստանում: Կնոջը առանց ժամանակատար վարչարարական ուշացումների սոցիալական աջակցություն ստանալու հարցում օգնելը ապաստարանի կարևոր գործառնություններից է:

Ապաստարանը ծառայում է նաև կանանց՝ իրենց իրավունքները իրացնելու և ֆինանսական աջակցությունն ապահովելու հարցում (օրինակ՝ իր և երեխաների համար ալիմենտ ստանալու, գործավրկության նպաստի, երեխայի խնամքի նպաստների և այլն):

Ապաստարանը պետք է հետևի, որ կնոջ կողակիցը նրա ֆինանսները տնօրինելու հնարավորություն չունենա: Եթե երեխաներին հասնող պետական նպաստները փոխանցվում են բռնարարի անունով, փոփոխություններ պետք է կատարվեն և նպաստը պետք է փոխանցվի կնոջը:

ԲՆԱՏԱՆԵԿԱՆ ԲՐՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՅՔ ԵՎ ԿԱՏԿԱՊԵՆ՝ ՖՈՐՏ ԵՐԵՒՄՆԵՐ ՈՒՆԵԳՈՂ ԿԱՆԱՅՔ ԻՆՏԵՆՍԻՎ ԱՌԵՐԵՍՎՈՒՄ ԵՆ ԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Ընտանեկան բռնության ենթարկված կանայք և հատկապես՝ փոքր երեխաներ ունեցող կանայք հաճախ առերեսվում են աղքատության հեռանկարին, եթե բռնարարները իրենց վերահսկողական ռազմավարության շրջանակներում արգելք են դնում կանանց դրամի կամ անկախ եկամուտի հասանելիության վրա:

Եթե ինչ-ինչ պատճառներով կանայք չեն կարող մնալ կամ վերադառնալ ընտանեկան տուն, անհրաժեշտ է նրանց աջակցել բնակարանային հարցերում: Խորհուրդ է տրվում սերտորեն համագործակցել տեղական իշխանությունների և բնակարանային գրասենյակների հետ՝ բռնության ենթարկված կանանց վիճակի մասին իրազեկվածությունը բարձրացնելու համար: Այդ պետական մարմինները պետք է պատասխանատու լինեն, որ այդպիսի կանանց համար անմիջապես հասանելի դարձնեն ցածր վարձավճարով ժամանակավոր կացություն:

ԱՌՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երբ կինն ընդունվում է ապաստարան, հնարավոր է, որ նա անմիջապես բուժօգնության կարիք ունենա: Ապաստարանի աշխատակիցները պետք է ուղեկցեն նրան բժշկական ծառայություններ և նրա բոլոր վնասվածքների մասին բժշկական փաստաթղթեր վերցնեն:

Դատաբժշկական փաստաթղթերը կարող են դատարանում որպես ապացույց ծառայել: Հայաստանում շատ կանայք իրենց կողակիցներից սեռավարակներ են ձեռք բերում և անտեղյակ մնում դրա մասին: Խորհուրդ է տրվում գինեկոլոգիական ստուգումներ անցնել: Շատ կանայք նաև ստացած են լինում գլխի վնասվածքներ, սրան նույնպես հատուկ ուշադրություն է պետք դարձնել: Ապաստարանը կարող է միայն առաջնային բուժօգնություն տրամադրել: Երեխաների պատվաստումները պետք է ստուգվեն: Երեխաները հաճախ ունենում են առողջական խնդիրներ բռնարարի հարկադրած պամաններում ապրելու արդյունքում: Տրավմայի մեջ

ապրող շատ կանայք շատ այլ հիվանդություններ են ձեռք բերում, և ապաստարանի սոցիալական աշխատողները պետք է ամեն ինչ անեն նրանց աջակցելու համար, այնուամենայնիվ ամեն մեկի դեպքը պետք է առանձին գնահատել և որոշել հնարավոր է ֆինանսավորել, թե ոչ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ապաստարանի կարևոր գործառնություններից է աշխատանքի հետ կապված կանանց աջակցելը, իրենց աշխատատեղը պահպանելու կամ աշխատանք գտնելու կամ մասնագիտական դասընթացի ծրագրում ընդգրկվելու հարցերում օգնելը:






Բռնությունը կանանց աշխատանք ունենալուն և հավասարությանը խոչընդոտում է: Օրինակ՝ կինը կարող է իր աշխատանքը կորցնել, որովհետև իր բռնի կողակիցը աշխատանքի վայրում հետապնդում է իրեն կամ թույլ չի տալիս աշխատանքի գնալ: Հաճախ պատահում է նաև, որ կանայք աշխատանքից հեռանում են կամ հեռացվում, որովհետև ծեծի ենթարկվելուց հետո չեն կարողանում աշխատանքի ներկայանալ: Հետևաբար, աշխատանքի հարցում ապաստարանի կամ խորհրդատվական կենտրոնի աջակցությունը շատ կարևոր է: Ապաստարանի մեկ այլ գործառնություն է խրախուսել ու աջակցել գործազուրկ կանանց աշխատանք գտնել և իրենց որակավորումը բարձրացնել:

Կանանց կարելի է աջակցել նաև՝ աշխատանքի դիմելու ժամանակ հարցազրույցի պատրաստվելու հարցում՝ օրինակ՝ դերախաղ կապմակերպելով: Ապաստարանները սերտորեն համագործակցում են նաև աշխատանքային ծրագրերի և մասնագիտական ուսումնական կենտրոնների հետ:



ԱՊԱՍՏԱՐԱՆԻՑ ՀԵՌԱՆԱԸ

Ամեն կնոջ համար ապաստարանից հեռանալը խոշոր քայլ է: Դա նոր կյանքի սկիզբն է և պետք է լավ պլանավորված լինի: Ապաստարանի աշխատակիցները պետք է կնոջը օգնեն, որ ապաստարանից դուրս գալիս նա և իր երեխաները (իդեալական տարբերակում) ունենան

-  կայուն եկամուտ՝ աշխատավարձ և/կամ սոցիալական նպաստ,
-  անվտանգ բնակարան (ժամանակավոր կացարան կամ սեփական տուն/բնակարան),
-  երեխաների համար պայմաններ՝ մանկապարտեզ, դպրոց, բժշկական օգնություն և այլ անհրաժեշտ ծառայություններ,
-  անվտանգության պլան՝ անվտանգության պլանի մշակում՝ հաշվի առնելով կանանց և երեխաների կյանքի նոր պայմանները,
-  ապաստարանի կամ այլ ծառայությունների կողմից հետագա աջակցության և խորհրդատվության կարգավորում (կնոջ և նրա երեխաների համար)

Երբ կինը հեռանում է ապաստարանից, նրան պետք է հիշեցնել ապաստարանում գտնվող այլ կանանց, երեխաների և անձնակազմի մասին տեղեկատվություն չփոխանցել և ապաստարանի հասցեն գաղտնի պահել:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՍՏԱՐԱՆԻՑ ՀԵՏՈՒ

Ապաստարանում գտնվելուց հետո կնոջը և նրա երեխաներին անհրաժեշտ բոլոր ծառայությունները պետք է շարունակեն հասանելի լինել: Աջակցությունը կապմակերպելու տարբեր ձևեր կան: **Այն երկրներում, որտեղ ապաստարաններից բացի գոյություն ունեն նաև ընտանեկան բռնությունից տուժածների ձգնաժամային կենտրոններ, կանայք կարող են իրավական հարցերի կամ այլ կոնկրետ խնդիրների հարցում շարունակել աջակցություն ստանալ կամ վերադառնալ ամեն անգամ, երբ խնդիր են ունենում:**

Երբ կինը չունի այս ծառայություններից օգտվելու հնարավորություն, կարևոր է նրան տեղեկացնել իր բնակության վայրում առկա ծառայությունների մասին և համագործակցել նրանց հետ:



6. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ապաստարանում բնակվելու ընթացքում բռնության ենթարկված կանանց երեխաներին հատուկ ուշադրություն է հարկավոր: Անհրաժեշտ է որակավորված անձնակազմ և խաղասենյակներ: Երեխաների խնամքի համար պետք է բավարար ֆինանսավորում հատկացվի: **Հաճախ նրանց պետք է լինում հոգեբանական աջակցություն կամ ռելաքսացիոն թերապիա, որը կարող է կատարվել մոր թույլտվությամբ:**

Ապաստարան եկող երեխաները բռնության ականատես և հաճախ նաև բռնության են ենթարկված լինում երկուսն էլ տրավմատիկ փորձառություն են: Հետևաբար նրանց կարիքներին հատուկ ուշադրություն է հարկավոր դարձնել: Հետազոտությունները նաև ցույց են տալիս, որ ավելի մեծ է հավանականությունը, որ ընտանեկան բռնության մեջ մեծացած աղջիկները՝ բռնության զոհ, իսկ տղաները՝ բռնարար կդառնան մեծահասակ կյանքում, քան՝ ոչ բռնի ընտանիքում մեծացածները: Ընտանեկան բռնությունը ձեռքբերովի վարքագիծ է և վնասակար է երեխայի հոգեկան աշխարհի համար:

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ապահովել երեխաների ֆիզիկական և էմոցիոնալ անվտանգությունը և ուժեղացնել նրանց ապահովության պգացողությունը: Իրենց մայրերին ապաստարանում ուղեկցող երեխաները կարող են վնասվածքներ և տարբեր առողջական խնդիրներ ունենալ: Հնարավոր է՝ բժշկական օգնության դիմելու կարիք լինի: Անվտանգության պլանավորումը նույնպես կարևոր հարց է ապաստարանում երեխաներին տրամադրվող ծառայությունների մեջ:

Բարելավել երեխաների հոգեկան և հուլական առողջությունը և բարեկեցությունը:

Սա երեխաների ծառայությունների երկարաժամկետ նպատակներից է, բայց կարող է ձգնաժամային իրավիճակներում առաջնահերթ դառնալ, երբ ինքնավնասման վարքագծի նշաններ են արտահայտվում: Երեխաների հուլական ու հոգեկան առողջությունը նպաստող աջակցության միջոցով հնարավոր է նաև ամրապնդել նրանց ապահովության պգացողությունը:

Օգնել երեխաներին վերագտնել իրենց մանկությունը:

Հնարավոր է՝ ընտանեկան բռնության ենթարկված երեխաները մեծահասակի դեր ստանձնեն կամ տագնապալի կամ լարված պզան, ինչն իրենց ապրումների հետևանք է: Խաղալու, հանգստանալու և պարզապես վարձանալու միջոցով նրանք կարող են կրկին վայելել իրենց մանկությունը:

Աջակցել մայր-երեխա հարաբերություններին:

Երեխաներին բռնության հետևանքներից վերականգնվելու հարցում լավագույն աջակցություն տրամադրողները մայրերն են: Որպես երեխայի կարիքները հոգալու մի ձև պետք է հաշվի առնվի մոր հետ համատեղ աշխատանքը:






ՄԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Բազմակողմանի և բարձրորակ ծառայություններ:

Երեխաների համար նախատեսված ծառայությունները պետք է ներառեն ձգնաժամային միջամտությունը, սոցիալ-հոգեբանական, մանկավարժական, թերապևտիկ և խմբային դինամիկայի աշխատանքներ:

Բռնության ակնատես եղած կամ բռնության ենթարկված երեխաները հաճախ տառապում են ինքնագնահատականի պակասից, շատ դեպքերում՝ նաև տագնապներից և ագրեսիայից: Հնարավոր է՝ որոշ երեխաներ ագրեսիվ վարքագիծ դրսևորեն իրենք իրենց նկատմամբ: Երեխաների մեծ մասը կարողությունների անկման և դանդաղ վարգացման նշաններ են ցուցաբերում: Նրանց սոցիալական ունակությունները նույնպես կարող են խաթարված լինել: Հաճախ կարող են արտահայտվել փսիխոսոմատիկ (թարգ. հոգեմարմնական) ախտանշաններ (քնի խանգարում, մղձավանջներ, փորացավեր և գլխացավեր, սրտխառնոց, գիշերային անմիզապահություն, ուտելու խանգարումներ, կակապ, վախեր և այլն):

Ապաստարան տեղափոխվելը երեխաների համար նոր մարտահրավերներ և բարդություններ է առաջացնում: Երբ կանայք ապաստարան են փնտրում, նրանց երեխաները կյանքի նույն աստիճանի ձգնաժամ և խաթարում են ապրում: Ապաստարանում աշխատող մասնագետները պետք է նկատեն ապաստարանում բնակվող երեխաների մոտ հուզական և ֆիզիկական դժվարությունները: Առողջության խնդիրները, ինչպես նաև վախի, կորստի, պայրույթի, տխրության, շփոթմունքի, մեղքի պզացումի և հարմարվելու հետ կապված բազում այլ խնդիրներ առաջանում են ապաստարանի հետևյալ պայմանների արդյունքում (Peled / Davis 1995)՝

-  թարմ ձգնաժամ տանը բռնություն տեսնելու արդյունքում,
-  հորից, մեծ ընտանիքից կամ ընկերներից, դպրոցից, տնից բաժանվելու արդյունքում՝ հաղթահարելու նորմալ ձևերի և աջակցության համակարգերի խախտում,
-  նոր ապրելակերպին արագ հարմարվելու պահանջը,
-  կացության դժվար պայմաններ, այդ թվում՝ առանձնության պակաս և այլ բնակիչների կողմից դրսևորվող բարձր հուզականություն,
-  մայրերի հուզական և/կամ ֆիզիկական բացակայությունը, որը հետևանք է նրանց իսկ հուզական շփոթության և ընտանեկան կյանքը վերակազմավորելու արդյունքում առաջացած գործնական պահանջների:





Ապաստարաններում բռնության հետևանքները հաղթահարելու շուրջ երեխաների հետ աշխատելիս կարևոր է հաշվի առնել նրանց անհատականությունը և եզակիությունը, ընդ որում՝ նաև բոլորի մոտ հանդիպող փորձառությունը և կարիքները:

Ապաստարանում բնակվելու ժամանակ երեխաների կարիքները հաճախ պահանջում են ձգնաժամային միջամտություն և շարունակական հուզական աջակցություն, բժշկական ուշադրություն, կրթական համակարգերի հետ համագործակցություն, իրավաբանական և երեխաների պաշտպանության ծառայություններ և ակադեմիական օգնություն և մայրերի ծնողական հմտությունները պարզացնող աշխատանքներ:





Ընդունելություն

Սովորաբար կինն է ապաստարան դիմողը, իսկ երեխաները ուղեկցում են իրենց մայրերին: Ընդունելության փուլում հարկավոր է մոր և երեխայի նախնական գնահատում: Կարևոր է նաև երեխային ապաստարանում կյանքին և սպասվող փոփոխություններին նախապատրաստելը՝ այդպիսով երեխային ապահովության պզացողություն փոխանցելով:

Նախնական գնահատման հարցեր.

-  Սահմանել իրավիճակի արտակարգության աստիճանը և ձգնաժամային միջամտության կարիքը:
-  Պարզել երեխաների և մայրերի կարիքները՝ նրանց անվտանգության պլանները մշակելու նպատակով:
-  Գնահատել բռնության ազդեցությունը երեխաների վրա:
-  Գնահատել պաշտպանական գործոնները, երեխաների և մայրերի՝ պաշտպանության, առողջության և ապահովության ռեսուրսները:

Երեխաներին ապաստարանային կյանքի փորձառությանը պատրաստելը կարող է ուղեկցվել՝

-  Ապաստարանի ձգտումները, նպատակները և գործունեությունը բացատրելով
-  Նրանց վստահեցնելով, որ ապաստարանը ապահով վայր է
-  Երեխաներին ապաստարանի կանոններին և գաղտնիության քաղաքականությանը ծանոթացնելով
-  **15 և ավելի բարձր տարիքի տղաների համար այլ հնարավորություններ պետք է ստեղծվեն:**


Կանանց աջակցման կենտրոնում առկա են կանանց և երեխաների ընդունելության ձևաթղթերի օրինակներ և «Ռիսկի գնահատման» հարցաթերթիկներ:




Անհատական աշխատանք

(Մոր թույլտվությամբ) մանկական հոգեբանի հետ անհատական խորհրդատվությունը երեխայի համար աջակցող միջավայր է ստեղծում և թույլ է տալիս մեծահասակի հետ ստեղծել վստահության վրա հիմնված հարաբերություններ, որոնք կարող են ապագայում հարաբերությունների համար օրինակելի լինել: Այս հանդիպումները կենտրոնանում են երեխաների զգացմունքների (վախ, շփոթություն, միայնություն, մեղքի զգացում, վայրույթ) և կարիքների վրա: Խորհրդատուն օգնում է երեխաներին ճանաչել իրենց փորձը և գիտակցել, որ իրենք մեղավոր չեն մեծահասակների բռնության մեջ: Երեխայի ինքնագնահատականը բարձրացնելը այս աշխատանքի կարևոր խնդիրներից է:

Երեխաների անհատական խորհրդատվության համար առաջարկություններ ստեղծեք ապահով հոգեթերապևտիկ մթնոլորտ՝

 Երեխային հստակ տեղեկացնելով, որ նա ստիպված չէ խոսել այն բաներից, որոնցից չի ցանկանում խոսել

 գաղտնիության հարցը բացատրելով:

Հենց սկզբից անդրադարձեք անվտանգության պլանավորմանը: Երեխաների անվտանգության պլանները պետք է լինեն իրատեսական, պարզ և տարիքին համապատասխան: Երեխաներին պորացնող հնարավոր անվտանգության ռազմավարություններից են՝

1. ինչպես նախորդ բռնության իրավիճակներից խուսափել,
2. ինչպես վանգեր կատարել,
3. ինչպես արտակարգ իրավիճակում աջակցություն գտնել,
4. փախուստի պլաններ,
5. ինչ անել առևանգվելու պարագայում:

Անվտանգության պլանները պետք է մշակվեն մոր և երեխայի հետ համատեղ և պետք է փորձարկվեն:

Խորհրդատվության ավարտի թեմային պետք է անդրադառնալ խորհրդատվության գործընթացի սկզբում: Բաժանությունը քննարկելը և դրան պատրաստվելը կարևոր հարց է բռնության ենթարկված երեխաների համար:

Երեխաներին միշտ չէ, որ ֆորմալ խորհրդատվություն է պետք, երբեմն նրանց պարզապես պետք է ոչ պաշտոնական հանդիպումներ ունենալ մեծահասակի հետ: Երբ կա մեկը, ով հաճույքով ժամանակ կանցկացնի իրենց հետ, կարող է երջանիկ և դրական փորձառություն լինել երեխաների համար:

Երեխայի հետ աշխատանքը և խորհրդատվությունը փոփոխվում է՝ ըստ երեխայի տարիքի: Դեռահասակների հետ կարելի է պլանավորել, թե ինչպես նրանք կարող են կրկին ապահով զգալ և ինչ կառույցների կարող են իրենք կամ իրենց մայրերը դիմել: Երիտասարդների հետ աշխատելիս՝ կարելի է անդրադառնալ նրանց վերաբերմունքին ընկերությանը և հարաբերություններին, թե ինչ կարծիքի են նրանք ընտանեկան բռնության մասին: Օգտակար կարող է լինել քննարկումը ընտանեկան բռնության և սոցիալական փոփոխության նկատմամբ վերաբերմունքի մասին, որ դա հանցագործություն է, որ ոչ ոք չունի ուրիշի նկատմամբ բռնանալու իրավունք (Mullender / Debbonnaire 2000):

Խմբային աշխատանք

Խմբային աշխատանքը ճանաչված է որպես ընտանեկան բռնության ենթարկված երեխաների և երիտասարդների հետ աշխատանքի արդյունավետ միջոց: Ապաստարանում կարելի է կազմակերպել ֆորմալ կամ ոչ ֆորմալ խմբային հանդիպումներ: Խմբային աշխատանքի միջոցով ստեղծվում է աջակցող, ընդունող միջավայր, ինչը երեխաներին սովորեցնում է միմյանց աջակցելու, շփվելու և իրենց զգացմունքները, մտքերը և կարիքները նոր և արդյունավետ ձևերով հաղորդելու ձևեր:

Երեխաների խմբերի մեծ մասի նպատակների մեջ մտնում է՝ երեխաներին օգնելը սահմանել բռնությունը և դրա համար պատասխանատվությունը, օգնել արտահայտել իրենց զգացմունքները (այդ թվում՝ վայրույթը), հաղորդակցության և այլ հմտություններ վարձաքանել, ինքնագնահատականը բարձրացնել, վարձաքանել սոցիալական աջակցության կապեր, անվտանգության պլաններ մշակել և վայելել դրական ապրումները:

Կարող են լինել կրթական, տեղեկատվական կամ կանխարգելիչ խմբեր: Խմբային աշխատանքները պետք է համապատասխանեն մասնակիցների տարիքին և վարձաքան մակարդակին և պետք է բավարարեն տարբեր մշակույթների կամ հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքները:



Համատեղ աշխատանք մայրերի հետ

Ապաստարանում երեխաների համար ծառայությունները չպետք է սահմանափակվեն երեխաների հետ գործնական աշխատանքով մայրերի հետ աշխատանքը պետք է **հավասարապես կարևոր համարվի, որովհետև նրանք են, որ կարող են երեխաների կարիքները լավագույնս հոգալ: Ընդհանրապես, ապաստարան տեղափոխված տրավմա կամ դեպրեսիա ունեցող կանայք կամ անտարբեր են կամ շատ ագրեսիվ են իրենց երեխաների հանդեպ և գործադրում են ֆիզիկական պատիժները որպես կարգապահության միակ միջոց: Հետևաբար, մայրերին պետք է սովորեցնել հատուկ ծնողական հմտություններ: Որոշ դեպքերում մանկական աշխատողները կարող են մոր հետ անհատական աշխատանք կատարել նման պայմանավորվածությունը կարելի կազմակերպել ըստ մոր կամ հոգեբան-խորհրդատուի ցանկության:** Նպատակը երեխաների կարիքների, վախերի և խնդիրների մասին հոգալն է, երբ երեխաներն են խնդրում կամ իրավիճակն է դա պահանջում (օրինակ՝ բռնություն ապաստարանում):

Խմբային աշխատանքը մայրերի հետ համագործակցելու մեկ այլ եղանակ է (մայրերի խումբ), որտեղ մանկական հոգեբան-խորհրդատուները, ըստ երեխաների տարիքային առանձնահատկության, ունեն նրանց տեսակետները մայրերին փոխանցելու հնարավորություն՝ գաղտնիության սահմանափակումները հաշվի առնելով: Ինչ վերաբերում է մայրերի հետ աշխատանքում օգտագործվող մեթոդներին (աջակցող, թե ճակատային), կարելի է օգտվել ծնողական հմտությունների շուրջ խորհրդատվական հանդիպումներից, որոնց ընթացքում կարելի է հաղորդել, թե ինչ կարիքներ են ունենում երեխաները և

պաշտպանել նրանց շահերը: **Ծնողական հմտությունների դասընթացներ են առաջարկում Փրկենք երեխաներին (Save the Children) կազմակերպությունը, Յունիսեֆը և Կանանց աջակցման կենտրոնը: Վերջինս պատրաստել է նաև երեխաներին վերաբերող հայերեն լեզվով գրքույկ՝ նախատեսված ընտանեկան բռնություն ունեցող ընտանիքներում ծնողների համար: Այն հասանելի է Կանանց աջակցման կենտրոնում:**

Խաղային թերապիա

Խաղային թերապիան արժեքավոր մեթոդ է՝ պարզացման կամ հույական խոչընդոտների պատճառով իրենց պզգամունքները, մտքերը և փորձառությունները բառերով արտահայտելուն անկարող երեխաների հետ աշխատելիս: Խաղը երեխայի հաղորդակցության բնական միջոցն է, որը նա օգտագործում է բռնության մասին իր վախերը և տազնապները կառավարելու, իր հետ պատահածի մասին արտահայտվելու և հարաբերությունների մասին իր գիտելիքները և ըմբռնումն արտահայտելու համար: Խաղային թերապիան երեխային թույլ է տալիս խորհրդանշականորեն ներկայացնել վախ և տազնապ առաջացնող դեպքերը և օգնում է երեխային շարժվել դեպի դրանց լուծումը և վախ առաջացնող փորձառության ինտեգրումը (Urquiza և Winn, 1994, էջ 59): **Խաղային թերապիան կարող է նաև օգտագործվել անհատական և խմբային խորհրդատվության ժամանակ:**

Արտ թերապիա

Արտ թերապիան հաղորդակցության, գնահատման և բուժման կարևոր մեթոդ է: Երեխան արվեստը օգտագործում է՝ արտահայտելու այն պզգամունքները և հույվերը, որոնք բառերով չի կարողանում արտահայտել: Նկարելը, ներկելը, քանդակելը, պոեզիան, թատրոնը, երաժշտությունը կամ հեքիաթ պատմելը կարող են երեխաներին օգնել կուտակված լարվածություններից և տազնապներից ապաստվել: Անհատական կամ խմբային աշխատանքի համար օգտակար կարող է լինել այս մեթոդը:

Ժամանցի և կրթական միջոցառումներ





Ոչ ֆորմալ միջավայրում անցկացվող խաղային և ժամանցային միջոցառումները, որոնք չեն կենտրոնանում բռնության վրա, լավ հնարավորություն են երեխաների միջև միմյանց աջակցելու մշակույթ ձևավորելու համար: Կարելի է կազմակերպել սպորտային, քայլքի, պարերի և այլ միջոցառումներ:

Հնարավոր է՝ որոշ երեխաներ ունենան կրթական աջակցության կարիք դպրոցում անհրաժեշտ իրենց կարողությունները բարելավելու համար:

Աջակցություն դատական միջամտությունների ժամանակ

Դատավարությունների ժամանակ վկայություն տվող երեխաներին շատ օգտակար է դատական ընթացակարգերին ծանոթանալը մասնագետի (հոգեբան, կլինիկական սոցիալական աշխատող) օգնությամբ, ով կարող է երեխային պատրաստել դատարանում վկայությանը:

Խորհրդատվություններ դատական լուսմների ընթացքում երեխաներին աջակցելու համար՝

-  լուսմներից մոտ մեկ շաբաթ առաջ երեխային ուղեկցեք դատարանի շենք,
-  տարեք երեխային դատավարության սենյակ, որտեղ նա վկայություն է տալու և թույլ տվեք նրան նստել վկայի աթոռին,
-  պատմեք երեխային ամեն անձի դերի մասին և թե՛ ով որտեղ է նստելու կամ կանգնելու,
-  երեխային տվեք անհրաժեշտ հույական և տեղեկատվական աջակցությունը, որ նա հնարավորինս հարմարվի դատավարության այս հատվածին:





ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Մասնագիտական անձնակազմ

Երեխաների խնամքով զբաղվող աշխատակիցները պետք է ունենան սոցիալ-հոգեբանական համապատասխան վերապատրաստում, ինչպես նաև՝ մասնագիտացած որակավորում: Ապաստարանում երեխաներին աջակցելու ուղղությամբ կարող են աշխատել մանկական հոգեբանները, երեխաների խնամքով զբաղվող աշխատակիցները և մանկավարժ փորձագետները: Կամավորները կարող են օգնել երեխաների խնամքով զբաղվող մասնագետներին, որովհետև երեխաներին ապաստարանում հարկավոր է նույնքան ուշադրություն, որքան իրենց մայրերին:

Անձնակազմի հետ կապված պահանջներ՝

անձնակազմում պետք է լրիվ դրույքով աշխատեն երեխաների շահերի պաշտպաններ՝ ծառայություններ տրամադրելու կամ ուղղորդումներ կազմակերպելու համար

-  qualifications in the fields of psychology, social work and teaching - որակավորումներ հոգեբանության, սոցիալական աշխատանքի և ուսուցանման ոլորտում
-  որակավորում հոգեբանության, սոցիալական աշխատանքի, դասավանդման բնագավառներում
-  երեխաների հետ աշխատող անձնակազմը պետք է լիարժեքորեն վերապատրաստված լինի երեխաների գնահատման ընթացակարգերի, ճգնաժամային միջամտության և երեխաների հոգեբանական խորհրդատվության տեխնիկաների հարցում
-  ընտանեկան բռնության դինամիկայի, երեխայի վարգացման իմացություն երեխաների պաշտպանության իրավական ասպեկտի իմացություն:

Երեխաների լավ ինքնազգացողությանը նպաստելու համար անհրաժեշտ է համագործակցություն այլ խորհրդատուների/հոգեբան-թերապևտների հետ, մանավանդ՝ նրանց հետ, ովքեր աշխատում են մայրերի հետ:

Երեխաների հետ աշխատող մասնագետները հաճախ պետք է համագործակցեն և համակարգեն աշխատանքներն այլ մասնագետների հետ, ինչպիսիք են՝ ոստիկանները, դատախազները, փաստաբանները և դատավորները:

Անձնակազմի թվաքանակ

Փոքր կամ միջին չափսերի ապաստարանում խորհուրդ է տրվում ունենալ երեխաների հետ աշխատող առնվազն մեկ աշխատակից, որպեսզի՝

- վերը նշված բոլոր առաջադրանքները կատարվեն պրոֆեսիոնալությամբ և ի նպաստ երեխաների
- փորձի փոխանակումը հեշտացնելու համար
- ժամանակավոր անաշխատունակության կամ այլ արձակուրդի դեպքում երեխաների խնամքի երաշխիք ունենալու համար:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Հատուկ սենյակներ և պայմաններ

Երեխաների խնամքի և վերականգնման համար համապատասխան տարածք պետք է հատկացվի: **Ցանկալի է, որ երեխաների և մեծահասակների խորհրդատվությունը կատարվի ճգնաժամային կենտրոնում, ոչ թե՛ ապաստարանում: Կանանց համար օգտավետ է միջավայր փոխելը, բացի այդ՝ ճգնաժամային կենտրոնում աղմուկն ու շեղող հանգամանքները ավելի քիչ են:**

Սենյակներում պետք է առկա լինեն.

- բոլոր տարիքների երեխաների և երիտասարդների համար հարմարություններ ունեցող խաղասենյակ(ներ)
- թերապևտիկ խաղալիքներ, տիկնիկներ, տիկնիկների տնակներ, մարիոնետներ, խորանարդիկներ, գնդակներ, ավազ և այլն
- խաղեր՝ սեղանի խաղեր կամ խաղեր, որոնց ժամանակ երեխան պետք է ստեղծագործական կերպով կառուցի կամ խնդիրներ լուծի, նկարելու, ներկելու, գրելու և այլ պարագաներ, կրթական նյութեր:

Ցանկալի է ապաստարանում ունենալ.

- բավաճաֆունկցիոնալ սենյակ,
- ժամանցի սենյակ,
- այգի, որը կարող է օգտակար լինել երեխաների և նրանց մայրերի ֆիզիկական և վերականգնողական ակտիվության համար:



Սենյակները պետք է բավարարեն ապաստարանում ապրող երեխաների հատուկ կարիքները:

Մասնավորապես այդ կարիքներն են՝

- Անվտանգությունը
- Հաղորդակցությունը
- Միայնությունը
- Ստեղծագործական աշխատանքը
- Շարժումը (ինքնարտահայտվելու, լարվածություններից ապաստվելու համար և այլն)

Խորհուրդ է տրվում սենյակները լավ լուսավորել, չունենալ այնտեղ ջարդվող առարկաներ: Սենյակները պետք է առանց պատահարների խաղալուհի նարավորություն տան: Խաղերը և խաղալիքները պետք է խթանեն մշակութային բավմապանությունը և համապատասխանեն հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին:

Վարչական և կազմակերպչական հարցերի համար հոգեբաններին և սոցիալական աշխատողներին անհրաժեշտ է հեռախոսակապ ու համակարգիչներ ունեցող առանձին գրասենյակ, որը ցանկալի է լինի ճգնաժամային կենտրոնում, ոչ թե՛ ապաստարանում:

ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ / ԱՐԳԵԼՔՆԵՐ

Շատ հաճախ երեխաներին տրամադրվող աջակցությունը կախված է մասնավոր նվիրատվություններից և դրամահավաքներից ստացված եկամուտից: Սա հատկապես կարևոր է, որովհետև ապաստարան եկող երեխաների կարիքները մայրերի կարիքներից պակաս կարևոր չեն: Որպես բռնության ակնատեսներ կամ բռնության ենթարկված երեխաներ, նրանք ունենում են տարբեր աստիճանների տրավմաներ: Դրանք կարող են սրվել նաև այն փաստից, որ երեխաները ստիպված են լինում հեռանալ իրենց տներից, թողնել իրենց շորերը, խաղալիքները, ընտանի կենդանիներին, և դուրս բերվել իրենց հարապատ միջավայրից (մանկապարտեզ, դպրոց, ընկերներ, բարեկամներ և այլն): Նրանց մայրերը իրենց ի վիճակի են լինում տրամադրել միայն սահմանափակ աջակցություն և խնամք:

Երեխաների խնամքով պահվող աշխատակիցները պետք է միջամտեն, անդրադառնան այս յուրահատուկ կարիքներին և սկսեն եղածը վերագնահատելու գործընթացը: Ապաստարանում լինում են բոլոր տարիքների, տարբեր սոցիալական և մշակութային ծագումով երեխաներ: Այս երեխաների հետ աշխատելը նաև նշանակում է հաղթահարել բարձր անկայունությունը և տրավմաների տարբեր աստիճանները: Անձնակազմի կամ ենթակառուցվածքների առումով անհամարժեք միջոցները լրջորեն խոչընդոտում ամեն տեսակի առաջընթացին, որը կարող էր ապաստարանում բնակվելու ժամանակ լինել հոգուտ երեխաների:



6.1 ՈՂԵՑՈՒՅՑ / ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

Բռնության ենթարկված երեխաների հետ աշխատելիս առաջնահերթ պետք է լինի նրանց լավ ինքնապագացողությունը և ապահովությունը: Ապաստարանի գործառույթը բռնությունը դադարեցնելը, երեխային պաշտպանելը և նրա հիմնական կարիքները բավարարելն է:

Բռնության միջով անցած երեխաների հետ աշխատելը նաև նշանակում է **խորհրդատվություն մեծահասակներին**, մանավանդ նրանց, ովքեր ստանձնում են երեխայի բարեկեցության պատասխանատվությունը: Երեխային աջակցելու, նրա կարիքները հոգալու և երեխային որքան տևողությամբ անհրաժեշտ է՝ բռնությունից հեռու պահելու լավագույն ձևերից է մորն օգնելը, ով երեխայի ոչ բռնի խնամատարը/ երեխայի կարիքները հոգացողն է: Մայրը կներգրավվի օպտիմալ լուծումներ գտնելու և իրավիճակը կարգավորելու համար անհրաժեշտ փոփոխությունները ստեղծելու մեջ: Հայաստանում Կանանց աջակցման կենտրոնում կա մայրերի համար նախատեսված ուղեցույց:

Երեխաների հետ տվյալ պահին առկա բռնության հարցերի շուրջ հոգեբանական աշխատանք կարելի է կատարել միայն անվտանգությունն ապահովելուց հետո: Կիրառված մոտեցման և աշխատանքի եղանակի արդյունքում երեխան պետք է հասկանա, որ բռնությունը իր մեղքով չի կատարվել: Երեխայի հետ երկխոսություն վարգացնելիս՝ **կարևոր է**

- ❧ Որ հանդիպումները տեղի ունենան երեխային ծանոթ միջավայրում
- ❧ Բացատրել երեխային, թե ինչու է նա խորհրդատվության կամ հոգեբանական թերապիայի գալիս
- ❧ Հստակ սահմանել, որ բռնությունը/ոտնձգությունը նրա մեղքը չէ
- ❧ Օգտագործել պարզ և հստակ նախադասություններ, ձևակերպել ուղիղ հարցեր և խուսափել «ինչո՞ւ»-ով սկսվող հարցերից, որոնք հաճախ ինքնապաշտպանական իրավիճակներ են ստեղծում կամ փոխանցում են ուղերձ, թե նա պատասխանատու է կատարվածի համար կամ մասնակցել է դրան
- ❧ Երեխաների հետ խոսել «լավ» և «վատ» գաղտնիքների մասին: Սա կարևոր է սեռական բռնության ենթարկված և դա գաղտնի պահելու հրահանգ ստացած երեխաների համար:
- ❧ Նրանց տալ սեփական բառերով սեռական խնդիրների մասին խոսելու հնարավորություն՝ երբեմն երեխաները կրկնօրինակում են բռնարարի «տգեղ բառերը»

- ❧ Կիրառել նկարներ, տիկնիկներ երեխայի համար շատ ավելի հեշտ է բացատրել ոտնձգության դեպքը ոչ վերբալ միջոցներով
- ❧ Որսալ երեխայի հայացքը՝ առանց նրան դիպչելու (սա կարող է ոտնձգության իրավիճակի նմանվել, որովհետև նա մեծահասակ է, ով երեխայից ինչ-որ գործողություն է ակնկալում)
- ❧ Խոսել պգացմունքների մասին, հատկապես՝ վախի, սպառնալիքների և ամբիվալենտության (պգացմունքների երկակիության)
- ❧ Չստեղծել նոր գաղտնիքներ, նոր խոստումներ, հանդիպման վերջում շնորհակալություն հայտնել վստահության համար և բացատրել հետագա քայլերը
- ❧ Միջամտություն և աջակցություն կապակերպելիս՝ հասկանալ և հաշվի առնել բռնարար-վոհ հարաբերությունների դինամիկան: Երեխայի աջակցման համակարգը (ոչ բռնի ծնող, ոչ բռնի բարեկամներ, հոգեբան, թերապևտ, սոցիալական աշխատողներ և այլք) պետք է տեղյակ լինի այն փաստից, որ երեխայի նկատմամբ որևէ բռնի վարքագծի կրկնություն նրան կրկին տրավմայի կենթարկի և կվատթարացնի եղած վնասը:



Վերաբերմունքի, վարքագծի կամ մտածողությունն ամրապնդող կլիշեներ պարունակող ուղերձների միջոցով բռնության նորմալացումը, բռնություն երևույթի կամ վատ արարքի նվազեցումը, ոչ բավարար պատրաստվածությունը՝ հատկապես, երբ միջամտություն է արվում դադարեցնելու երեխայի նկատմամբ շարունակաբար կիրառվող բռնությունը, իրավիճակներ են, որոնցից պետք է խուսափել:



ԱՆՁՆԱԿԱԶՄԻ
ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

7. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընտանեկան բռնության ենթարկված կանանց ու երեխաներին ապաստարանների տրամադրած պաշտպանությունն ու աջակցությունը հիմնված են հստակորեն սահմանված նպատակների ու սկզբունքների վրա: Դրանց իրականացման համար պահանջվում են ծախսարդյունավետ կառավարում և պրոֆեսիոնալ կազմակերպչական չափորոշիչներ, հատուկ որակավորված և մեծ նվիրում ունեցող աշխատակազմ և բյուջետային համալիր պլանավորում:

7.1 ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Կանանց ապաստարան աշխատեցնելը պահանջում է ողջ գործընթացի պրոֆեսիոնալ կազմակերպում: Ապաստարանների կառավարման տարբեր մոդելներ են կիրառվել, որոնց ծախսարդյունավետության ու պրոֆեսիոնալության չափորոշիչները դյուրացրել են ապաստարանների նպատակների իրականացումը: Որոշ ապաստարաններում ողջ անձնակազմն աշխատում է խմբային աշխատանքի հիմունքներով, ապաստարանն աշխատեցնում համատեղ: Մեկ այլ մոդելի համաձայն՝ գործում է խմբային կառավարումը՝ փոփոխված որոշակի ոլորտներում անհատական պատասխանատվությամբ, երբ այդ ոլորտների պատասխանատուները կազմում ու իրականացնում են իրենց պլաններն ինքնուրույն և Վեկուցում են խմբին: **Կան ապաստարաններ, որոնք ղեկավարում է տնօրենը:**

Սրանք միակ մոդելները չեն, յուրաքանչյուր ապաստարան պետք է մշակի կառավարման իր կառուցվածքն այնպես, որ այն լավագույնս համապատասխանի տվյալ տարածքի հանգամանքներին: Բոլոր դեպքերում ապաստարանի աշխատողները պետք է նորահայտ յուրաքանչյուր մարտահրավերին արձագանքեն ճկունորեն ու բաց մտքով և պետք է պատրաստ լինեն հրաժարվել այնպիսի կառուցվածքներից, որոնք այլևս անհրաժեշտ չեն:

7.2 ԻՆՉ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ

Ստորև ներկայացնում ենք մի քանի հարց, որ պետք է հաշվի առնել՝ ապաստարան կառավարելիս: Դրանք են՝ թիմային աշխատանքը, լիապորությունն ու պատասխանատվությունը, անձնակազմի իրավունքները, կառավարման մշակույթը:

Թիմային աշխատանք

Ապաստարան կառավարելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ հորիզոնական կառավարման, ժողովրդավարական կառուցվածքների ու մասնակցության սկզբունքները պետք է կիրառվեն ինչպես ապաստարանի կառավարման աշխատանքներում, այնպես էլ՝ աշխատակազմի ներսում իրար հետ աշխատելիս: Ինչպես արդեն նշվել է, ապաստարանի աշխատողներն այնտեղ բնակվող կանանց ու երեխաների համար հանդիսանում են օրինակելի կերպարներ, և նրանց նպատակն է ցույց տալ, որ կանայք ի վիճակի են ինքնուրույն կառավարել որևէ կառույց և/կամ միասին աշխատել հավասար հիմունքներով:

Չափազանց աստճանավորված (հիերարխիկ) կառուցվածքը, երբ ասենք՝ մեկ անձ է կայացնում բոլոր որոշումները, կանանց կորացման վատ օրինակ կարող է ծառայել (տե՛ս **Գլուխ 3**):

Ավելին, կառավարման ժամանակակից հետապոստությունները ցույց են տալիս, որ թիմում իրար հետ համագործակցող աշխատակիցները, որոնք ներգրավված են նաև որոշումների կայացման գործընթացում, ավելի արդյունավետ և ուրախ են աշխատում և ավելի լավ արդյունքներ են տալիս:

Կառավարման հետ կապված խնդիրները պետք է բացահայտվեն ժամանակին ու պատշաճ լուծում ստանան: Միգուցե, օրինակ, ապաստարանի աշխատանքի համար խոչընդոտ դառնան որոշումների կայացման ձգձգված գործընթացները, քանի որ բոլոր տեսակի որոշումների կայացմանը հրավիրվում են բոլորը: Կարող են ընդլայնված խորհրդակցությունները հանգեցնել նաև բախումների, որոնք հավասարապես խանգարող հանգամանք են:

Չափազանց դժվար է համատեղ իրականացնել մի գործ, երբ աշխատանքային թիմը մեծ է: Եթե դրանում ներգրավվածների թիվը մեծ է 6-7-ից, առաջանում են դժվարություններ որոշումների կայացումը շատ ժամանակ է պահանջում, իսկ աշխատանքի որակը կարող է ընկնել: Ավելի մեծ թիմերն ավելի լավ են աշխատում, եթե պատասխանատու է լինում մեկը:

Կազմակերպչական ու կառավարչական կառուցվածքներ հիմնել ուղեցույցն այն է, որ հնարավոր լինի ապահովել արդյունավետության ու պրոֆեսիոնալիզմի ամենաբարձր հնարավոր չափորոշիչները:

Հեղինակություն և պատասխանատվություն

Թեև նախընտրելի կառուցվածքն այն է, որ թիմն աշխատի հավասար հիմունքներով, ընդհանուր առմամբ, կան ֆորմալ հեղինակության կառուցվածքներ, որոնք կարիք կլինի հարգել: Եթե ապաստարանն աշխատեցնում է, օրինակ՝ ասոցիացիան, այն հավանաբար բաղկացած կլինի կառավարող խորհրդից ու անդամներից: Կառավարող խորհուրդն է կրում վերջնական պատասխանատվությունն ասոցիացիայի աշխատանքների, այդ թվում՝ ֆինանսական հարցերի համար: Խորհուրդը կարող է պատվիրակել կառավարման առաջադրանքները ապաստարանի ողջ աշխատակազմին կամ մի քանի անդամի:

Ապաստարանի աշխատողները որպես կանոն վարձատրվող աշխատողներ են:

Դրական կառավարման մշակույթ՝ խորհրդատվություն կազմակերպչական հարցերում

Ինչպես ցանկացած այլ կազմակերպություն, կանանց ապաստարաններն անցնում են վարձացման տարբեր փուլերով: Խնդիրներ կարող են ծագել այդ փուլերից յուրաքանչյուրում:

Թեև ապաստարանի ծառայությունները պլանավորվում ու մշակվում են, խորհուրդ է տրվում պարբերաբար օգտվել արտաքին խորհրդատվությունից, որը կարող է ունենալ վերաորակավորման, թիմային վերահսկողության կամ կազմակերպչական

խորհրդատվության տեսք: Թիմային վերահսկողության նպատակն է օգնել վարձագնել թիմային համագործակցություն, մինչդեռ կազմակերպչական խորհրդատվությունը մասշտաբավելի համապարփակ է ներառում խորհրդատվություն ողջ կազմակերպության մակարդակով, այսինքն՝ ասոցիացիայի համար ընդհանուր առմամբ, խորհրդի անդամների և այլն:

Անխուսափելիորեն խորհրդատվությունը դրամ արժե, որը պետք է ներառվի բյուջեի պլանավորման մեջ: Վերահսկողությունը պետք է ծառայի ոչ միայն որպես հարթակ խորհրդատվական հարցերը քննարկելու համար, այլ ընդհանուր առմամբ, որպես ապաստարանի աշխատանքի որակը բարձրացնելու միջոց: Եթե հովանավորները հարցնեն, թե ինչու է խորհրդատվությունն անհրաժեշտ, պատշաճ պատասխան կարող է լինել այն, որ կարևոր է ներդրում անել լավ կառավարման մեջ, քանի որ կառավարչական խնդիրները կարող են ի վերջո խլել հսկայական էներգիա և հետևաբար՝ ռեսուրսներ ու դրամ:

Դրական կառավարման մշակույթը, գոհունակությունն աշխատանքով, ոգեշնչված անձնակազմը, որն ի վիճակի է ներդնել իր ողջ ներուժն ու ստեղծարարությունը, չափավանց կարևոր գործոններ են ապաստարանի աշխատանքում և կանանց ու երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարում:

Խորհուրդ է տրվում խորհրդատվական ծառայություններից օգտվել ապաստարանի աշխատանքի վաղ շրջանից սկսած: Խորհրդատվություն տրամադրողները պետք է ունենան ոչ միայն մասնագիտական համապատասխանություն խորհրդատվության համար, այլև՝ ինտուիտիվ հմտություններ՝ ըստ պահանջվող առաջադրանքների: Պարտադիր չէ, որ խորհրդատուն ունենա սոցիալական աշխատողի աստիճան, սակայն համապատասխան որակավորումը պատրադիր է:

7.3 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Կառավարման հմտությունները պահանջվում են ապաստարանի աշխատանքի տարբեր ոլորտներում, որտեղ անհրաժեշտ է ուշադիր պլանավորում և պարտականությունների ու պատասխանատվության հստակ բաշխում:

Պարտականությունների ու պատասխանատվության հստակ բաշխում

Սա կառավարչական արդյունավետության տարրական նախադրյալներից է: Պարտականությունների ու պատասխանատվության բաշխումը պետք է շարադրված լինի ապաստարանի գործառնական պլանավորման մեջ:

- Կառավարման պլան մշակելու հարցում օգտակար կարող են լինել հետևյալ հարցերը.
- Կառավարման ինչ ոլորտներ կան:
 - Դ՞վ է պատասխանատու յուրաքանչյուր ոլորտի համար:
 - Ի՞նչ են ենթադրում պարտականություններն ու պատասխանատվությունները յուրաքանչյուր դեպքում:
 - Դ՞վ է յուրաքանչյուր ոլորտում կայացնում որոշումներ, ինչ հիմքով (միայնակ, թիմի հետ խորհրդակցելով, թիմի տրամադրած տեղեկատվության հիման վրա):
 - **Աշխատանքի նկարագիր:**

Լավ պլանավորում

Կարևոր է ապաստարանի աշխատանքի յուրաքանչյուր ոլորտի համար մշակել մանրակրկիտ պլան, ապահովել, որ թիմում ներգրավված բոլոր անձինք տեղյակ լինեն այդ պլանից, վերահսկել պլանավորման արդյունավետությունը, գնահատել այն և անհրաժեշտության դեպքում՝ վերանայել: Հստակ պլանավորումն ինքնին որակի ապահովման ցուցանիշ է:

Ահա տարբեր ոլորտներում աշխատանքը պլանավորելու ստուգացանկ.

- Մշակել մանրամասն պլաններ (նպատակներ, առաջադրանքներ, ռեսուրսներ, ժամացուցակներ և այլն)
- Ներկայացնել պլանը թիմին
- Որոշումներ կայացնել
- Որոշումներն իրականացնել
- Վերահսկել ու գնահատել՝ ինչն է արդյունավետ, ինչը՝ ոչ, ինչն է պետք շտկել
- Ներկայացնել արդյունքները թիմին
- Շտկել պլանավորումը:

7.4 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Կախված ընտրված կառավարման մոդելից՝ ապաստարանի վարչարարությունն ու տարբեր ոլորտների համար պատասխանատվությունը կարող է հանձնարարվել մեկ կառավարչի կամ կարող է կիսվել մի քանիսի միջև:


Ապաստարանում կառավարման ենթակա մի շարք ոլորտներ կան, որոնք ներկայացված են ստորև: Յուրաքանչյուր ոլորտը կառավարելու պատասխանատվությունը պետք է հանձնարարվի մեկ կամ մի քանի աշխատողի (սակայն՝ ոչ շատ աշխատողների, որպեսզի չարգելակվի արդյունավետ կառավարումը): Անկախ նրանից, թե ինչպես կբաշխվի յուրաքանչյուր ոլորտի կառավարումը, կարևորն այն է, որ որևէ ոլորտ բաց չթողնվի:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ (ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ) ՈՒ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ


Այս ոլորտի մեջ է մտնում կանանց ու երեխաներին ապաստարանի կողմից տրամադրվող աջակցության ծառայությունների պլանավորումն ու մատուցումը:

Շատ ապաստարաններ հասանելի են օրվա բոլոր ժամերին, աշխատեցնում են թե՛ զիծ ու կանանց կարող են ընդունել և՛ ցերեկվա, և՛ գիշերվա ցանկացած ժամի: Այս ոլորտում ուշադրության արժանի է հենց օրվա բոլոր ժամերին ծառայությունների հասանելիության կազմակերպումը:

Աշխատանքն այս կերպ կազմակերպելու մի քանի մոդելներ կան, այդ թվում՝

 Ապաստարանի աշխատակիցը գտնվում է ապաստարանում ողջ օրվա ընթացքում և հասանելի է բջջային հեռախոսով

 **Աշխատակիցը հասանելի է գիշերվա ժամերին բջջային հեռախոսով**

 Կա 24-ժամյա (տեղական կամ համապետական) թեժ գիծ, որը ձգնաժամային աջակցություն է տրամադրում և անհրաժեշտության դեպքում կապ է հաստատում ապաստարանի հետ:

Ապաստարան դիմած կանանց ու երեխաների ընդունելության գործընթացը կազմակերպում են սոցիալական աշխատողները: Ապաստարանի աշխատակիցներից առնվազն մեկ հոգի պետք է օրվա բոլոր ժամերին հասանելի լինի:

Երեխաների հետ աշխատանք

Այս ոլորտի կառավարման համար որպես կանոն պատասխանատվություն են ստանձնում ապաստարանի անձնակազմի այն անդամները, ովքեր հոգ են տանում երեխաների մասին: Այստեղ նույնպես երեխաներին տրամադրվող ծառայությունները պետք է անցնեն մանրակրկիտ պլանավորում, իրականացում և հարմարեցում փոփոխվող հանգամանքներին, ասենք՝ երեխաների տարիքային խմբերին և կարիքներին:

ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ՈՒ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Այս ոլորտում նպատակ պետք է դրվի ապահովել, որ որքան հնարավոր է՝ համայնական կյանքն ապաստարանում կանանց ու երեխաների համար պարունակի դրական ապրումներ, որ նրանք իրենց թեթև զգան, որ կարողանան ապրել առանց տագնապի ու սթրեսի: Այս առաջադրանքի էությունն ապաստարանի «մշակույթի» առաջնությունն է՝ որպես ընդհանուր կառավարման մշակույթի մի կողմ (տե՛ս **Գլուխ 8**): Սա նշանակում է, որ կոնֆլիկտները պետք է հաղթահարվեն, ու պետք է գործադրվեն կոնֆլիկտների կառավարման սկզբունքներ: Այս ոլորտում պատասխանատվությունը պետք է հանձնարարվի մեկ կամ հնարավորության դեպքում՝ երկու աշխատակցի, ովքեր լավ կլինի, որ որակավորված լինեն խմբերի հետ աշխատելու և կոնֆլիկտները կառավարելու հարցերում:

Ներքին հաղորդակցություն, թիմային հանդիպումներ, ասոցիացիայի աշխատանք













Ներքին հաղորդակցությունը ապաստարանի աշխատանքի կարևոր մասերից մեկն է, որը չի կարելի անտեսել: Տեղեկատվությունը պետք է փոխանակվի ճիշտ ժամանակին ու արդյունավետորեն: Այս ոլորտին են պատկանում նաև՝ ապաստարանում կեցության կանոնների և այլ տեղեկատվության պետեղումը, թիմային պարբերաբար հանդիպումների պլանավորումն ու անցկացումը, ասոցիացիայի հանդիպումները, աշխատակիցների ու խորհրդի անդամների հանդիպումները: **Շահառուների դեպքերի ուսումնասիրություններն ու գնահատումները պետք է իրականացվեն ողջ աշխատակազմի կողմից շաբաթական կտրվածքով:**

Անվտանգություն

Կանանց ապաստարանի գլխավոր գործառնություններից է իր բնակիչների համար պաշտպանության ու անվտանգության ապահովումը (տե՛ս **Գլուխ 8**): Այս հարցում պատասխանատու պետք է լինեն աշխատակազմի բոլոր անդամները և պետք է ներգրավվեն անվտանգության միջոցառումների պլանավորման ու իրականացման աշխատանքներում:

Անձնակազմ

Սա կառավարման դասական ոլորտներից է և տրամաբանորեն պետք է հանձնարարվի այն անձին/մարմնին, ով պատասխանատու է ապաստարանի համար: Այս ոլորտը ներառում է պատասխանատվությունների լայն շրջանակ.

-  Անձնակազմի համալրումը նոր անդամով, աշխատանքի նկարագրի կազմում, հարցազրույցներ, ընտրություն
-  Աշխատանքի ընդունում և նոր անդամի վերապատրաստում
-  Դուրս եկող աշխատակցի աշխատանքի ավարտում
-  Աշխատանքային պայմանագրերի կազմում
-  Որևէ նոր հանգամանքի մասին աշխատակազմին տեղեկատվության հոսքի վերահսկողություն
-  Անձնակազմին իրենց իրավունքների մասին իրապեկում
-  Անձնակազմի անդամներին իրենց ընթացիկ աշխատանքներում և կարիերայի պլանավորման հարցում աջակցելը (հ՛նչ աշխատանք են այժմ անում: Ի՛նչ են պզում դրա կապակցությամբ: Ի՛նչ կերպ կարող է իմ աշխատանքն աճել)
-  Օժանդակության տրամադրում, երբ առաջանում են խնդիրներ, սպառվածության կանխարգելում
-  Աջակցություն անձնակազմի անդամների միջև կոնֆլիկտների ծագման դեպքում
-  Վերահսկողություն կազմակերպչական հարցերում
-  Անձնակազմի արձակուրդների, փոխարինումների հարցերի կազմակերպում
-  Դրական կառավարման մշակույթի խրախուսում, անձնակազմի ժամանցի, ծննդյան տոների, կարևոր նվաճումները նշող տոնակատարությունների կազմակերպում, ինչպես նաև հավաքական քննարկումներ ու վերլուծություններ ձախողումների կամ չլուծված խնդիրների շուրջ:



Ուշադրություն: Անձնակազմի անդամները պետք է տեղեկացված լինեն, որ պարտավոր են պահպանել գաղտնիություն, որի մասին գրավոր կստորագրեն աշխատանքային պայմանագրերը կազմելիս:

Ներքին վարչարարություն

Վարչարարությունը կառավարման ոլորտներից առավել ընդգրկուններից է: Ապաստարանում ապաստարանաձևերի շրջանառությունը որպես կանոն բարձր է, քանի որ կանայք և նրանց երեխաները տեղափոխվում են և նրանց փոխարեն նորերն են ընդունվում: Ապաստարանի գույքն ու սարքավորումները մշտապես գործածության մեջ են, և հաճախ է կարիք լինում դրանք նորոգել: Հոգնատանջ գործ է ապաստարանն այնպիսի վիճակում պահպանել, որ իր բնակիչներն ապրեն հարմարավետ: **Նորոգումներ կատարող տղամարդիկ ապաստարան պետք է գան այն ժամանակ, երբ կանայք այնտեղ չեն (կանանց կարելի է տեղափոխել կենտրոն կամ օգտվել այն ժամանակից, երբ նրանք դրսում այլ գործեր ունեն):**

Մինչև 5 ննջասենյակ ունեցող ապաստարաններում մաքրությունն ու սնունդի պատրաստումն իրականացնում են այնտեղ ապաստարանած կանայք: Սրա պատճառով նրանք բավականին զբաղված են լինում, սակայն սա նրանց օգնում է ինքնագնահատական ձևավորել, ձեռք բերել տնային կառավարման հմտություններ և վարձացնել հաղորդակցության հմտություններ: Բացի այդ, կանայք չպետք է զգան կարծես հինգաստղանի հյուրանոցում են, նրանք նույնպես պատասխանատվություն պետք է կրեն: Սա նրանց կօգնի առանձին և կիսովի բնակարանային պայմաններում ապրելուն անցում կատարելու հարցում: Բացի այդ, երբ մայրերն իրենց երեխաների հիգիենայի, մաքրության ու սննդակարգի նկատմամբ վերահսկողություն են ունենում, դա նույնպես օգնում է նրանց ուժեղացմանը:

Կամավորների ու որակավորում անցնողների համակարգում

Կանանց աջակցման շատ կազմակերպություններ իրենց անձնակազմի մեջ են ներառում նաև կամավորների: Սա ունի երկու պատճառ քանի որ կազմակերպությունները թերֆինանսավորվում են, նաև քանի որ կարևոր ու նպատակահարմար է աշխատանքի որոշ ոլորտներում կամավորների ներգրավելը: Կամավորներն իրենց հերթին ունենում են բավապատկիչ դեր, ում ձեռք բերած գիտելիքներն ու փորձը կանանց ու երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարում օգտակար կարող է լինել այլ ոլորտներում: Շատ ապաստարաններ ընդունում են նաև որակավորում անցնողների կամ ուսանողների, ովքեր այնտեղ աշխատում են մի քանի շաբաթ կամ ամիս՝ որպես իրենց ուսման մի մաս (օր՝ հասարակագիտության): Որակավորում անցնողներին ընտրելը, ուղղորդելն ու վերահսկելը նույնպես պլանավորում է պահանջում: Հայաստանում դժվար է պահպանել գաղտնիություն, ուստի խորհուրդ չի տրվում կամավորների ներգրավել ապաստարաններում: Քանի որ Հայաստանում և հատկապես՝ շրջաններում, որտեղ սոցիալական ու ընտանեկան կապերը շատ ամուր են, կամավորները կարող են գաղտնիության սկզբունքի հարցում խնդիրներ առաջացնել:

Վիճակագրություն, տվյալների հավաքագրում, գնահատում և որակի վերահսկողություն

Աշխատանքին առնչվող տվյալների ընթացիկ հավաքագրումը և վիճակագրության ու հաշվետվությունների կազմումը աշխատանքի կարևոր մասն են հանդիսանում: Բնականաբար, այս հարցով պետք է զբաղվեն աշխատակազմի այն անդամներն, ովքեր ունեն անհրաժեշտ մասնագիտական որակավորումները: Շարունակական գնահատումն ու որակի վերահսկողությունը ապաստարանի աշխատանքի հերթական մասն են:

7.5 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Եվրոպայում կանանց ապաստարաններ աշխատեցնելու տարիների փորձը ցույց է տվել, որ տղամարդու կողմից բռնության ենթարկված կինն ավելի հեշտորեն կարող է բացվել ու վստահություն ցուցաբերել, եթե խոսի մեկ այլ կնոջ հետ: Այդ իսկ պատճառով կանանց ապաստարանների աշխատանքի սկզբունքներից մեկն այն է, որ անձնակազմը բաղկացած լինի գենդերային զգայունություն ունեցող կանանցից: Կանանց աշխատանքի ընդունելու հարցում կա նաև սոցիալ-քաղաքական պատճառ քանի որ կանանց նկատմամբ բռնությունը պայմանավորված է գենդերով, այն վերացնելու մոտեցումը նույնպես պետք է լինի գենդերով պայմանավորված: Ոչ թե ողջ հասարակությունն է բարձրացրել կանանց նկատմամբ տղամարդկանց բռնության հարցը, այլ հենց կանայք իրենք են այս բռնությունը վերացնելու շարժումը նախաձեռնել: Կանայք են, որ ենթարկվել են խստագույն խտրականության, ինչն էլ նրանց անբարենպաստ վիճակում է պահել: Բռնությունը խտրականության ծայրագույն ձևն է: Կանանց ապաստարանների ու թեժ գծերի նման նախագծերի իրականացման շնորհիվ կանայք խնդիրը բարձրացրել և հասցրել են հանրության ուշադրությանը: Քաղաքականության «ներքևից վերև» այս մոդելը բնորոշ է կանանց կազմակերպություններին ու սոցիալական այլ շարժումներին, որոնք զբաղվում են կոնկրետ խմբերի կարիքներով:

Ապաստարան բացելու համար անհրաժեշտ նախադրյալ է բավարար ֆինանսական ռեսուրսների առկայությունը, պակաս կարևորության գործոն չէ, սակայն, համապատասխանորեն որակավորված ու մոտիվացված անձնակազմը:

Ապաստարանում աշխատող կանայք պետք է հստակ մոտիվացիա ունենան: Կարևոր է, որ նրանք լիովին նվիրված լինեն ապաստարանի աշխատանքի նպատակներին ու սկզբունքներին (տե՛ս **Գլուխ 3**): Վերապատրաստման և որակավորման նպատակը բռնության հարցում կոնկրետ փորձառություն ձեռք բերելն է, որը անձնակազմին կօգնի արդյունավետ աջակցություն տրամադրել կանանց:

Կենսական նշանակություն ունի անձնակազմի աշխատանքի գնահատումն ու պատշաճ վարձատրումը: Ապաստարանի անձնակազմը պետք է վարձատրվի ըստ յուրաքանչյուրի որակավորման ու նման որակավորումների համար աշխատավարձային ստանդարտ դրույքաչափի (օրինակ՝ կոլեկտիվ պայմանագրերի աշխատավարձի չափի):

Ապաստարան հիմնելիս՝ ասոցիացիան պետք է որոշի, թե ինչ ծառայություններ են մատուցվելու, այնուհետև՝ թե **ինչ մասնագիտական հմտություններ** են պահանջվելու այդ ծառայությունների համար և վերջապես՝ թե **օժանդակ ինչ հմտությունների** կարիք կլինի:

Ապաստարաններում սովորաբար պահանջվում են մի շարք որակավորումներ ունեցող մասնագետներ, որպեսզի այդ բարդ աշխատանքն իրականացվի: Հետևյալ հարցերում հմտացած ու որակավորված անձնակազմի մասին է խոսքը ճգնաժամային միջամտություն, անհատական ու խմբային խորհրդատվություն, խմբային աշխատանք, կոնֆլիկտների լուծում ու միջնորդություն, սոցիալական աշխատանք, տրավմա ունեցող բռնությունից տուժածների հետ հոգեբանական թերապիա անելու հմտություններ, հոգեբանական ու մանկավարժական որակավորումներ, իրավաբանական որակավորում, առաջնորդություն ու կառավարում,

դրամահավաք ու ֆինանսական կառավարում, հանրային կապեր, մշակութային միջնորդություն, լեզվական հմտություններ և այլն: Քանի որ ապաստարաններում չեն կարող աշխատանքի ընդունվել այս բոլոր ոլորտների մասնագետները, անհրաժեշտ է, որպեսզի անձնակազմն ունենա բավականին որակավորում ու հմտություններ և որպեսզի նրանք պատշաճ վերապատրաստում անցնեն:

Երբ անձնակազմը վերապատրաստված լինի, իսկ ծառայությունը պատրաստ մատուցման, հավաքական փորձի մակարդակը բարձրացնելու և ավելի մասնագիտացված փորձառության, ինչպես նաև նորահայտ խնդիրների (օրինակ՝ այլ ապաստարաններ բացելու, նոր ծառայություններ մատուցելու) լուծման համար շատ կարևոր կլինեն ընթացիկ վերապատրաստումները:

Վերապատրաստումները՝ ղեկավարի հետ պարբերաբար հանդիպումների հետ միասին, կօգնեն անձնակազմին պահպանել ու կարգացնել մասնագիտական հմտությունները, ինչպես նաև խթանել իրենց փորձառության գիտակցում ինչպես սեփական իմաստով, այնպես էլ գիտակցական:

7.6 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹԻՎԸ

Ապաստարանի չափը, ծառայությունների թիվն ու տեսակը և գործող կազմակերպական կառուցվածքը (առանձին ապաստարան, համատեղ ապաստարան/ ձգնաժամային կենտրոն) պետք է հաշվի առնվեն՝ անձնակազմի թիվը որոշելիս: Առանձին խորհրդատվական կենտրոն ունեցող ապաստարանները սովորաբար ունենում են երկու աշխատակազմ, որոնցից մեկը կառավարում է ապաստարանի ծառայությունները, իսկ մյուսը՝ վբաղվում թե՛ գծով ու խորհրդատվական ծառայություններով:

Կան կանանց ու երեխաներին տրամադրվող մի շարք հիմնական ծառայություններ (տես **Գլուխ 5**):

Օրինակ. ապաստարանին անհրաժեշտ աշխատակազմը

Ստորև բերված հաշվարկի նպատակն է մոտավորապես ուղղորդել, թե ինչ տեսակի աշխատանքային ռեսուրսներ կպահանջվեն միջին չափի 5-6 կնոջ ու նրանց երեխաներին ծառայություններ մատուցող ապաստարանում: Սակայն կանանց աջակցում են նաև սոցիալական աշխատողները, հոգեբաններն ու իրավաբանները, ովքեր նրանց ընդունում են ձգնաժամային կենտրոնում՝ անկախ նրանից, որ նրանք ապաստարանի կարիք չունեն կամ նախկին շահառուներ են, ովքեր ծառայությունների կարիք ունեն:

4 Լրիվ աշխատաժամանակով աշխատող աշխատակից կենտրոնում համակարգող, օգնական, տվյալների հավաքագրող և օրվա ընթացքում թե՛ գիծը սպասարկող

3 Լրիվ աշխատաժամանակով աշխատող սոցիալական աշխատող

1 մեծահասակների հոգեբան

1 մանկական հոգեբան՝ մասնակի աշխատաժամանակով

2 Լրիվ աշխատաժամանակով ցերեկը աշխատող աշխատակից, 1-ը՝ մեծահասակների համար, մյուսը՝ երեխաների

1 պատասխանատու ապաստարանին անհրաժեշտ պարագաների ու գնումների համար

Գիշերային հերթափոխով աշխատող 3 աշխատակից, կամ մեկ մշտական գիշերային աշխատակից

2 իրավաբան

1 մասնագետ սուպերվիզոր

Վերը նշված ցանկը կարող է լինել ավելի փոքր կամ մեծ՝ կախված ապաստարանի չափսից:

Վերը նշված հաշվարկի մեթոդը չի ներառում մասնագիտացած պարտականությունների համար պահանջվող աշխատակազմի կարիքները, օրինակ՝ հաշվապահի, հանրային կապերի մասնագետի և այլն:

Անձնակազմի չափսը հաշվարկելիս՝ կարևոր է հիշել, որ աշխատակիցները վերցնելու են արձակուրդներ կամ ունենալու են ժամանակավոր անաշխատունակություն և մասնակցելու են վերապատրաստումների: Այնպես որ ապաստարանի անձնակազմի բյուջեն պետք է նաև ներառի ծախսեր մշտական անձնակազմին փոխարինողների համար:

7.7 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Ինչպես նշվել է վերը, կարևոր է, որպեսզի անձնակազմի թիվը համապատասխանի աշխատանքի ծավալին և որ վարձատրության չափը համապատասխանի պահանջվող հմտություններին: Սա հոգատար մասնագիտություն է, որը ենթադրում է աշխատանք ծանր տրավմաների ենթարկված անձանց հետ, ինչը նշանակում է այլ ոլորտներում համարժեք մասնագիտություններին հավասար սոցիալական կարգավիճակ:

Կենսականորեն կարևոր է, որ աշխատակազմի բեռնվածությունը (որպես խումբ և անհատապես) ուշադրությամբ դիտարկվի և տարբեր քայլեր ձեռնարկվեն այն նվազեցնելու ուղղությամբ, օրինակ՝ անձնակազմի թվի ավելացում կամ որոշակի ծառայությունների դադարեցում, եթե հավելյալ աշխատակիցներ ներգրավելու ֆինանսական հնարավորություններ չկան: Մարդկային ու մասնագիտական ռեսուրսները պետք է պաշտպանված լինեն՝ ապահովելու դրանց առկայությունը կանանց տրամադրվող ծառայությունների համար:

Սա նշանակում է, որ յուրաքանչյուր խումբ և ապաստարանի յուրաքանչյուր աշխատող անհատապես պատասխանատու է որոշակի ոլորտի համար, պետք է ունենա իր աշխատանքը պլանավորելու, այն իրականացնելու, արված աշխատանքը գնահատելու և վերջապես՝ իրականացվող ծրագրի/միջամտության իրականացմանը եղանակը փոփոխելու ժամանակ:

Եթե աշխատանքի ծավալը չափազանց մեծ է (անձնակազմը չի բավարարում) կամ աշխատավարձերը պատշաճ մակարդակի չեն (մասնագիտական փորձառությունը չի գնահատվում), կարող են առաջանալ հետևյալ ռիսկերը:

Վերջապես, տեղական, համապետական կամ միջազգային մակարդակներում այլ ապաստարանների հետ վերապատրաստմանն ուղղված փոխանակումները ապաստարանի ծառայությունների բարելավման ու բռնության կանխարգելման միջոցառումների արժեքավոր եղանակ են: Վերապատրաստման մեկ այլ կողմ գենդերային բռնության մասին իրավեկվածության բարձրացումն է:

7.11 ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

Վերահսկումը սեփական աշխատանքը վերանայելու ու կատարելագործելու միջոց է: Վերահսկողները հատուկ որակավորված մասնագետներ են, ովքեր խորհուրդներ են տալիս թիմային, խմբային կամ անհատական մակարդակում: Շատ երկրներում վերահսկողները ամենօրյա աշխատանքներն ունենում այն ասոցիացիաների հետ, որոնք վերահսկողի վերապատրաստման ծրագրերի ձևակերպված չափորոշիչներ են ունենում և որոնք հրապարակում են որակավորված վերահսկողների ցանկը: Խորհուրդ է տրվում փնտրել այնպիսի վերահսկողի, ով պայուն է գենդերային հարցերում և ունի կանանց ու երեխաների նկատմամբ բռնության ոլորտում փորձ:

Մասնագիտական հեռավորությունն անհրաժեշտ բաղադրիչ է որևէ թիմի կամ ամբողջ կազմակերպության արդյունավետ վերահսկման համար: Ուստի որակական կարևոր չափանիշներից է այն, որ վերահսկումն իրականացվի անկախ վերահսկողի կողմից:

Վերահսկումը պետք է տեղի ունենա որոշակիորեն սահմանված միջավայրում, ինչը վերաբերում է ինչպես հաստատված վերաբերմունքին, այնպես էլ կանոններին, որպեսզի առաջադրանքը հնարավոր լինի իրագործել հնարավոր լավագույն հանգամանքներում:

Մասնագիտական սուպերվիզիան պետք է պարտադիր լինի ողջ անձնակազմի, ինչպես նաև կամավորների համար, **որևէ աշխատող մասնագիտորեն հուսալի չի կարող լինել, եթե չունի իր վրա աշխատելու պատրաստակամություն:**

Ամեն ապաստարանում պետք է լինի առնվազն թիմի վերահսկողություն: Իմաստ ունի անհատական վերահսկողություն իրականացնել խորհրդատվական աշխատանքը վերանայելու համար: Սա հատկապես կարևոր է նոր աշխատակիցների պարագայում:

Վերահսկման հաճախականությունը կախված է անձնակազմի թվից և խմբի ընդհանուր փորձառությունից: Այն կարող է սկսվել ամսական վերահսկողությունից մինչև շաբաթական վերահսկողություն, եթե ծառայությունը նոր է հիմնվել:

Ինչո՞ւ է ապաստարանում վերահսկումն այդքան կարևոր









Վերահսկումը հոգատար անձնակազմի ու բռնությունը վերապրածների հարաբերության գլխավոր ու անբաժանելի մասն է: Երկրորդային հետ-տրավմատիկ սթրեսի սինդրոմը վերահսկումը դարձնում է անհրաժեշտություն, քանի որ այն սկիզբ է առնում այն մարդկանց մասին հոգ տանելուց կամ նրանց լսելուց, ովքեր տրավմա են ապրել: Ապաստարանի աշխատողները շարունակաբար առնչվում են կանանց պատմած տրավմատիկ պատմությունների հետ: Աշխատողները կարող են նաև դառնալ կանանց կողակիցների

վերաբերմունքի ակնառես, օրինակ՝ դատարանում, կամ վերջինները կարող են ներխուժել ապաստարան կամ ճգնաժամային կետերում:

Եթե կնոջ անձնական դրությունը աշխատակիցներից որևէ մեկին անհանգիստ վիճակի մեջ է դնում՝ դառնալով ուժեղ պագցմունքների պատճառ (բարկություն, անվորության կամ անհամաչափ ուժի պագցողություն, խղճմտանք, սեր և այլն) կամ վերականգնում է անցյալի անձնական փորձառության հիշողություններ կամ այլ կերպ ստեղծում է հոգատար հարաբերության մեջ սառնություն, վերահսկումը կարող է օգնել կնոջ հետ աշխատանքի նոր ուղիներ գտնելու հարցում: Սրան կարելի է հասնել՝ օգնելով անձնակազմի անդամին աշխատել սեփական հույսերի վրա ու գիտակից լինել սեփական ապրումներից՝ ինչպես գիտակցական, այնպես էլ հույական մակարդակում:

Հարաբերությունը կնոջ կամ երեխայի հետ հաճախ կարող է առաջ բերել հույսեր, որոնք կոժվարեցնեն աշխատանքի շարունակումը՝ ստեղծելով շփոթմունք, բախում կամ խճճվածություն:

Վերահսկման անհրաժեշտությանը բխեցնող իրավիճակներից են.

-  բարկությունը, որի պատճառը գաղտնիության կանոնի խախտումն է ինչ-որ մեկի կողմից,
-  ապաստարանում ապրող կնոջը կորցնելու սզալի պագցողությունը, երբ նա հեռանում է ապաստարանից,
-  անվորության պագցողությունը, եթե կինը որոշում է վերադառնալ իր բնակարար կողակցի մոտ,
-  կանանց հետ ամենօրյա շփումների ժամանակ առաջացած խնդիրներն ու դժվարությունները,
-  գործընկերների հետ բախումները,
-  ապաստարանի կանոնների ու վարքականոնի հարկադրումը, երբ ապաստարանի որևէ բնակիչ խախտում է դրանք,
-  անձնակազմի ժողովների կառավարումը,
-  ապաստարանի անձնակազմի անդամների տարբեր դերերի հաշվի առնելը և դրանք հարգելը:

Ուղղորդման ներքո գտնվող խմբի և արտաքին վերահսկողի հետ խնդիրների մասին կիսվելն ու դրանք վերլուծելը՝ փուլակցված պաշտպանվածության ու ապահովության պագցողությամբ, որը կապահովի որոշակիորեն սահմանված միջավայրը, կիեշտացնեն անձնակազմի միջև առաջացած կոնֆլիկտները, որոնք կարող են հեշտությամբ առաջանալ դժվար ու տրավմատիկ իրավիճակներում սերտորեն աշխատելուց:

Վերահսկման շնորհիվ արձանագրվում են հետևյալ արդյունքները.

- հույսեր կարգավորման արգելափակումների խնդրի լուծում,
- վերահամոզմունք ու աջակցություն շարունակելու աշխատանքը կանանց հետ, ովքեր ծանր տրավմա են տարել:

Անշուշտ, ապաստարանում աշխատելու փորձ ունեցող աշխատակիցները բավարար որակավորում ունեն Նոր աշխատակիցներին խորհուրդներ տալու և օգնելու նրանց վերանայել աշխատանքը: Այս տեսակի ներքին աջակցությունն անվանում են «փոխհսկում», որը նույնը չէ, ինչ վերահսկումը:

Վերահսկում կարելի է նաև իրականացնել կապակերպական վարձագման դեպքում, որի ժամանակ այն կծառայի որպես հարթակ ապաստարանի կառուցվածքների ու գործառնությունների քննարկման և դրա վարձագումն ու նպատակներն առաջ մղելու համար (տե՛ս «Կառավարում» բաժինը):

7.12 ԿԱՄԱՎՈՐՆԵՐ ԿԱՄ ՀԱՄԱՍՏԱՐԱՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆՏՆԵՐ

Յուրաքանչյուր ապաստարանի ինքն է որոշում վերցնել կամավորների, թե՛ ոչ: Սույն ուղեցույցում առաջ մղվող սկզբունքները պնդում են, որ ապաստարանի անձնակազմը պետք է վարձատրվի, իսկ ապաստարանները պետք է հարկադրված չլինեն հենվել կամավորների վրա՝ ֆինանսական միջոցների պակասի պատճառով: Հիմնական ծառայությունները պետք է տրամադրվեն վարձատրվող անձնակազմի կողմից:

Կամավորների հետ աշխատելիս՝ պետք է պահպանվեն հետևյալ պահանջները.

- Կամավորների աշխատանքը պետք է համակարգվի ապաստարանի մեկ աշխատողի կողմից, ում պատասխանատվությունն է կամավորների հետ կապված հարցերով պահվելը:
- Կամավորները պետք է լինեն կանայք, ովքեր իրապես են գենդերային հիմքով խտրականության մասին և ունեն ուժեղ մոտիվացիա՝ իրենց ժամանակը ներդնելու բռնության ենթարկված կանանց ու երեխաների հետ աշխատելու մեջ:
- Երբ կինը դիմում է ապաստարանում կամավոր աշխատելու համար, նրան հարցազրույցի ժամանակ պետք է հարցնել իր ակնկալիքների ու գաղափարների մասին:
- Միայն նման հարցազրույցից հետո պետք է երկու կողմերն էլ որոշեն, թե արդյո՞ք կինը համապատասխանում է այդ աշխատանքին, թե՛ ոչ: Եթե այո, ապա պետք է կնքվի պայմանագիր, որում մանրամասնորեն նշված կլինի կամավոր աշխատանքի տևողությունն ու ակնկալվող պատասխանատվությունները:
- Կամավորները պետք է ընդունեն ապաստարանի կանոնները (գաղտնիություն, վարքականոն և այլն): Կամավորները պետք է ստանան բավարար

վերապատրաստում և լինեն համապատասխան վերահսկողության ներքո:

- Կամավորները պետք է իրենց աշխատանքի համար ստանան առավելագույն հարգանք: Գործընկերոջ հետ կարող է պատահել վերաբերմունքի թեթև անփութություն (սպասեցնել տալ, կարևոր տեղեկատվություն փոխանցելը մոռանել և այլն), սակայն նման բացթողմները կարող են ավելի լուրջ հետևանքներ ունենալ, եթե տեղի ունենան կամավորների հետ: Դա կարող է նրանց մոտ առաջացնել վզացողություն, թե իրենց աշխատանքը կարևոր չէ:



ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐ

8. ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ֆիզիկական բռնությունից ապաստարան փնտրող կանայք ու երեխաները կարիք ունեն ապահով վայրի, որտեղ նրանք պաշտպանված կլինեն իրենց կողակցի, հոր կամ այլ հարապատի բռնարար վարքագծից: Որոշ դեպքերում բռնարարները շարունակում են իրենց ագրեսիվ ու սպառնալից վարքագիծը կանանց ու երեխաների նկատմամբ, նույնիսկ երբ նրանք ապաստարան են տեղափոխվել: Հաճախ նրանք ցանկանում են, որ կինը վերադառնա տուն այս նպատակին հասնելու տարբեր միջոցներ են կիրառում՝ աղաչում-պաղատում են, ծաղիկներ են նվիրում, խոստանում են, որ այլևս երբեք բռնություն չեն գործադրի: Այս ռավավարությունների ձախողման դեպքում կարող են ի հայտ գալ բռնության հանկարծակի պոռթկումներ: Որոշ բռնի տղամարդիկ չափազանց վտանգավոր են, հրաժարվում են համակերպվել բաժանվելու մտքի հետ, դիմում են վանգվածային ու կյանքին սպառնացող բռնությունների:

Վտանգի են ենթարկվում ոչ միայն ապաստարանում բնակվող կանայք ու երեխաները, այլև՝ այնտեղ աշխատողներն ու ներկա այլ մարդիկ: Եվրոպայում շատ ապաստարաններ են ենթարկվել բռնի հարձակումների, չնայած դրանց հետևանքները բարեբախտաբար ոչ միշտ են ծանր եղել: Այնուամենայնիվ, կանանց ապաստարանները պետք է միշտ պատրաստ լինեն սպառնալիքների ու հարձակումների խնդիրը հաղթահարելուն:

Ուստի անվտանգությունը կարևորագույն խնդիր է, այն ապաստարանի նպատակն է ու օրակարգը: Բավականին կարճատես մոտեցում է պետական մարմինների կողմից փորձել այս ոլորտում գումար խնայել, քանի որ ծայրահեղ իրավիճակներում նախապգույնության միջոցառումներն ու համակարգերը կարող են կյանքեր փրկել:

Ոստիկանությունը պատասխանատու է երաշխավորել ողջ հանրության անվտանգությունն ու ապահովությունը, ուստի և ապաստարանինը, այնպես որ կարևոր է նրանց ներգրավել անվտանգության ռավավարությունն ու պլանը մշակելու գործընթացում: Տեսանկարահանող սարքերը, անհապաղ արձագանքի նպատակով ուղիղ հաղորդակցության կապը ոստիկանական բաժինների հետ պարտադիր են:



Հաջորդ էջում ներայացված են անվտանգությանն առնչվող կարևորագույն կետերը:

8.1 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Տեխնիկական անվտանգության նախապգույնությունը չափազանց կարևոր է կանանց ապաստարանում: Անհրաժեշտ չափորոշիչները պահանջում են հետևյալ նախապգույնական միջոցները.

-  **անվտանգ մուտքեր**, որոնք հնարավոր չէ ուժով բացել,
-  մուտքերը պետք է միշտ կողպված լինեն, ելումուտը պետք է դիտարկվի: Իդեալական տարբերակում պետք է լինի **տեխնիկական դիտարկման համակարգ** (տեսանկարահանող սարքեր, դռների կողպման և բացման ավտոմատացված սարքեր)
-  Եթե շենքն ունի մի քանի մուտք, սա անվտանգության խնդիր է, ուստի ապաստարանը պետք է ունենա մեկ հիմնական մուտք: Ելք ունեցող մյուս բոլոր դռները պետք է կողպված ու ներսից փակված լինեն, որպեսզի դրանք դրսից ուժով բացելու հնարավորություն չլինի:
-  **Բակ** կամ **այգի** ունենալը դրական ազդեցություն կարող է ունենալ կանանց ու երեխաների վրա, սակայն այն անտվանգության ռիսկ է պարունակում: Բակը կամ այգին նույնպես պետք է ապահովագրված լինեն բռնի մուտքից, պետք է հնարավոր չլինի դրսից նայել ներս, իրեր շարժել ներս կամ կրակել: Սա նշանակում է շատ բարձր պատ, արգելապատնեշ, պաշտպանիչ պարիսպ կամ ազդանշանային համակարգ:
-  **Բակի** կամ **այգու դարպասները** նույնպես ապահով պետք է լինեն, ապաստարանի աշխատողները պետք է ունենան այն կողպելու, հատկապես գիշերը, սովորություն:
-  **Առաջին հարկի պատուհանները** անվտանգության ռիսկ են պարունակում, իսկ դեպի փողոց պատուհան ունեցող առաջին հարկի սենյակները չպետք է գործածվեն որպես բնակելի կամ աշխատանքային տարածքներ:
-  Առաջին հարկի պատուհանները կամ նրանք, որոնց հնարավոր է դրսից հասնել, պետք է պաշտպանված լինեն **վանդակացանցով**:
-  Կանանց յուրաքանչյուր ապաստարան պետք է զինված լինի ազդանշանային համակարգով, որի միջոցով հնարավոր կլինի կանչել ոստիկանություն արտակարգ դեպքերում:

Անվտանգության առավել կարևոր բաղադրիչների ամփոփում.

- Ամուր, ապահով դռներ
- Դռները մշտապես կողպված են, ելումուտի տարածքը դիտարկվում է
- Պատուհանները ցանցավանդակներով են
- Ահապանգի ուղիղ կապ ոստիկանության հետ:



8.2 ՀԱՍՑԵՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ, ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Շատ ապաստարանների հասցեները գաղտնի են պահվում, որպեսզի ապահովվի այնտեղ ապաստարանած կանանց ու երեխաների անվտանգությունը: Հանրայնացված է միայն թե՛ գծի հեռախոսահամարը: Օգնություն փնտրող կանանց հասցե է տրվում միայն այն ժամանակ, երբ նրանք գնում են ապաստարան: Որոշ դեպքում կանանց ու երեխաներին ապաստարանի աշխատակիցները նախապես պայմանավորվածությամբ հանրային որևէ վայրից վերցնում են ու տանում ապաստարան: Սակայն նույնիսկ այն դեպքերում, երբ հասցեն գաղտնի է մնում, այն հնարավոր է լինում բացահայտել, հատկապես եթե ապաստարանը գործում է արդեն որոշակի ժամանակ: Ուստի առաջանում է անվտանգության նախապաշտպանությունների հավելյալ կարիք:

Փոքր քաղաքներում անհնար է ապաստարանի վայրը գաղտնի պահել: Նման դեպքերում խորհուրդ է տրվում կիրառել նախահարձակ լինելու մեթոդը բոլորին տեղեկացնել՝ որտեղ է ապաստարանը, հանրայնացնել ապաստարանի հասցեն, ներգրավել ոստիկանությանն ու տեղական կառավարման մարմիններին անվտանգության պլանավորման գործընթացում:

Հատկապես գյուղական վայրերում շատ կարևոր է ներգրավել հարևանությանը, որպեսզի ապահովվի վտանգի արագ ու ժամանակին բացահայտումը և անհապաղ օգնություն կապակերպով: Համապատասխան կառույցներն ու շրջակայքում բնակվողները պետք է ակտիվ դերեր ունենան անվտանգության պլանավորման մեջ (ոստիկանական հաճախակի պահակություն, հարևանության իրավեկում և խնդրանք, որ տեղեկացնեն ապաստարանին կամ ոստիկանությանը կասկածելի բան նկատելու դեպքում):

Յուրաքանչյուր ապաստարան պետք է ինքը որոշի, թե կախված իր տեղադիրքից ու ռեսուրսներից՝ ինչ ռազմավարություն ընդունել ու այնուհետև մշակի անվտանգության պլանը՝ ըստ ներքևում նկարագրվածի: Եթե հարցը վերաբերում է անվտանգությանը, էական նշանակություն ունի կանոնների պահպանումն ու բոլորի կողմից անվտանգության միջոցառումների կատարումը:

8.3 ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ

Անվտանգության հարցերում անբաժանելի է արդյունավետ համագործակցությունը ոստիկանության հետ: Անվտանգության պլանի մշակումը պետք է տեղի ունենա նախքան ապաստարանի բացումը, իսկ պլանը պետք է մշտապես վերանայվի:

Անվտանգության անհրաժեշտ նախապաշտպանությունը ներառում է հետևյալը.

- Ապաստարանը պետք է ունենա անվտանգության տեխնիկական համակարգ, որի միջոցով հնարավոր կլինի անմիջապես ահազանգել ոստիկանությանը լուրջ վտանգի դեպքում (կոճակով ակտիվացվող ահազանգի գիծ ոստիկանությանը, ինչպես բանկերում է):

- Ոստիկանությունը պետք է ունենա ապաստարանի հատակագիծը և տեղյակ լինի, թե ինչ մուտքեր կան, տարածքում ինչ շինություններ կան, ինչպես են տեղակայված և այլն:

- Արտակարգ դեպքերում գործելու պլան:

- Ոստիկանության հետ պետք է լինեն պարբերաբար հանդիպումներ՝ քննարկելու անվտանգության հարցերը:

- Ինչպես անվտանգության բոլոր պլանների դեպքում, սա նույնպես պետք է պարբերաբար գնահատվի ու թարմացվի (տարեկան կտրվածքով):

8.4 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ ՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Որոշ կանայք ու երեխաներ հատկապես բարձր ռիսկի ներքո են գտնվում, եթե նրանց բռնարարի գնահատման արդյունքում նա գնահատվել է որպես շատ վտանգավոր: Բռնարարները կարող են սպառնալ ու վտանգի ենթարկել ոչ միայն իրենց կողակիցներին, այլև ապաստարանում գտնվող այլ կանանց, ինչպես ցույց են տալիս վերը նշված օրինակները:

Ուստի շատ կարևոր է, որ բռնարարի սպառնալիքի վտանգավորությունը գնահատվի անհատապես և յուրաքանչյուր կնոջ դեպքում մշակվի անվտանգության պլան, որը կներառի հետևյալ հարցերը.

- ապաստարանում նրա կեցության տևողությունը,
- այն դեպքը, երբ կինը վերադառնա կողակցի հետ ապրելու,
- այն դեպքը, երբ կինը որոշում է բաժանվել կողակցից ու առանձին ապրել:

Ապաստարանում յուրաքանչյուր ոք պետք է տեղյակ լինի, թե ովքեր են այն անձինք, որ գնահատվել են հատկապես վտանգավոր, և որոշ ժամերի ավելի խստացված անվտանգության միջոցներ պետք է կիրառվեն: Մի չափազանց կարևոր միջոց է բռնարարին պարզ նախապաշտպանությունը, որ կան հանդուրժելու որոշակի սահմաններ, ասենք, եթե ինքը պահ գա ապաստարանի դիմաց կամ մոտակայքում իր կողակցին կամ/և երեխաներին տեսնելու նպատակով: Ապաստարանի մոտակայքում տեղի ունեցող խոսակցությունները չափազանց վտանգավոր են և հաճախ հանդիսանում են բռնության առիթ: Օրինակ, Վիեննայի ապաստարաններից մեկում երբ կինը մոտեցել էր ապաստարանի գլխավոր մուտքին իր կողակցին «հանգստացնելու», արդյունքում ստացել էր դանակի հարվածներ: Տղամարդը ցանկանում էր, որ նա վերադառնա տուն, իսկ կինը մերժել էր, որից հետո տղամարդը դանակահարել էր կնոջը: Նույն կերպ, հանդիպումները ապաստարանից դուրս նույնպես կարող են կնոջը մեծ ռիսկի ենթարկել:


Ինչպես բացատրվել է **Գլուխ 2-ում**, հատկապես բարձր է ծանր, ամենայն հավանականությամբ՝ կյանքին սպառնացող բռնության ռիսկը, երբ ընթանում է բաժանման և ամուսնալուծության գործընթաց, ուստի այս ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձվի անվտանգության նկատառումներին: **Քանի որ Հայաստանում դատավարությունները կարող են ընթանալ մեկ տարի և ավելի, բռնության ենթարկված կանայք կարող են վերադառնալ ապաստարան, եթե դատական նիստերի ժամանակ իրադրությունն ավելի վտանգավոր է դառնում:**

Շատ ապաստարաններում գործածում են ստուգացանկեր, որպեսզի գնահատեն բռնարարի վտանգավորությունը և մեկ այլ ստուգացանկ, որպեսզի ապաստարան գտած կնոջ հետ միասին կազմեն անհատական անվտանգության պլան (**այդպիսի ստուգացանկ կա Կանանց աջակցման կենտրոնում հայերեն լեզվով**):

8.5 ՀՐԴԵՀԻ ԿԱՆԳԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ

Ավելորդ է հիշեցնել, որ ապաստարանները պետք է պահպանեն անվտանգության այլ չափանիշներ՝ նույնպես, ինչպես օրինակ՝ հրդեհի կանխարգելման անհրաժեշտ միջոցառումներն են:

Նույնն ակնհայտորեն վերաբերում է անվտանգության մյուս միջոցներին, ասենք՝ էլեկտրական վարդակներ՝ պաշտպանված երեխաների միջամտությունից, խաղալիքների, կենցաղային տեխնիկայի անվտանգության ստանդարտ միջոցներառումներ:








**ՀԱՄԱՅՆԱԿԱՆ
ԿՅԱՆՔՆ
ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ**

9. ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՆ ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ

Ապաստարանները տրամադրում են ծառայություններ, որոնք պարտավոր են բավարարել արդյունավետության ու պրոֆեսիոնալության բարձրագույն հնարավոր չափորոշիչները, ուստի դրանք կարիք ունենալու անհատներին օգնելու նպատակով ստեղծվել են: Ինստիտուցիոնալ կառույցներն իրենց դերն ունեն, սակայն դրանք հղի են վտանգով, որ հաստատության կանոնները կարող են ավելի մեծ կարևորություն ստանալ, քան այն մարդիկ, հանուն ում ստեղծվել է հաստատությունը: Կառուցվածքային սկզբունքները կարող են այնքան ուռճանալ, որ վրկեն անհատին իր ապաստանից ու իշխեն նրա կյանքի նկատմամբ: Ուստի ապաստարանը պետք է զգույշ լինի պահպանելու ողջամիտ հավասարակշռություն անհատի, համայնքի և հաստատության շահերի միջև:

Ընդհանուր առմամբ, կյանքն ապաստարանում պետք է պլանավորվի այնպես, որ երաշխավորվի հետևյալը.

-  անհատական ապաստանի ամենաբարձր հնարավոր աստիճան, հարգանք առանձնության ու իրավունքների նկատմամբ
-  Որոշակի իրավիճակում անհրաժեշտ պահանջներից ու կանոններից ավելին պետք է չլինեն
-  Մասնակցություն, համատեղ որոշումների կայացում, խորհրդակցություն
-  Համերաշխության ու համայնական ոգի
-  Կարծիք հայտնելու ու բողոք ներկայացնելու շրջանակ:

Ապաստարանի համայնքում ապրելու գլխավոր բնորոշիչներից են՝ ինքնավարությունը, համերաշխությունը, հարգանքը բազմապատկանության ու մարդու իրավունքների նկատմամբ: Այս նկատառումներն իրենց կնիքն են թողնում ինչպես ապաստարանի ներքի կազմակերպման, այնպես էլ՝ դրա նկատելի բնույթի վրա՝ դարձնելով այն անշփոթելի կազմակերպական ինքնություն:



9.1 ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապաստարան փնտրող կանայք ու երեխաները անդադար անհանգիստ վիճակում են: Առաջին բանը, որ նրանց պետք է, ապահով զգալն ու կողմնորոշում գտնելն է: Ուստի շատ կարևոր է նոր եկած կանանց ու երեխաներին բացատրել ապաստարանի կառուցվածքն ու սկզբունքները:

Ապաստարանում պետք է առկա լինի հայերեն ու ռուսերեն շարադրված «Ապաստարանի ուղեցույց»: Ապաստարանի ուղեցույցը պետք է թվարկի ապաստարանի սկզբունքները, այնտեղ բնակվող կանանց ու երեխաների իրավունքները, նրանց տրամադրվող ծառայությունները, կանոններն ու պարտականությունները: Ապաստարանի ուղեցույցը չպետք է կազմված լինի բացառապես արգելքներից ու պարտականություններից:

Կանոնները ծառայում են որպես հիմք համատեղ ապրելու համար, ուստի դրանք պետք է պահպանվեն: Սակայն միևնույն ժամանակ շատ ավելի հեշտ է պահպանել կանոններն այն դեպքում, երբ մարդը գիտակցում է, թե դրանք ինչու են ստեղծվել և որ դրանք կարևոր են: Բնակիչները պետք է կանոններն ընկալեն որպես օժանդակ մի բան խաղաղ համակեցությանը, ոչ թե որպես հարկադրանք, կամ ավելի վատ՝ որպես կամայական ռեժիմի սահմանում:

Փորձնականում մարդիկ հակված են մոռանալ կանոնների մասին, այնպես որ կարևոր է պարբերաբար դրանք հիշեցնել նախքան մի բան կպատահի, ոչ թե մի բան պատահելուց հետո: Սկզբում կանանց ու երեխաների համար դժվար է լինում շատ բան մտապահել, նրանց ժամանակ է պետք պարզելու ու ըմբռնելու, թե ինչպես է աշխատում ապաստարանը:

Անվտանգության կանոնների պահպանումը կյանքի կամ մահվան հարց է, այնպես որ ապաստարանի բնակիչներին պետք է մշտապես հիշեցնել դրանց կարևորության մասին:

ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ապաստարանի կյանքը կառավարող կանոնները պետք է լինեն պարտադիր, սակայն անփոփոխելի չեն, այնպես որ կարևոր է դրանք ըստ անհրաժեշտության վերանայել: Բնակիչները պետք է ներգրավված լինեն կանոնների ձևակերպման ու ընդունման գործընթացում, օրինակ՝ ապաստարանի ժողովի միջոցով: Սակայն ապաստարանի անձնակազմը կարող է ընդունել այն կանոնները, որոնք բացարձակապես պարտադիր է պահպանել (օրինակ՝ անվտանգության կանոնակարգը):

Ապաստարանի բնակիչների համար պետք է հստակ ու ըմբռնելի լինի, թե որ կանոններն է հնարավոր փոփոխել և որոնք՝ ոչ: Ապաստարանի աշխատանքի սկզբունքները իր կազմակերպական ինքնության անբաժանելի մասն են ու չեն կարող կամայականորեն փոփոխվել: Սա նույնպես պետք է զգուշորեն բացատրել:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հատուկ հիշատակման է արժանի ինքնորոշման իրավունքը, երբ խոսքը բնակչի սեփական կյանքի մասին է: Պրակտիկայում սա նշանակում է, որ բնակիչն իրավունք ունի հեռանալ ապաստարանից ցանկացած ժամանակ կամ վերադառնալ իր բնարար կողակցի մոտ, եթե ցանկանում է: Սակայն նաև միշտ կարող է ապաստարանին նորից դիմել, եթե իրեն օթևան ու աջակցություն է պետք: Շատ դեպքերում կանայք ապաստարանից դուրս են գալիս ուժեղացած այն ռեսուրսներով, որոնց կարիքն իրենք կունենան բնարար հարաբերությունից ելք գտնելու ճանապարհին:



9.2 ԱՐԴԱՐ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Ապաստարանում կայացվելիք ամենադժվար որոշումներից մեկն այն է՝ արդյո՞ք ապաստարանի կանոններն ու համաձայնությունները խախտած կնոջը պետք է ապաստարանից հեռացնել կանխավ: Շատ կանայք բնակվելու որևէ այլ տեղ չունեն, ինչը շատ դժվարեցնում է ապաստարանի աշխատակազմի համար նրան վտարելը, դրան գումարած կան նրա երեխաները, ովքեր տառապում են դրա հետևանքներից: Սակայն որևէ որոշում չընդունելու դեպքում էլ կարող են տուժել մյուս կանայք ու երեխաները:

Հիմնարար պետք է լինի նկատառումը, թե որ տեսակի վարքագիծը կամ խախտումներն են այն աստիճանի լուրջ, որ կարող են հանգեցնել հեռացման: Քանի որ հետևանքները կարող են չափազանց հեռահար լինել, նման պատժամիջոցը պետք է խիստ հավադեպ կիրառվի, պետք է կանոնները խախտելու համար այլ հետևանքներ լինեն: Պետք է նաև հաշվի առնենք, որ կանոններն ուղեցույց են համայնական կեցության համար, և անիրատեսական կլինի պահանջել, որ դրանք երբևէ չխախտվեն:

Հաճախ ապաստարանի ուղեցույցները սահմանում են նորմեր, սակայն չեն նախատեսում գործընթացներ ու պատժամիջոցներ դրանք չկատարելու դեպքում: Ուստի կարևոր է հաստատել նման խախտումների խնդիրը կառուցողաբար լուծելու ֆորմալ գործընթացներ: Ցանկացած նման գործընթաց պետք է ներառի ու հարգի շահագրգիռ կնոջ իրավունքները:

Արդար լուրջ, որը կարող են բնակիչներն ըմբռնել, կարող է օգնել ամրապնդել ու պահպանել վստահությունն ապաստարանում: Դյուրըմբռնելի գործընթացների շնորհիվ հնարավոր է խուսափել անձնակազմի կողմից կամայական ընկալված որոշումների ընդունումից: Սա եղանակ է փորձելու հավասարակշռության բերել ապաստարանի անձնակազմի ու բնակիչների լիազորությունների անհավասարակշռությունը: **Կարելի է կիրառել 3 նախազգուշացում տալու համակարգ՝ նախքան ապաստարանած բնակչին վտարելը, բացառությամբ անվտանգության խիստ ծանր խախտումների, երբ կարող է կիրառվել անհապաղ վտարում:**

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ ԼՈՒԾՈՂ ԹԻՍ

Ապաստարանի կեցության պայմանները հաճախ կարող են խճողված լինել, ինչը հանգեցնում է բախումների, որոնք պետք է որքան հնարավոր է՝ արագորեն հարթվեն: Ուստի անձնակազմի որոշ անդամներ պետք է ստացած լինեն միջնորդելու ու կոնֆլիկտներ լուծելու վերապատրաստում, որպեսզի կարողանան կազմել կոնֆլիկտների լուծման թիմ: Խորհուրդ է նաև տրվում կոնֆլիկտների լուծման հմտությունները փոխանցել ապաստարանի բնակիչներին:

9.3 ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Ապաստարանում բնակվող կանայք ու երեխաները հնարավոր է հապաղեն մասնակցություն դրսևորել, հատկապես՝ սկզբնական ժամանակաշրջանում: Նրանց ժամանակ է պետք: Սակայն անձնակազմը նույնպես պետք է միշտ ապահովի նրանց ներգրավվածությունն ապաստարանի պլանավորման ու պրակտիկ ղեկավարման մեջ: Կարևոր է հատուկ եռանդ ներդնել բնակիչների ներգրավման մեջ: Սրան հետևող փաստարկման, քննարկման, որոշումների կայացման, բախվող շահերի ու այլ բախումների խնդիրների լուծման գործընթացներն, ինչպես արդեն ասվել է, բոլորի համար ուսուցողական են:

Միգուցե որոշ ժամանակ խնայվեք, եթե ապաստարանի անձնակազմն ինքը բոլոր որոշումները կայացնեն, սակայն այդ պարագայում ապաստարանի բնակիչները շուտով կզգային, թե իրենց նկատմամբ վարչարարություն է իրականացվում, այլ ոչ թե հպորացում, որպեսզի իրենք ինքնուրույն որոշեն իրենց կյանքի ու ապաստարանի համայնքի հետ կապված հարցերը: Վերևից իջեցվող որոշումների կայացման մեկ այլ թերություն այն է, որ մարդիկ, ում վերաբերվում են կարծես երեխաների, միտում ունեն հենց այդպես էլ վարվել դիմադրել, պասիվանալ և ոչ թե վարվել անկախ մտածողությամբ մեծահասակի պես, որը հենց իրենք են:

9.4 ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՎԵԼՅԱԼ ՀԱՐՑԵՐ

Ապաստարանում բնակվող կանանց ու երեխաների իրավունքներից ու պարտականություններից վեր կան հանգամանքներ, որոնք ձևավորում են ապաստարանում կանանց ու երեխաների համայնական կյանքը: Կարևոր նպատակներ են՝ ոչ-բռնության միջավայրը և լիազորության հավասար բաշխումը, թեև դրանց իրականացումը ոչ միշտ է հեշտ: Կանայք ապաստարանի կյանքում ակտիվ դեր ունեն, որն արտահայտվում է կարծիք հայտնելու, արտաքին գնահատմանը մասնակցելու, սոցիալական փոփոխության գործընթացում ներգրավված լինելու միջոցով: Բազմապատկանությունն ու համերաշխությունը հնարավորություններ են մատուցում, որոնք պետք է որքան հնարավոր է՝ լայնորեն օգտագործվեն:

ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՈՒՄ

Յուրաքանչյուր ապաստարան այն կարևոր սկզբունքն է պահպանում, որ որևէ բռնություն հանդուրժելի չէ: Երբ նեղվածք պայմաններում մեկ կտուրի տակ ապրում են մի քանի մարդիկ, իսկ ապաստարանում հաճախ այդպես էլ լինում է, վստահորեն առաջանում են կոնֆլիկտներ ու զգացմունքային պոռթկումներ: Հոգեբանական ու ֆիզիկական բռնություն կարող է տեղի ունենալ նույնիսկ ապաստարանում՝ երեխաների ու երիտասարդների միջև, կանանց միջև կամ երեխաների նկատմամբ:

Ապաստարանում համայնական կյանքի կարևոր հիմնասյուներից է բռնության խնդրի լուծման կառուցողական մոտեցումը: Բավարար չէ միայն հռչակել, որ բռնությունն անթույլատրելի է: Ոչ բռնի համակեցությունը պահանջում է, որպեսզի բոլորն իրենց ակտիվ ներդրումն ունենան, բացահայտեն ու կանխեն հավանական բռնի կոնֆլիկտը և կոնֆլիկտների հետ առնչվելիս՝ գործեն կառուցողաբար (տե՛ս վերը): Այս հարցի մի կողմն այն է, որ կանայք ու երեխաները սովորեն իրենց պաշտպանել բռնությունից:

Երեխաներն ու երիտասարդները նույնպես պետք է սովորեն, որ ապաստարանը մի վայր է, որտեղ բռնությունն անհանդուրժելի է: Ուստի անհրաժեշտ է աշխատել մայրերի հետ ոչ-բռնի կրթության շուրջ:

ՈՒԺԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄ

Նույնիսկ ապաստարանում, չնայած հավասարություն հաստատելու լավագույն մտադրություններին, ուժը հավասարապես չի բաշխված: Ապաստարանի աշխատողներն ավելի ուժեղ դիրքում են, քան բնակիչները, իսկ երեխաները՝ ավելի թույլ դիրքում, քան մեծահասակները: Տվյալ երկրի տեղացիների լեզուն խոսող կանայք առավելություն ունեն նրանց նկատմամբ, ովքեր այդ լեզուն չեն խոսում և այլն: Անհնար է ապաստարանում նման անհավասարակշռությունները վերացնելը, ուստի առավել կարևոր է դառնում դրանց արդյունավետորեն անդրադառնալը:

Պետք է դրվեն հետևյալ նպատակները.

- Բարձրացնել ուժերի անհավասարակշռության մասին ընկալումն ու անդրադառնալ դրան:
- Հավասարակշռել դրանք՝ որտեղ հնարավոր է (օր՝ ներգրավման ու բնակիչների իրավունքների պահպանման միջոցով)
- Տարբերություններին ու բավարարչությանը վերաբերվել որպես ուժեղ կողմերի և ոչ թե թերությունների (օրինակ՝ նշել, որ կինը խոսում է այս-և-այս լեզուն, միգրացիոն ուրիշներն էլ են խոսում այդ լեզուն, և ոչ թե կենտրոնանալ նրա վրա, որ նա չի խոսում տեղացիների լեզուն)
- Մշտապես աշխատել ուժի չարաշահումը կանխելու ուղղությամբ:

Ինչպես արդեն նշվել է, ժողովրդավարական կառուցվածքների գործադրումն ու դրանց մեջ մասնակցությունը կարևոր մոտեցումներ են ուժի անհավասար բաշխումը, իշխանության չարաշահումը նվազեցնելու և բռնությունը կանխելու համար:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ

Ապաստարանը դեմոկրատական ու պրոֆեսիոնալ ձևով կազմակերպելու եղանակներից մեկն այն է, որ ապաստարանի ծառայություններից օգտվող կանայք հայտնեն իրենց կարծիքը տարբեր հարցերի շուրջ: Ներքին գնահատում իրականացնելու միջոցով հնարավոր է բարձրացնել ապաստարանի ծառայությունների որակը: Պատասխանները պետք է անդրադառնան ապաստարանի կյանքի հետ կապված ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերին:

Կարծիք հավաքագրելու տարբեր մեթոդներ կան: Դրանցից մեկը հարցաշարն է, որը կինը լրացնում է՝ ապաստարանից դուրս գալիս: Մեկ այլ եղանակը փոստարկղն է, որտեղ կարելի է հավաքել առաջարկներ ու բողոքներ: Կարծիքը պետք է լինի անանուն, բնակիչները ստիպված են ապավինել անձնակազմի աջակցությանը, այնպես որ անձնապես քննադատություն հնչեցնելը կարող է դժվար լինել:

Պետք է նաև լինի մարմին կամ մարդ, ում ապաստարանի բնակիչը կարող է բողոքել, եթե իր իրավունքների խախտում է տեղի ունեցել:

Ինչպես էլ կազմակերպված լինի ապաստարանը, գաղափարն այն է, որ բոլոր բնակիչները պետք է տեղեկացված լինեն, թե ինչպես և որտեղ է հնարավոր գրանցել բողոքները: Ապաստարանի աշխատողները չափազանց նվիրված են և անում են հնարավոր ամեն ինչ: Այդուհանդերձ, նրանք կարող են սխալներ թույլ տալ և չնկատել ինչ-որ մեկի խնդիրները, երբ խիստ զբաղված են լինում: Բողոք ներկայացնելու իրավունքին պետք է լրջորեն վերաբերվել՝ որպես դեմոկրատական հանրության մեջ հիմնարար քաղաքացիական իրավունք:

9.5 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻՆ

Ապաստարանում ծառայությունների որակի վերահսկման ու կատարելագործման մեկ այլ կարևոր եղանակ պարբերական արտաքին գնահատումների անցկացումն է: Ապաստարանի ծառայություններից օգտվող կանայք ու երեխաները մշտապես պետք է հրավիրվեն նման գնահատումներին:

ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ապաստարանի բնակիչները չպետք է պարզապես ներգրավված լինեն ապաստարանի ներքին գործընթացներում ու համայնական կյանքը կազմակերպող կառուցվածքներում, այլև՝ հնարավորություն ունենան մասնակցել դրսի միջոցառումներին, հանրային կապերի ու իրավեկման աշխատանքներին:

Անշուշտ, ոչ ոքի չի կարելի հարկադրել մասնակցել, կանանց անվտանգության ու անանունության պաշտպանությունը պետք է առաջնային լինի: Մյուս կողմից, կանանց պետք է վերաբերվել որպես սոցիալապես գիտակ ու ակտիվ անհատների և հրավիրել, որ իրենց նպաստը բերեն իրենց շահերին ու կարիքներին համապատասխանող տարբեր միջոցառումներին:

Օրինակներ.

Ապաստարանի բնակիչները ներգրավված են Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի, Հայաստանում ընտանեկան բռնության կոհ դարձած կանանց հիշատակի օրվա՝ Հոկտեմբերի 1-ի, Նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 10-ն անցկացվող «Բռնության դեմ պայքարի 16-օրյակի» նախապատրաստական աշխատանքներին:

Բնակիչները ուղեկցում են ապաստարանի աշխատակիցներին քաղաքական գործիչների հետ հանդիպմանը

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Ապաստարանում կյանքը կազմակերպելու մեկ այլ կարևոր նպատակներից է համերաշխության խթանումը: Համատեղ միջոցառումների պլանավորումը, փոխօգնության առաջարկումը, ապաստարանում տարբեր միջոցառումներ կազմակերպելը և միմյանց հետ խոսելը սեփական փորձառությունների մասին ընդամենը մի քանիսն են այն տարբեր ձևերի, որոնցով կարելի է ամրապնդել համերաշխության մթնոլորտը:

Օրինակ, վարսավիր աշխատած մի կին որոշել է ապաստարանում բնակվող մեկ այլ կնոջ մազերը հարդարել: Կամ երբ շահառուներից մեկը դուրս է եկել աշխատանքի կամ ուստիկանություն, իսկ մյուսը խնամում է իր երեխաներին:



Ապաստարանում որոշ ժամանակ ապրած կանայք օրինակելի դեր են կատարում նոր եկածների համար, նրանք կարող են հանդես գալ որպես «մենթորներ», օգնել դեռևս չկողմնորոշվող կանանց: Ապաստարանում ապրած կանայք երբեմն վերադառնում են որպես կամավորներ կամ անձնակազմի աշխատակիցները: Սրանք չափազանց կարևոր գործոններ են կանանց պորացման գործընթացում:



ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ
ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

10. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հանրային կապեր հաստատելու ու իրազեկում իրականացնելու նպատակը հանրային դիսկուրսի, հաղորդակցության, տղամարդու կողմից կանանց նկատմամբ բռնության և կանանց ապաստարանի մասին պատկերացման վերաբերյալ գործընթացներ ստեղծելը ու դրանց վրա ազդելն է: Սա նաև կառավարության պարտականությունն է: Հանրային կապերը պարտադիր են: Ո՞վ պետք է հոգ տանի կանանց ապաստարանի մասին, եթե ոչ՝ կին ակտիվիստներն ու ապաստարանի աշխատողներն իրենք: Տղամարդկանց բռնությունը կանանց նկատմամբ դեռևս թաքու թեմա է շատ երկրներում: Թվում է, թե հանրային հետաքրքրությունը ցածր է: Առանձին ծանոթներն ու մեկուսի աջակիցները չեն կարող ապահովել ապաստարանի աշխատանքի շարունակականությունը: Ապաստարանի աշխատողները կարիք ունեն աջակցող ցանցերի, որպեսզի հաջողեն հանրային կապերի հարցում:

Կանանց ապաստարան հիմնադրելիս՝ կարևոր է հիշել, որ նույնիսկ կանանց ապաստարանը որոշակի «գովապոլի» կարիք ունի: Կանանց ապաստարանի մասին տեղեկություններ հրապարակելու մի շարք պատճառներ կան, այդ թվում.

- Կանանց ապաստարանի առկայությունը
- Ընդգծել նման կազմակերպության կարևորությունը և տված օգուտը
- Տեղական միջավայրում ստեղծել ապաստարանի մասին դրական պատկեր
- Քաղաքական ու սոցիալական միջավայրում ստեղծել վստահություն
- Կարևոր դերակատարներին/հանրությանը համոզել պաշտպանել ապաստարանի մտահոգություններն ու նպատակները
- Քաղաքական լոբիզի և ֆինանսական աջակցության նպատակով ստեղծել աջակիցների ցանցեր:

Համապարփակ տեղեկատվական քաղաքականություն մշակելիս և ուղերձ ձևակերպելիս՝ կա հինգ կետ, որ անպայմանորեն պետք է հաշվի առնվի: Առաջինը վճռական դեր ունի կազմակերպական ինքնությունը ստեղծելու հարցում:

Ովքեր ենք մենք:

Կա երկու հարց, որ վերաբերում է վերջնական արդյունքին.

- Ովքեր են թիրախային խմբերը:
- Ո՞ր մեթոդներն ունեն ամենաբարձր բավապատկիչ գործոնը՝ կապված մեր միջոցների հետ:

Եվ վերջին երկու հարցերն ազդելի ուղղակիորեն են առնչվում բովանդակությանը:

- Ինչպե՞ս ենք սահմանում մեր առաջարկած ծառայությունները կամ ի՞նչ է (մեր) ապաստարանը և ի՞նչ այն չէ:
- Որո՞նք են մեր ապաստարանի վերաբերյալ տեղեկություններ փոխանցելու հետևանքները՝ կապված անվտանգության ու գաղտնիության հետ:

Ուղերձները պետք է տարածվեն լրատվամիջոցներով: Հանրային կապեր հաստատելու գործիքներ են.

- Կաշուն ազդագրերը ավտոբուսների, տաքսիների, հանրային տրանսպորտի համար
- Պաստառները դպրոցներում, ուսանողական հանրակացարաններում, հիվանդանոցներում, սոցիալական ծառայություններում, իրավաբանական գրասենյակներում, եկեղեցիներում, խորհրդատվական կենտրոններում
- Տեղեկատվական նյութերը, թռուցիկները, բուկլետները, թղթապանակները
- Վեբկայքը
- Շրջաբերական նամակները
- Մամլո հաղորդագրություններն ու հոդվածները թերթերում
- Մասնակցությունը փորձագիտական հանդիպումներին, համաժողովներին կամ քաղաքական դասախոսություններին
- Միջոցառումների կազմակերպումը, ինչպես օրինակ՝ դրամահավաքի խնջույքները, հանրային ցուցահանդեսները, երթերը
- Քաղաքական կուսակցությունների, տեղական ասոցիացիաների, հասարակական կազմակերպությունների հրավերների ընդունումը
- Հարցազրույցները ռադիոյով, հեռուստատեսությամբ և թերթերում
- Համագործակցությունը քաղաքական գործիչների և այլ որոշում կայացնողների հետ
- Հանրայնորեն սեփական փորձառությունից խոսելը (երբ բռնության ենթարկվածները և նրանց հարավատներն են խոսում հանրայնորեն):

10.1 ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ. ԻՆՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՔ ՉԷ ՏԱԼ

Ստորև ներկայացված ելրակացություններն արված են բացառապես իրականում տեղի ունեցած դեպքերի հիման վրա: Երբ որևէ թռուցիկ կամ որևէ պաշտոնական նամակ մեր ձեռքում չէ այլևս, մենք չգիտենք, թե այն որտեղ կհայտնվի: Նույնիսկ եթե այն շրջանառվում է միայն ապաստարանում, կարծես տեղեկատվական նյութերն իրենց սեփական կյանքն են վարձաքանում: Հաշվի առնելով սա, եթե ծառայության կարևոր բնութագրիչներից է ապաստարանի հասցեի գաղտնիությունը, չափազանց կարևոր է ապաստարանի հասցեն չօգտագործել որևէ տեղեկատվական նյութում, պաշտոնական նամակների գլխագրերում և այլն, ինչպես նաև որևէ կերպ չտարածել ապաստարանի շենքի լուսանկարը: Անվտանգության մեկ այլ նկատառում կարող է նաև լինել ապաստարանի աշխատակիցներին գաղտնի պահելը, այնպես որ մինչև տարեկան հաշվետվության մեջ անձնակազմի լուսանկար վետեղելը, խորհրդակցեք՝ արդյո՞ք ապաստարանում աշխատողների լուսանկարները նպատակահարմար է հանրայնացնելը: Անիրատեսական է ենթադրել, որ այն մարդիկ, ում դուք դիմում եք ֆինանսավորում ստանալու համար չեն լինի նրանք, ումից դուք ցանկանում եք թաքցնել ապաստարանի մասին տեղեկությունները կամ ովքեր չեն ունենա նման մարդկանց հետ ընդհանուր ծանոթներ: Որքան էլ գայթակղիչ չլինի ապաստարանում դրամահավաքի միջոցառում կազմակերպելը, մտածել մեկ այլ տարածքի մասին: Դոնորներն արդեն գիտակցում են, որ խիստ գաղտնիության քաղաքականության միջոցով դուք իրականում ձեր գործն եք անում, իսկ նրանց աջակցությունը չի կարող լինել ծառայության բուն գործունեությունը վտանգելու գնով:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Համագործակցության տարածված ձևերից մեկը միջուկորտային համագործակցությունն է: Այն կարող է տեղի ունենալ տարբեր հասարակական կազմակերպությունների միջև, ինչպես նաև ՀԿ-ների և տեղական ինքնակառավարման կամ կենտրոնական կառավարման մարմինների միջև: Երկու դեպքերում էլ ամենահաճախ գործածվող մոդելն այն է, որ ապաստարաններն իրենց նպաստն են բերում իրեն փորձագիտությամբ և խնդրի վերաբերյալ որակական ու քանակական տվյալներով, իսկ գործընկեր կազմակերպությունն ունենում է խնդիրը երևան դարձնող ուժեղ ազդեցություն՝ ոչ հեշտորեն հասանելի թիրախային խմբերին դարձնելով խնդիրն ավելի տեղյակ ու գիտակից: Համագործակցության օրինակ է Ամնեսթի ինթերնեշնլի կանանց նկատմամբ բռնության դեմ գլոբալ քարոզարշավը, որի համար այն ընտրել է տարածաշրջանային ու ազգային ռազմավարական գործընկերների, որոնք կանանց նկատմամբ բռնության ոլորտում տեղական մակարդակում ակտիվորեն աշխատող կանանց ՀԿ-ներ են: Ինչ վերաբերում է ՀԿ-կառավարություն համագործակցությանը, մինչ այժմ հաջողված համագործակցության օրինակներն են ոստիկանության և դատախազության հետ կազմակերպված դասընթացներն ու այլ միջոցառումները:

10.2 ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ



Դասընթացների նյութը, օժանդակ նյութերը ու միջազգայնացումները հասանելի են Կանանց աջակցման կենտրոնում ինչպես շահառուների համար, այնպես էլ անձնակազմի:




ՆԵՐՔԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ


Քանի որ գոյություն չունի ապաստարանում աշխատելու որակավորում տվող ստանդարտացված կոչում, ապաստարաններից շատերն իրենց անձնակազմի նոր անդամներին՝ լինեն նրանք կամավորներ, թե վարձու աշխատողներ, իրենք են վերապատրաստում: Մինչ այժմ սա կարծես լավագույն եղանակն է ապահովելու ծառայության շարունակականությունը: Նման դասընթացները կարող են մարդկանց մի թիմում միաբանելու դեր ունենալ, այնպես որ խորհուրդ է տրվում փորձառու անձնակազմին կամ կամավորներին ներգրավել դասընթացներում կամ որպես խորհուրդ տվող անձանց կամ որպես դասընթացավարների:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ապաստարանները, անկախ նրանից՝ աշխատեցնում են իրենց իսկ շուրջօրյա թեժ գիծը, թե՛ ոչ, մեծապես կախված են այն ծառայություններից, որոնք իրենց են ուղղորդում այցելուներին կամ որոնք աշխատում են կանանց ու երեխաների հետ, ովքեր ապրում են ապաստարանում: Անկախ նրանից՝ դասընթացը կազմակերպում է ապաստարանը, թե համատեղ է կազմակերպվում այլ ծառայությունների, գերատեսչությունների և հաստատությունների հետ, այլ հաստատություններում աշխատող անձնակազմին մատուցվող դասընթացները շատ օգտակար են: Դասընթացների բովանդակությունը կարող է տարբերվել՝ ըստ այդ պահի հանգամանքների որոշ երկրներում, օրինակ, ընտանեկան բռնության մասին իրավեկվածության մակարդակը ավելի բարձր է, քան մյուսներում: Ուստի որոշ դասընթացներ միգրացիոն ավելի մանրամասնորեն անդրադառնան, թե ինչ է անում ապաստարանն իր այցելուների համար և ինչպես է անում, մինչդեռ այլ դասընթացներ կարող են շեշտը դնել ընտանեկան բռնության հիմնական կետերի վրա:

Խորհուրդներ՝ կապված նման դասընթացների հետ.

-  Հնարավորության դեպքում նման դասընթացները պետք է անցկացվեն մասնակիցների սովորական աշխատանքային միջավայրից դուրս:
-  Դասընթացը պետք է ներառի փոքր խմբի (առավելագույնը՝ 15 մասնակցի), որը դասընթացավարին թույլ կտա ուսումնառության գործընթացի մեծ մասն անցկացնել ինտերակտիվ վարժանքների միջոցով՝ ի տարբերություն մասնակիցների առջև բանախոսելուց:
-  Դասընթացավարների թիմը պետք է ներառի ինչպես ապաստարանի դասընթացավարի, այնպես էլ այն ոլորտից վարողի, որի ներկայացուցիչները մասնակցում են դասընթացին: Կարևոր է, որ գենդերային առումով խառը խմբերում դասընթացավարները նույնպես տարբեր գենդերների լինեն:



ՑԱՆՑԵՐԻ
ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

11. ՑԱՆՑԵՐԻ ԱՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կանանց ապաստարանի աշխատանքը կապված է մի շարք հաստատությունների ու ծառայությունների հետ, որոնք կարող են աջակցել բռնության ենթարկված կանանց հարցերում, եթե դրանց ներկայացուցիչները տեղեկացված լինեն ընտանեկան բռնության հատուկ դիմամիկայի մասին: Ապաստարանի աշխատողներն իրենց այցելուների հետ պետք է քննարկեն, թե ինչ ընթացակարգեր անհրաժեշտ կլինեն և որ հաստատություններին է պետք դիմել կամ որոնք կարող են որոշակի աջակցություն ցուցաբերել: Ըստ այցելուների ցանկության՝ նրանք ուղեկցում են այցելուներին այդ հաստատություններից մի քանիսը, օրինակ՝ ոստիկանություն կամ դատարան: Արդյունքում կանանց ապաստարանները սերտորեն և շարունակաբար համագործակցում են այլ կառույցների հետ: Ուստի խորհուրդ է տրվում մշակել համագործակցության ու ցանցեր ստեղծելու ռազմավարությունները ժամանակին, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք արդեն առկա լինեն:

11.1 ԿԱՆԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԴԵՐՈՑ ՑԱՆՑԵՐ ԱՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Կանանց ապաստարանների միջև ցանցերի ստեղծումն ու համագործակցությունը տեղի է ունենում երկու մակարդակում.



Մի կողմից, շատ կարևոր է կապեր հաստատել կանանց այլ ապաստարանների ու կանանց աջակցության ծառայությունների հետ, որոնք ակտիվ են ընտանեկան բռնության կանխարգելման բնագավառում: Նման աջակցության ծառայությունների թվում են կանանց խորհրդատվության կենտրոնները կամ կանանց թեժ գծերը տվյալ շրջանում կամ ողջ երկրում: Բռնության ենթարկված կանանց համար աջակցության ծառայությունների ցանցը հանդիսանում է ներքին աջակցության ու փոխանակման աղբյուր, ինչպես նաև ընդհանուր ձայն կանանց նկատմամբ բռնության դեմ արտաքին իմաստով: Այս խիստ թեմատիկ կոալիցիան կարող է ընդլայնվել ներառելով այլ կանանց ՀԿ-ների, որպեսզի ստեղծի կանանց իրավունքների համար համատեղ հարթակ:



Մյուս կողմից, միջկապակերպական համագործակցությունն անհրաժեշտ գործիք է աջակցելու բռնության ենթարկված կանանց ու նրանց երեխաներին և կանխելու ընտանեկան բռնությունն ընդհանուր առմամբ:

Կանանց ապաստարաններն իրենց գիտելիքներն ու փորձագիտությունն են փոխանցում համայնքային կամ կառավարության կողմից հիմնված ծառայություններում աշխատող մասնագետներին, օրինակ՝ սոցիալական ու առողջապահական ծառայությունների մասնագետներին, ոստիկանությանը, դատավորներին, դատախապներին, ուսուցիչներին և այլն:

Կարևոր է, որ ապաստարանները ներգրավված լինեն իրենց համայնքներում կրթական ու իրապեկման միջոցառումներում (թեև մասնագետների համար վերապատրաստման ծրագրեր անելը և նմանատիպ գործողությունները կառավարության պարտականությունն է: Ապաստարանները նույնպես կարող են նախաձեռնել նման միջոցառումներ:

Համագործակցության միջոցով ապաստարանի աշխատողները կարող են խթանել ընտանեկան բռնության ենթարկվածների իրավունքներն այդ ծառայություններում և համայնքներում:

Համագործակցությունն այլ կառույցների հետ կարող է դժվարին լինել: Պատճառների թվում կարող են լինելը հետևյալը.

- միմյանց աշխատանքից, նպատակներից և խնդիրներից անտեղյակությունը,
- ոլորտից (տարածքից) դուրս չմտածելու արգելքը,
- իշխող վարքագիծը,
- բացասական մրցակցությունը,
- ֆինանսական ռեսուրսների պակասը,
- խնդրահարույց վերաբերմունքը, կանխակալ վերաբերմունքը և վատ փորձառությունները:



ՀԱՎԵԼՅԱԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԿԱՐԻՔՆԵՐ ԵՎ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

12. ՀԱՎԵԼՅԱԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Կանանց նկատմամբ բռնության դեպքերում աջակցությունն ու միջամտությունը պետք է իրենց մասշտաբով լինեն համալիր և չափվեն ըստ կնոջ ու իր երեխաների կոնկրետ դրության: Այն, ինչ անհրաժեշտ է, ձգնաժամային աջակցությունն է, որին հետևում են միջնաժամկետ ու երկարաժամկետ աջակցության ռազմավարությունները:

Կանանց ապաստարանները պետք է ինտեգրվեն կանխարգելիչ գործողությունների ու միջոցառումների համակարգի մեջ: Ստորև բերված հատվածը համառոտ նկարագրում է նման համակարգի ամենակարևոր կողմերը:



12.1 ՇՈՒՐՋՕՐՅԱ ԹԵՃ ԳԾԵՐ

Անվճար 24-ժամյա թեժ գիծը, որը տրամադրում է աջակցություն ու ձգնաժամային խորհրդատվություն ու ուղղորդում կանանց դեպի այլ ծառայություններ, խորհրդատվական կենտրոններ կամ ոստիկանություն, բռնությունից տուժած կանանց տրամադրվող աջակցության ծառայությունների էական մասն է կազմում: Թեժ գծով տրամադրվող աջակցությունը հաճախ առաջին քայլն է դեպի ավելի ապահով կյանք:

Ամեն երկրում պետք է աշխատի ամնվապն մեկ նման թեժ գիծ, որը հասանելի է ողջ երկրի տարածքում: Նման թեժ գծերը պետք է ֆինանսավորվեն կառավարությունների կողմից և աշխատեցվեն բռնության ենթարկված անձանց խորհրդատվության ու աջակցության երկարամյա փորձ ունեցող կանանց ՀԿ-ների (կամ կառավարության) կողմից:

12.2 ՈՉ ԱՊԱՍՏԱՐԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բացի ապաստարաններից՝ բռնության ենթարկված կանայք պետք է հնարավորություն ունենան դիմելու ոչ ապաստարանային խորհրդատվական ծառայությունների: Շատ կանայք կարիք ունեն խորհրդատվության ու աջակցության, բայց (դեռևս) ցանկություն չունեն ապաստարան տեղափոխվել: Ուստի պետք է լինի խորհրդատվական կենտրոնների համարժեք ցանց: Խիստ տրավմայի ենթարկված կանանց ու երեխաների համար անհրաժեշտ են հավելյալ ծառայություններ, օրինակ՝ տրավմայի կենտրոններ, որտեղ նրանք կկարողանան որոշ ժամանակով հանգստանալ: Տրավմայի կենտրոնները պետք է տրամադրեն խորհրդատվություն, երեխայի հսկողություն, սնունդ, բուժօգնություն և ձգնաժամային աջակցություն: Շատ երկրներում նման կենտրոններ դեռևս չկան:



12.3 ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱ

Բռնության ենթարկված կանանց պետք է հասանելի լինի երկարաժամկետ աջակցություն: Երբեմն նման աջակցությունը կարող է շարունակվել մեկ տարի կամ ավելին: Ըստ Հերմանի («Տրավմա և վերականգնում») տրավման հնարավոր է ամոքել միայն այն ժամանակ, երբ

կինն ունի ապահովության զգացողություն: Բռնարար հարաբերությունից հեռանալուց հետո կինը կարող է ապրել հոգեկան ձգնաժամեր ու դեպրեսիա: Կարևոր է, որ նման կանանց համար երկարատև հոգեթերապիան հասանելի լինի անվճար:

12.4 ԲՈՆԱՐԱՐ ՀԱՅՐԵՐԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՅՅԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԵՐԺՈՒՄ

Հատկապես բաժանման փուլում երեխաները բռնության ենթարկվելու բարձր ռիսկի մեջ են գտնվում: Անգլիայում անցկացված մի հետազոտության համաձայն՝ (Hester 1998) երեխաները կարող են տարբեր տեսակի բռնության ենթարկվել, երբ նրանց հայրն օգտվում է նրանց այցելելու իր իրավունքից: Տղամարդիկ կարող են իրենց կանանցից վրեժ լուծել՝ երեխաների նկատմամբ բռնություն գործադրելով:

Երբ բռնարար հայրը վնաս է հասցնում երեխաներին, նա այդպիսով զրկում է իրեն հոր դերից: Նախքան նա կօգտվի խնամակալության և այցելության իր իրավունքներից, նա պարտավոր է դադարեցնել բռնարար վարքագիծը, առերեսվել փաստի հետ, որ ինքը բռնության հետ կապված խնդիրներ ունի (օրինակ, այցելելով բռնության հաղթահարման դասընթացների), և դանդաղորեն ու առանց ճնշման աշխատել, որ երեխաները գտնեն կամ վերագտնեն իր նկատմամբ վստահությունը: Միայն երբ բռնությունը դադարեցված կլինի և հայրը աշխատելիս կլինի իր խնդրի վրա, այն ժամանակ կարող են նրա շփումները երեխաների հետ աստիճանաբար վերականգնվել, իհարկե եթե երեխաները ցանկանում են նրան տեսնել:

Հայաստանում մենք հաճախ տեսնում ենք, որ երեխաներին, հատկապես՝ նախընտրելով երեխաների մեջ տղաներին, առևանգում են, որպեսզի կնոջ նկատմամբ վերահսկողություն սահմանեն:



12.5 ՄԻԳՐԱՆՏ ԵՎ/ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆԱՅՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ

Ցավոք, Հայաստանում նման մասնագիտացված ծառայություններ գոյություն չունեն: Սակայն որքան հնարավոր է, գոյություն ունեցող ծառայությունները պետք է տրամադրեն նման խորհրդատվություն և իրավաբանական ծառայություններ: Փախստական կանանց նույնպես պետք է հասանելի լինի խորհրդատվությունն ու հոգեթերապիան իրենց մայրենի լեզվով կամ իրենց լավագույնս հասկանալի այլ լեզուներով:

12.6 ՄԻՋԱՆԶՆԱՅԻՆ ՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱՅԻ ՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՆՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՆԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բռնարար հարաբերության խնդիրը լուծելիս միջանձնային ու ընտանեկան հոգեթերապիան ու միջնորդությունը աննպատակահարմար մոտեցումներ են, քանի որ դրանք շատ քիչ ուշադրություն են դարձնում զոհին սպառնացող վտանգին և բռնարարի ու զոհի միջև ուժային անհավասարակշռությանը: Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը խնդիր է, որ տեղի է ունենում հարաբերության ներսում, այլ ծագում է նրանից, որ անձը բռնություն է կիրառում: Ուստի կարևոր է աշխատանք տանել բռնարարի հետ, որպեսզի նա դադարեցնի բռնարար վարքագիծը (տե՛ս ստորև):

12.7 ԱՇԽԱՏԱՆՔ ԲՈՒՆԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Բռնությունը դադարեցնելու համար անհրաժեշտ է աշխատանք տանել բռնարարի հետ: Բռնարարների հետ աշխատելու ծրագրերը միջամտության ձևերից մեկն են, դրանք պետք է ինտեգրվեն ընդհանուր միջամտության սխեմայում և զուգակցվեն բռնության ենթարկված իրավաբանական պաշտպանությամբ ու աջակցությամբ (Gondolf 2001, in Logar/ Rösemann/ Zürcher 2002):

Բռնարարների հետ տարվող ծրագրերում առաջնահերթ են բռնության ենթարկվածի կարիքներն ու ապահովությունը, դրանք պետք է սերտորեն համագործակցեն կանանց աջակցության ծառայությունների հետ: **Ցավոք, Հայաստանում (այս հրապարակումը գրելու պահին) բռնության ենթարկվածին պաշտպանող որևէ օրենսդրություն չկա, չկան նաև բռնարարների հետ աշխատանքի պարտադիր ծրագրեր, ավելին՝ նրանց հետ աշխատող կենտրոններ:**



13. ԿԱՆԱՆՑ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ ԱՊՐԱԾ ԿԱՆԱՆՑ ԿԱՐԾԻՔՆԵՐՆ ՈՒ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

- ՎԱՐԴԻԹԵՐ:** «Երբ երեխաների հետ եկա ապաստարան, շփոթված էի ու շատ վախեցած: Կարծում էի՝ պիտի ապրեմ մի հանրակացարանում, որտեղ ո՛չ ջեռուցում կա, ո՛չ լոգարան, բայց շատ էի ուզում նրանից հեռու լինել, այնքան վախեցած էի: Մեծ հանգստություն էր տեսնել ջերմ, ողջունող գեղեցիկ տուն՝ ամեն հարմարությունով: Երեխաները սկսեցին խաղալիքներով խաղալ, ես էլ՝ թեթևացա»:
- ՄԵԼԱՆԻԱ:** «Չէի կարծում, որ կարող եմ ապրել անձանոթ այլ կանանց հետ ու նրանց հետ ննջասենյակ կիսել: Բայց կամաց-կամաց մենք շատ մտերմացանք: Ես լսում էի իրենց պատմությունները, նրանք լսում էին իմ պատմությունը, կարծես ընտանիք լինեինք»:
- ՄԱՐԻԱՄ:** «Անտրամադիր էի, որ չեմ կարող բջջային հեռախոս օգտագործել, սակայն հասկանում էի, որ անվտանգության խնդիրներ կան, իսկ անձնակազմն այնքան բարեհամբույր ու համբերատար ձևով էր ինձ ամեն ինչ բացատրում: Զգում էի՝ կարծես մի համայնքի մաս լինեմ»:
- ԱՆՆԱ:** «Շատ էի անհանգստանում երեխաների համար կհարմարվե՞ն նոր տեղանքին, կսնվե՞ն լավ, կկարողանա՞ն դպրոց գնալ, կկարողանա՞ն նրանց համար ապրուստ վաստակել այնքան հարցեր էին պտտվում գլխումս: Բայց ես աշխատեցի սոցիալական աշխատողի հետ, նպատակներ դրեցի ու միասին մենք հասանք դրանց: Ամեն ինչ կատարյալ ու հեշտ չէ, բայց առնվազն հիմա ես ավատված եմ այդ սարսափելի բռնությունից ու բեռից: Երեք ամիս անց ես կարողացա իրերն ավելի պարզորոշ տեսնել ու հավատալ ինքս ինձ, որ կարող եմ լավ լինել առանց բռնարար ամուսնու»:
- ԱԼԼԱ:** «Երբեմն ապաստարանում դժվար էր լինում: Մտածում էի՝ արդյո՞ք ճիշտ որոշում եմ արել, բայց ռիսկ չէի անում վերադառնալ: Շատ գիշերներ եմ արթուն անցկացրել, երեխաներն ապաստարանում շատ էին աղմկում: Հիշում եմ, թե ոնց էի պարզապես ուզում մենակ լինել ու հուսալ, որ այդ ամենը պարզապես վատ երազ է: Այնքան անհույս էի: Հիմա շատ բան տարբեր է... Մտածում եմ իմ ապագայի մասին ու զգում եմ, որ ավելի շատ ուժ ունեմ: Անձնակազմը շատ բարեհամբույր է ու աջակցող, իրենք ինձ ստիպեցին գիտակցել, որ ես ուժեղ եմ: Կարծում եմ, ես այդպիսին եմ»:

Բռնության ենթարկված կանանց համար նախատեսված անանուն հարցաթերթիկներն օգնում են գնահատել գործող պրակտիկաներն ու ավելի լավ ծառայել ապաստարանի կանանց և նրանց կարծիքի միջոցով գնահատել ապաստարանի ծառայությունների արդյունավետությունը: Հարցաշարի օրինակներ կարելի է գտնել Կանանց աջակցման կենտրոնում հայերեն լեզվով:

Բռնության ենթարկվածների վերաբերյալ տվյալների շտեմարանում հավաքագրված վիճակագրությունը մեկ այլ անհրաժեշտ գործիք է, որի միջոցով գնահատվում են ծառայությունները, ինչպես նաև արձանագրվում հետագա աշխատանքն ու հավելյալ վիճակագրության հավաքագրումը: Կանանց աջակցման կենտրոնում վիճակագրական նպատակներով պահպանում է անանուն տվյալների շտեմարան, իսկ դասակարգումները կարող են ձևով լինել՝ կախված նրանից, թե ինչ տվյալ է անհրաժեշտ հավաքագրել: Կենտրոնը ծառայությունը մատուցելուց 6 ամիս և 1 տարի հետո կատարում է ստուգող վանգեր և հավաքագրում թարմացված տվյալներ:

Գնահատումը կարող է պարունակել կապմակերպության տրամադրած ծառայությունների, գործառնական քաղաքականության, միջոցառումների ու ակդեցության վերլուծություն: Ակդեցությունը հաճախ դժվար է լինում գնահատել, սակայն գնահատման դժվարությունները չպետք է չափազանցվեն: Ակդեցությունը դրսևորվում է ծառայությունից օգտվողի կյանքում ակնհայտ փոփոխություններով, որոնք ծառայության արդյունք են: Առանցքային է գնահատման չափանիշների ու ցուցանիշների ձևակերպումը, չափումը և տեղեկացված գնահատումը: Չափանիշները կարող են, օրինակ, հիմնված լինել այցելուի կարիքների, գործողությունների ու միջոցառումների նպատակների, իրագործողի նպատակների, պրոֆեսիոնալության ստանդարտների, ընթացիկ պրակտիկաների ու նորմերի, օրենքի, էթիկական արժեքների, հանգամանքի կամ արժեքի վրա:

Գնահատման իրականացումը բխում է կարիքներից ու սկզբունքներից: Ծառայությունների ոլորտում գործողություններում ներգրավված գլխավոր անձինք այցելուներն են, ում կարիքները պետք է վճռորոշ լինեն գնահատման հարցում: Գնահատումը կարող է նշանակել, որ մասնակիցներին տրվում է ձայն ու տարածություն: Ջորացման գնահատման մեջ, որը շեշտադրում է ծառայությունից օգտվողների ներառումը, նրանք դառնում են գնահատման գլխավոր իրականացողները, ինչպես նաև գնահատման թիրախների ու չափանիշների սահմանողները: Ջորացման գնահատումն օգնում է գործողություններից օգտվողներին մասնակցել ու սովորել, այն նաև մեծացնում է անկախության նրանց տարածությունը: Գնահատման նպատակն է բարձրացնել անհատի կարողությունը ուղղորդելու իր կյանքի կուրսը:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Amnesty International USA, *End Domestic Violence. End Torture. A Fact Sheet on Domestic Violence as Torture*, 2003, <http://www.amnestyusa.org/stopviolence/factsheets/humanrights.html>, 2004-09-21
- **Appelt, Birgit / Höllriegl, Angelika / Logar, Rosa, *Gewalt gegen Frauen und ihre Kinder*, in: Bundesministerium für Soziale Sicherheit und Generationen (Ed.), *Gewalt in der Familie. Gewaltbericht 2001. Von der Enttabuisierung zur Professionalisierung*, Vienna 2001, p. 377 – 502**
- Arnkil, Tom Erik / Eriksson, Esa / Arnkil, Robert, *Themes from Finland. Anticipation dialogues*, in: *Themes 3/1999*. National Research and Development Center for Welfare and Health (STAKES), Helsinki 1999
- Association of Women Against Violence – ARTEMIS, *Ghid de lucru pentru intervenție în violența domestică*, Romania 2001, contact: www.artemis.com.ro
- Austin, Juliet / Dankwort, Juergen, *A Review of Standards for Batterer Intervention Programs*. Violence Against Women Online Resources 1998, <http://www.vaw.umn.edu/vawnet/standard.htm>, 2004-09-20
- Baeriswyl, Pascale / Büchler, Andrea / Gloor, Daniela / Meier, Hanna, *Interventionsprojekte gegen Gewalt in Ehe und Partnerschaft*. Grundlagen und Evaluation zum Pilotprojekt Halt – Gewalt, Bern, Stuttgart, Wien 2002
- Bowker, Lee H. / Arbitell, Michelle / McFerron, Richard J., *On the Relationship Between Wife Beating and Child Abuse*, in: Yllö, K. / Bograd, M. (Eds.), *Feminist Perspectives on Wife Abuse*. Newbury Park, London, New Delhi 1989
- Brückner, Margrit, *Wege aus der Gewalt gegen Frauen und Mädchen*. Eine Einführung, Frankfurt am Main 1998
- **Bunch, Charlotte / Reilly, Niamh, *Demanding Accountability. The Global Campaign and Vienna Tribunal for Women's Rights*, New York 1994**
- Bundesministerium für Soziale Sicherheit und Generationen (Ed.), *Gewalt in der Familie. Gewaltbericht 2001. Von der Enttabuisierung zur Professionalisierung*, Vienna 2001
- Burton, S. / Regan, L. / Kelly, L., *Domestic Violence: Supporting Women and Challenging Men. Lessons from the Domestic Violence Intervention Project*, The Policy Press, Bristol 1998
- Campbell, J. C. (Ed.), *Assessing dangerousness: Violence by sexual offenders, batterers, and child abusers*, Thousand Oaks, London, New Delhi 1995
- Chatzifotou, Sevaste, *Keeping Domestic Violence in Silence: The Case of Greece*, Selected Proceedings from the International Conference on Family Violence: A Plan for Action, Nicosia, Cyprus, April 2000, p. 113-121
- Chatzifotou, Sevaste, *Towards an International Approach for the Measurement of Violence Against Women: The Case of International Violence Against Women Survey*, Proceedings from the Expert meeting on Combating Family Violence Against Women and Trafficking of Women, under the auspices of the EU Greek Presidency, Athens, May, 30-31, 2003
- Chatzifotou, Sevaste, *Violence Against Women and Institutional Responses: The Case of Greece*, European Journal of Social Work, Vol. 6, No 3, 2003, p. 242-256
- **Chatzifotou, S. / Dobash, R., *Marital Violence Against Women in Greece. Seeking Informal Support. Special Issue, Global Examples of Violence Against Women*, in: *Violence Against Women*, Vol. 7, No. 9, Sage, London 2001, p. 1024-1050**
- Commission for Equality and Women's Rights (Ed.), *Violencia contra as mulheres*, Caderbis Condicao Feminina N 48, Lissabon 1997
- **Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women (CEDAW), adopted by the United Nations, General Assembly Resolution 34/80 of 18 December 1979**
- Council Framework Decision of 15 March 2001 on the standing of victims in criminal proceedings (2001/220/JHA)
- **Council of Europe / Group of Specialists for Combating Violence against Women (EG-S-VL): *Final Report of Activities of the EG-S-VL including a Plan of Action for combating violence against women*, Strasbourg, June 1997**
- **Council of Europe, Recommendation No. 4 on violence in the family, Strasbourg 1979**
- **Council of Europe, Recommendation No. R 11 on the position of the victim within the framework of criminal law and procedure Strasbourg 1985**
- **Council of Europe, Recommendation No. R 21 on assistance to victims and the prevention of victimisation, Strasbourg 1987**
- **Council of Europe, Recommendation No. R 2 on social measures concerning violence within the family, Strasbourg 1990**
- **Council of Europe, Recommendation No. R 11 on action against trafficking in human beings for the purpose of sexual exploitation, Strasbourg 2000**
- Council of Europe, *The Protection of Women from Violence*, Recommendation Rec(2002)5 of the Committee of Ministers to member States on the protection of women against violence adopted on 30 April 2002 and Explanatory Memorandum, 2002

- Crawford, M. / Gartner, R., *Woman Killing. Intimate femicide in Ontario 1974 – 1990*. Report for the Women We Honor Action Committee, Ontario 1992
- **Dearing, Albin/Förg, Elisabeth, *Police combating violence against women: Documentation of the conference of experts*. Verlag Österreich, Vienna 1999**
- **Dearing, Albin / Haller, Birgitt, *Das österreichische Gewaltschutzgesetz*, Vienna 2000**
- Dobash, R.E. / Dobash, R.P., *Women, violence and social change*, London 1992
- **Dobash, R.E. / Dobash, R.P. (Eds.), *Rethinking Violence Against Women*, Sage, London 1998**
- Dobash, R.E. / Dobash, R.P. / Cavanagh, Kate / Lewis, Ruth, *Changing Violent Men*, Thousand Oaks, London, New Delhi 2000
- **Du Bois, Susanne / Hartmann, Petra, *Neue Fortbildungsmaterialien für Mitarbeiterinnen im Frauenhaus. Zwischen Frauensolidarität und Überforderung*. Kohlhammer, Stuttgart, Berlin, Köln 2000**
- European Parliament, Doc. A2-44/86, OJ. C. 176, 14 July 86, p. 73-83
- **European Parliament - Committee on Women's Rights, *Report on the need to establish a European Union wide campaign for zero tolerance of violence against women*, 16 July 1997**
- **European Women's Lobby, Brussels 2000, <http://www.womenlobby.org>**
- Farmer, A. / Tiefenthaler, J., *An Economic Analysis of Domestic Violence. Review of Social Economy*, LV 3, 1997, p. 337 – 358
- Forsberg, Hannele, *Lapsen näkökulmaa tavoittamassa. Arviointitutkimus turvakotien lapsikeskeisyyttä kehittävästä projektista*, (Title in English: „Catching the viewpoint of a child. An Evaluation Study of the Project on how to Develop Refuges' Work with Children“), Helsinki 2000
- **Frauenbüro der Stadt Wien: *Leitfaden zum Fakultativprotokoll der UN-Konvention zur Beseitigung jeder Form der Diskriminierung der Frau*, Vienna 2001**
- Galtung, Johan, *Strukturelle Gewalt. Beiträge zur Friedens- und Konfliktforschung*, Reinbek bei Hamburg 1975
- **Galtung, Johan, *Gewalt, Frieden und Friedensforschung*, in: Dieter Senghaas (Ed.): *Kritische Friedensforschung*, Frankfurt am Main 1971, p. 55 – 104**
- Gislason, Ingolfur, *Violence against women in Iceland*, Office for Gender Equality, Iceland 1997
- Gloor D. / Meier H. / Verwey M., *Frauenalltag und soziale Sicherheit. Schweizer Frauenhäuser und die Situation von Frauen nach einem Aufenthalt*, Zürich 1995
- **Gloor, D. / Meier, H. / Baeriswyl, P. / Büchler, A., *Interventionsprojekte gegen Gewalt in Ehe und Partnerschaft. Grundlagen und Evaluation zum Pilotprojekt Halt-Gewalt*, Bern, Stuttgart, Wien 2000**
- **Godenzi, Alberto / Yodanis, Carrie, *Erster Bericht zu den ökonomischen Kosten der Gewalt gegen Frauen*, Universität Freiburg, Schweiz 1998**
- **Gondolf, W. Edward: *Batterer Intervention Systems. Issues, Outcomes and Recommendations*. Thousand Oaks, London, New Delhi 2001**
- **Graham, Dee L. / Rawlings, Edna I. / Rigsby, Roberta K., *Loving to Survive. Sexual Terror, Men's Violence and Women's Lives*, New York, London 1998**
- Hagemann-White, Carol / Kavemann, Barbara / Ohl, Dagmar, *Parteilichkeit und Solidarität. Praxiserfahrungen und Streitfragen zu Gewalt im Geschlechterverhältnis*, Bielefeld 1997
- Hagemann-White, Carol, *Violence without end? Some reflections on achievements, contradictions, and perspectives on the feminist movement in Germany*, in: Klein, Renate (Ed.): *Multidisciplinary Perspectives on Family Violence*, London 1998
- Hague, G. / Kelly L. / Malos, E. / Mullender, A./ Debonnaire, T., *Children, Domestic Violence and Refuges. A Study of needs and responses*, WAFE 1996
- Hamby, L. Sherry, *Partner Violence: Prevention and Intervention*, in: Jasinski, L. Jana / Williams, M. Linda (Eds.), *Partner Violence. A Comprehensive Review of 20 Years of Research*, Thousand Oaks, London, New Delhi 1998
- **Hanetseder, Ch., *Frauenhaus: Sprungbrett zur Freiheit?*, Bern, Stuttgart, Wien 1992**
- Hanmer, Jalna, *Women and violence: Commonalities and diversities*, in: Fawcett, B. / Fetherstone, B. / Hearn, J. / Toft, C. (Eds.), *Violence and gender relations: Theories and interventions*, Thousand Oaks, London, New Delhi 1996, p. 7 - 21
- **Heiliger, Anita, *Männergewalt gegen Frauen beenden. Strategien und Handlungsansätze am Beispiel der Münchner Kampagne gegen Männergewalt an Frauen und Mädchen/Jungen*, Opladen 2000**
- **Heise, Lori L., *The Hidden Health Burden*. World Bank Discussion Papers, Washington 1995**
- **Heiskanen, Markku / Piispa, Minna, *Faith, Hope, Battering. A Survey of Men's Violence against Women in Finland*, Statistics Finland, Helsinki 1998**
- **Herman, J. L., *Trauma and Recovery*. HarperCollins 1992**

- Hester, Marianne / Radford, Lorraine, *Domestic Violence and Child Contact Arrangements in England and Denmark*, The Policy Press, Bristol 1996
- **Hester, Marianne / Pearson, Chris, *From Periphery to Centre: Domestic violence in Work with Abused Children*, The Policy Press, Bristol 1998**
- **Hester, Marianne / Pearson, Chris / Harwin, Nicola, *Making an Impact: Children and Domestic Violence. A Reader*. Jessica Kingsley Publishers, London 1998**
- Jaffe, P. G. / Wolfe, D. A. / Wilson, S. K., *Children of battered women*, Newbury Park 1990
- Jasinski, L. Jana / Williams, M. Linda, *Partner Violence. A Comprehensive Review of 20 Years of Research*, Thousand Oaks, London, New Delhi 1998
- Jaspard, Maryse / Brown, Elisabeth / Condon, Stéphanie, et al., *Les violences envers les femmes. Une enquête nationale*, Paris 2003
- **Kavemann, Barbara / Leopold, Beate / Schirmacher, Gesa, *Modelle der Kooperation gegen häusliche Gewalt. Wir sind ein Kooperationsmodell, kein Konfrontationsmodell. Ergebnisse der wissenschaftlichen Begleitung des Berliner Interventionsprojektes gegen häusliche Gewalt (BIG)*. Kohlhammer, Stuttgart, Berlin, Köln, 2001**
- **Keeler, Laura (Ed.), *Recommendations of the E.U. Expert Meeting on Violence Against Women 8 – 10 November 1999, Jyväskylä, Finland, Report of the Ministry of Social Affairs and Health 2000, Helsinki 2001. p 13***
- Kelly, Liz, *VIP Guide. Vision, innovation and professionalism in policing violence against women and children*, Produced for the Council of Europe Police and Human Rights Programme 1997 – 2000
- **K.E.T.H.I. (Centre for Research on Women's Issues in Greece), Athens 2003, www.kethi.gr, 2004-09-20**
- **Kirkwood, C., *Leaving Abusive Partners: From the Scars of Survival to the Wisdom for Change*, Sage, London 1993**
- Klein, Renate (Ed.), *Multidisciplinary Perspectives on Family Violence*, London 1998
- Kofman, Eleonore / Phizacklea, Annie / Parvati, Raghuram / Sales, Rosemary, *Gender and International Migration in Europe. Employment, Welfare and Politics*, London, New York 2000
- **Korf, Dick, *Economic Costs of Domestic Violence against Women*, Utrecht 1997**
- **L.O.K.K. (National Organization of Shelters and Crisis Centers for Battered Women and Children), *A Summary of LOKK Statistics*. Denmark 2001, <http://www.lokk.dk/engelsk/index.htm>, 2004-09-20**
- Lahti, Minna, *Domesticated Violence. The Power Of The Ordinary*, in: *Everyday Finland*, University of Helsinki - Faculty on Arts. Institute for Cultural Research, Helsinki 2001
- **Logar, Rosa/ Rösemann, Ute/ Zürcher, Urs (Hg.), *Gewalttätige Männer verändern (sich), Rahmenbedingungen und Handbuch für ein soziales Trainingsprogramm*. Bern, Stuttgart, Wien 2002a**
- **Logar, Rosa, *Gewalt, die Frauen süchtig macht? Annäherung aus zwei Perspektiven. Die Perspektive der Gewaltschutzeinrichtung*. in: *HeXenhaus Espelkamp, EU Daphne Projekt Sucht als Über-Lebenschance für Frauen mit Gewalterfahrungen / Addiction as Chance of Survival for Women with Experience of Violence. Final Report 2002b, p. 30 – 57***
- Logar, Rosa, *Proposed Measures to Preserve the Rights and Dignity of Survivors in Criminal Proceedings*. in: *Laura Keeler (Ed.), Recommendations of the E.U. Expert Meeting on Violence Against Women 8 – 10 November 1999, Jyväskylä/Finland, Report of the Ministry of Social Affairs and Health 2000, Helsinki 2001*
- London Borough of Greenwich Women's Equality Unit / Greenwich Asian Women's Centre / Greenwich Asian Women's Project, *Asian Women and Domestic Violence: Information for Advisers*. Kranti 1995, p.1-31
- Lundgren, Eva / Heimer, Gun / Westerstrand, Jenny / Kalliokoski, Anne-Marie, *Captured Queen. Men's violence against women in "equal" Sweden. A prevalence study*. The Crime Victim Compensation and Support Authority, Sweden 2001
- **Mahoney, M.R., *Victimization or Oppression? Women's Lives, Violence, and Agency*, in: *Fineman, M.A. / Mykitiuk, R., The Public Nature of Private Violence: The Discovery of Domestic Abuse*. London, Routledge 1994, p. 59-92**
- **McWilliams, M./ McKiernan M., *Bringing it out in the Open: Domestic Violence in Northern Ireland*. HMSO, Belfast 1983**
- **Mirrlees-Black, C., *Estimating the Extent of Domestic Violence, Findings from the 1992 BCS*. Home Office Research Bulletin No. 37, 1995**
- Mooney, Jayne, *Gender, Violence and the Social Order*. London 2000
- Mullender, Audrey, *Rethinking Domestic Violence – The Social Work and Probation Response*. London 1996
- **Mullender, Audrey / Debbonaire, Thangam, *Child Protection and Domestic Violence. A Practitioner's Guide*. Venture Press, Birmingham 2000**
- **Mullender, Audrey, *Children's Perspective on Domestic Violence*. Sage, Thousand Oaks, London, New Delhi 2003**
- Nyqvist, Leo, *Väkivaltainen parisuhde, asiakkuus ja muutos (In English: Violent Partnership, Clienthood and Change)*. Academic Dissertation, Helsinki 2001

- O'Connor, Monica/ Wilson, Niamh, *Vision, Action, Change. Feminist principles and practice of working on violence against women. Women's Aid Model of Work.* www.womensaid.ie/pages/what/research/docs/vac.pdf, 2004-05-12
- Pehkonen, Pirjo, *Naisen puolesta, ei miestä vastaan. Suomalainen naisliike väkivaltaa vastustamassa*, (in English: *On Behalf of Women, not Against Men. Finnish Women's Movement Combating Violence against Women*). Joensuu 2003
- Peled E. / Davis D., *Group work with Children of Battered Women. A Practitioner's Manual.* Thousand Oaks/London/New Delhi 1995
- Peled E. / Jaffe P. G. / Edleson J. L., *Ending the Cycle of Violence. Community Response to Children of Battered Women.* Thousand Oaks, London, New Delhi 1995, p. 121-144
- Pence, Ellen/ Paymar, M., *Educational Groups for Men who Batter. The Duluth Model.* New York 1993
- Pence, Ellen, *Moving women's safety from margins to the centre of institutional response, in: Northern Ireland Women's Aid Federation: Prevention Protection Provision. Effective Intervention in Domestic Violence.* Report on a conference held on 11 and 12 of June 1997. Belfast 1997
- Ramberg, Ingrid, *Violence Against Young Women in Europe. Seminar Report. European Youth Centre. 21-27 May 2001, Council of Europe 2001*
- Rautava, Marie / Perttu, Sirkka (Eds.), *Tavoitteena uhrin turvallisuus – näkökulmia naisiin kohdistuvan väkivallan ehkäisyyn*, (in English: *To Ensure the Safety of the Victims – Viewpoints on how to Prevent Violence against Women*). Helsinki 2001
- **Sauer, Birgit, *Geschlechtsspezifische GewaltmäÙigkeit rechtstaatlicher Arrangements und wohlfahrtsstaatlicher Institutionalisierung*, in: Dackweiler, Regina-Maria / Schäfer, Reinhild, *Gewalt-Verhältnisse. Feministische Perspektiven auf Geschlecht und Gewalt.* Frankfurt am Main 2002, p. 81 – 106**
- Seith, Corinna / Kelly, Liz, *Achievements Against the Grain: Self-defence for Women and Girls in Europe.* Child and Women Abuse Studies Unit, London Metropolitan University, London 2003
- **Sellach, Brigitte, *Qualitätssicherung im Frauenhaus, in: Schriftenreihe des Bundesministeriums für Familie, Senioren, Frauen und Jugend, Neue Fortbildungsmaterialien für Mitarbeiterinnen im Frauenhaus. Grundlagen des Managements im Frauenhaus. Band 191.4, Verlag Kohlhammer, Stuttgart 2000***
- Shepard, Melanie F. / Pence, Ellen L. (Eds.), *Coordinating Community Response to Domestic Violence – Lessons from Duluth and Beyond.* Thousand Oaks, London, New Delhi 1999

- **Stanko, E. / Crisp, D. / Hale, C. /Lucraft, H., *Counting the Costs: Estimating the Impact of Domestic Violence in the London Borough of Hackney.* Swindon: Crime Concern 1997**
- Stanko, Elisabeth, *Everyday Violence.* London 1990
- **Strube, M.J. / Barbour, L.S., *The Decision to Leave an Abusive Relationship: Economic Dependence and Psychological Commitment*, in: *Journal of Marriage and the Family*, Vol. 45, 1983, p.785-793**
- Taylor-Browne, Julie (Ed.), *What Works in Reducing Domestic Violence?*, London 2001
- **The Lancet, *Domestic Violence*, Vol. 9, N.14, 2000**
- **UNICEF, <http://www.unicef.org>, 2001**
- **United Nations / General Assembly Resolutions, *Resolution on crime prevention and criminal justice measures to eliminate violence against women. Resolution 52 / 86.* New York, December 12, 1997**
- United Nations Commission on Human Rights, *Resolution on the Elimination of Violence against Women.* Commission on Human Rights 52nd meeting, Geneva, April 17, 1998
- **United Nations Office for Drug Control and Crime Prevention – Center for International Crime Prevention, *Guide for Policy Makers on the Implementation of the United Nations Declaration of Basic Principles of Justice for Victims of Crime and Abuse of Power.* New York 1999a**
- **United Nations Office for Drug Control and Crime Prevention – Center for International Crime Prevention, *Handbook on Justice for Victims On the use an application of the Declaration of Basic Principles of Justice for Victims of Crime and Abuse of Power.* New York 1999b**
- **United Nations, *Strategies for confronting domestic violence: a resource manual.* United Nations 1993c**
- United Nations Commission on Human Rights, Report of the Special Rapporteur on violence against women, its causes and consequences, Ms. Radhika Coomaraswamy, submitted in accordance with the Commission on Human Rights resolution 1995/85. A framework for model legislation on domestic violence. (E/CN.4/1996/53Add.2), Geneva 1996
- United Nations General Assembly Resolutions, Resolution on Crime Prevention and Criminal Justice Measures to Eliminate Violence against Women, Resolution 52/86. New York, December 12, 1997
- **United Nations, *Declaration on the elimination of violence against women.* New York, December 1993b**

- **United Nations, *The Beijing Declaration and the Platform for Action, Fourth World Conference on Women, Beijing, 4-15 September 1995.* New York 1996**
- United Nations, *UN Declaration of Basic Principles of Justice for Victims of Crime and Abuse of Power.* New York 1985
- **United Nations, *Vienna Declaration, UN Document A/CONF.157/DC/1/Add.1.* Vienna 1993a**
- **Urquiza, A. / Winn, C., *Treatment for Abused and Neglected Children: Infancy to Age 18.* US Department for Health and Human Services 1994**
- WAFE / Turner, Atuki (Eds.), *Building Blocks- A women's Aid guide to running refuges and support services.* 1996
- WAFE, *Funding refuge services. A study of refuge support services for women and children experiencing Domestic Violence,* 1994
- **WAFE, *Briefing from the Women's Aid Federation of England. Domestic Violence: Funding for Refuges and Ancillary Support Services.* February 1998**
- Walby, Sylvia / Myhill, Andrew, *Assessing and managing the risk of domestic violence,* in: Taylor-Browne, Julie (Ed.), *What Works in Reducing Domestic Violence?* London 2001, p. 309 – 335
- Walby. S. / Allen, J., *Domestic violence, sexual assault and stalking. Findings from the British Crime Survey.* Home Office Research Study, London 2004
- **Waltz, Catherine / Derry, Chuck, *Duluth's model of creating co- operation. Seminar Report, Helsinki 1999***
- WAVE Office / European Information Centre Against Violence Against Women, *More than a roof over your head. A Survey of Quality Standards in European Women's Refuges.* Vienna 2002
- **WAVE Office, *Training Programme on Combating Violence against Women, Vienna 2000***
- WAVE Office, *European Database on Violence against Women.*
[http:// www.wave-network.org](http://www.wave-network.org)
- WHO, *Report on Violence and Health,* Geneva 2002
- WHO, *The economic dimension of interpersonal violence,* Geneva 2004

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՎՏԱՆԳԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նշել այն կետերը, որոնք համապատասխանում են Ձեր իրավիճակին:

- _____ 1. Ֆիզիկական բռնության հաճախականությունը կամ սրությունը անցաց մեկ տարվա ընթացքում ավելացել է:
- _____ 2. Նա պենք ունի:
- _____ 3. Անցաց մեկ տարվա ընթացքում հեռացել եք նրանից (նրա հետ միասնական բնակվելուց):
3ա. Եթե երբևիցե նրա հետ չեք բնակվել, նշեք այստեղ _____
- _____ 4. Նա աշխատանք ունի:
- _____ 5. Նա երբևիցե պենք օգտագործել է Ձեր դեմ, կամ պենքով սպառնացել է Ձեզ:
(Եթե պենքը ատրճանակ էր, նշեք այստեղ _____)
- _____ 6. Նա Ձեզ սպանելու սպառնալիք արել է:
- _____ 7. Նա կարողացել է ընտանեկան բռնություն գործելու համար խուսափել ձեռքակալվելուց:
- _____ 8. Երեխա(ներ) ունե՞ք, որ իրենից չեն:
- _____ 9. Նա երբևիցե Ձեզ ստիպել է Ձեր կամքին հակառակ սեռական հարաբերություններ ունենալ իր հետ:
- _____ 10. Նա երբևիցե փորձել է Ձեզ խեղդել:
- _____ 11. Նա թմրադեղեր օգտագործում է:
- _____ 12. Նա հարբեցող է (ամեն օր կամ համարյա ամեն օր խմում է) կամ խմում է երբ խնդիրների առջև է կանգնած:
- _____ 13. Նա Ձեր առօրյա գործողությունները մեծ մասը կամ ամենը վերահսկում է: Օրինակ՝ ինքն է որոշում ում հետ պետք է ընկերություն անեք, երբ կարող եք Ձեր ընտանիքի անդամներին հանդիպել, ինչքան գումար կարող եք ծախսել և այլն: (Եթե նա այսպես է վարվում բայց դուք նրան չեք թույլատրում, նշեք այստեղ _____)
- _____ 14. Նա Ձեզ մշտապես (ագրեսիվորեն) խանդում է: (Օրինակ ասում է ,եթե ես քեզ չեմ կարող ունենալ, ոչ մեկ չի կարող ունենալե:)
- _____ 15. Նա Ձեզ հղի ժամանակ ծեծել է: (Եթե նրանից հղի չեք եղել, նշեք այստեղ _____)
- _____ 16. Նա երբևիցե սպառնացել է կամ փորձել է ինքնասպան լինել:
- _____ 17. Նա սպառնում է Ձեր երեխաներին վնաս տալ:
- _____ 18. Արդյո՞ք կարծում եք, որ նա իվիճակի է Ձեզ սպանել:
- _____ 19. Նա Ձեզ հետևում կամ հետապնդում է, սպառնացող հաղորդագրություններ կամ գրություններ թողնում է, Ձեր գույքը փչացնում է, կամ վանգում է երբ դուք չեք ցանկանում իր հետ խոսել:
- _____ 20. Դուք սպառնացել կամ փորձել եք ինքնասպան լինել:

_____ **Գրել նշվածների ընդհանուր թիվը:**



Թեժ գիծ՝ 099 - 887 - 808

wsc.armenia@gmail.com
www.womensupportcenter.org
 WomenSupportCenter